

Մասնագիտական խմբագիր՝ Նորա Սարգսյան, իրավաբանական գիտությունների թեկնածու
Հեղինակներ՝

Լուսինե Ալավերդյան, ի.գ.թ.
Նարինե Ալեքսանյան, ի.գ.թ. դոցենտ
Նարինե Ավագյան
Վարազդատ Տեր-Գևորգյան, ի.գ.թ.
Տիգրան Ղազարյան
Նորա Սարգսյան, ի.գ.թ.
Տարոն Միմոնյան, ի.գ.թ.

Գիրքը լույս է տեսնում «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) ֆինանսական աջակցությամբ: Այս հրատարակության մեջ առկա տեսակետները, եզրակացությունները և պարզաբանումները չպետք է ընկալվեն որպես «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) կարծիք:



Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում Հարավային Աֆրիկայի Դուրբանի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Մաքքվոդ-Մեյսոնին «Իրավունք բոլորի համար» ձեռնարկը կազմելիս մասնագիտական մեծ աջակցության համար: Ձեռնարկի մշակման հիմքում ընկած է Հարավային Աֆրիկայի իրավունք բոլորի համար 2004 թվականի համապատասխան ձեռնարկը:

Special thanks to Professor of Law at the University of KwaZulu-Natal, Durban, South Africa David McQuoid-Mason for his significant professional contribution to the preparation of the handbook. This handbook was drafted on the bases of "South African Street Law Manual, 2004.

Բովանդակություն

Նախաբան.....	6
ԳԼՈՒԽ 1. «ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
Ի՞նչ է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը.....	8
Ի՞նչ է տալիս «Իրավունք բոլորի համար» ծրագիրը.....	8
«Իրավունք բոլորի համար» ծրագրի պատմական արմատները.....	8
«Իրավունք բոլորի համար» ծրագրի դասավանդման մեթոդաբանությունը.....	9
Աշակերտների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի նպատակը և կառուցվածքը.....	9
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.....	10
Ի՞նչ է իրավունքը .իրավունք և հասարակական բարոյականության նորմեր.....	10
Նորմատիվ իրավական ակտերի համակարգը.....	12
Սահմանադրություն.....	12
Օրենքներ, ինչպե՞ս են դրանք ստեղծվում.....	13
Դատարանները և վեճերի լուծման արտադատական եղանակները.....	15
Առաջին աստիճանի դատարաններ.....	15
Վերաքննիչ դատարաններ.....	16
Վճռաբեկ դատարան.....	17
Սահմանադրական դատարան.....	17
Քրեական, քաղաքացիական և վարչական գործերի դատական քննության առանձնահատկությունները.....	19
Գործերի քննության փուլերը քաղաքացիական դատավարությունում.....	20
Վեճերի լուծման արտադատական եղանակները.....	23
Բանակցություններ.....	23
Միջնորդ-հաշտարարությունը.....	24
Արբիտրաժ.....	24
Փաստաբանությունը.....	25
Ո՞վ է փաստաբանը.....	25
Ինչպե՞ս ստանալ իրավաբանական օգնություն.....	26
Ինչպե՞ս գտնել փաստաբան. փաստաբան-վստահորդ հարաբերությունները.....	27
ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	30
Կյանքի իրավունք.....	30
Էֆթանագիան և կյանքի իրավունքը.....	31

Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելք	32
Անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք.....	35
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	37
Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիություն.....	39
Տեղեկատվություն ստանալու իրավունքը.....	41
Հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը.....	43
Կարծիքն ազատ արտահայտելու իրավունք	44
Խոսքի և տեղեկատվության ազատության սահմանները	46
Կրթության իրավունք.....	50
ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԻԺ	56
Հանցագործության հասկացությունը	56
Հանցագործության տեսակները	60
Անհրաժեշտ պաշտպանություն և ծայրահեղ անհրաժեշտություն	62
Ի՞նչ է նշանակում անհրաժեշտ պաշտպանություն	62
Ի՞նչ է նշանակում ծայրահեղ անհրաժեշտություն.....	64
Անմեղության կանխավարկած.....	67
Ձերբակալում	68
Կալանավորում	69
Գրավ	71
Խուզարկություն.....	73
Առգրավում.....	74
Քրեական գործերի քննությունը դատարանում	75
Անչափահասների մասնակցությամբ արդարադատության առանձնահատկությունները	77
Ինչպիսի՞ պատիժներ կարող են նշանակվել անչափահասների նկատմամբ	77
Անչափահասների մասնակցությամբ գործերի դատական քննության առանձնահատկությունները.....	79
ԳԼՈՒԽ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	80
Ընտանիք և ամուսնություն	80
Ո՞վ կարող է ամուսնանալ, ամուսնության իրականացման կարգը	81
Ամուսինների անձնական իրավունքները և պարտականությունները.....	83
Ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները	84

Ծնողների և զավակների միջև փոխհարաբերությունները.....	86
Խնամակալություն.....	86
Հոգաբարձություն.....	87
Ծնողների պատասխանատվությունը երեխաների կողմից պատճառված վնասի համար.....	88
Հոգ տանելու պարտականությունը.....	89
Երեխայից առանձին ապրող ծնողի և այլ ազգականների իրավունքները.....	90
Ծնողական իրավունքներից զրկելը.....	91
Որդեգրում (դստերագրում).....	92
Ամուսնալուծություն և ալիմենտային պարտավորություններ.....	94
Երեխայի խնամքը և երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը.....	96
ԳԼՈՒԽ 6. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	97
Ժառանգություն ըստ կտակի.....	97
Ժառանգություն ըստ օրենքի.....	98
Ժառանգությունն ընդունելն ու դրանից հրաժարվելը.....	99
Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելը.....	100
ԳԼՈՒԽ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	100
Աշխատանքի դիմելու և ընդունվելու կարգը.....	100
Հարցազրույց.....	101
Աշխատանքային պայմանագիր.....	102
Աշխատողի սոցիալական երաշխիքները, աշխատաժամանակ, հանգստի իրավունք.....	103
Աշխատողի սոցիալական երաշխիքները.....	103
Աշխատաժամանակ.....	104
Հանգստի իրավունք.....	104
Կարգապահական կանոններ.....	105
Կարգապահական նորմեր սահմանելու նպատակը.....	105
Կարգապահական տույժեր.....	106
Տեղեկատվության գաղտնիությունը աշխատանքային հարաբերություններում.....	107
Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը.....	108
Աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները.....	110
Աշխատանքային վեճերը և դրանց լուծման կարգը.....	110
ԳԼՈՒԽ 8. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ.....	112

Ուլքե՞ր են սպառողները	112
Շրջահայաց սպառողի վարքագիծը մրցակցային շուկայում	112
Առուվաճառքի պայմանագրով սպառողների շահերի պաշտպանությունը	113
Պայմանագրի հասկացությունը և կնքման կարգը	113
Առուվաճառքի պայմանագիր	115
Վարկային հարաբերություններում սպառողների շահերի պաշտպանությունը	117
Ինչ է վարկը	117
Վարկավորման պայմանագրի առանձնահատկությունները	118
Անբարեխիղճ գովազդ	119
ԳԼՈՒԽ 9. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	121
Ժողովրդի իշխանության իրականացման ձևերը	121
Ընտրությունների տեսակները և պարբերականությունը	121
Հանրաքվե	123
Ընտրելու իրավունք	124
Ընտրական ցուցակները	126
Քվեարկությունը	128
Ընտրվելու իրավունք	129

Նախաբան

Միբեյի՝ դասավանդողներ և աշակերտողներ,

«Իրավունք բոլորի համար» ծրագրի նպատակն է մարդկանց իրավական դաստիարակության միջոցով նպաստել Հայաստանում ժողովրդավարական և օրենքի գերակայությամբ առաջնորդվող հասարակության ձևավորմանը:

Իրավունքը ազդում է մարդկանց առօրյա գործունեության գրեթե բոլոր ասպեկտների վրա, որի պատճառով իրավունքի իմացությունը խիստ կարևոր է ժամանակակից հասարակության լիարժեք անդամ հանդես գալու համար:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը նախատեսված է այն մարդկանց համար, որոնք չեն տիրապետում մասնագիտական իրավական գիտելիքների և ուղղված են նրանց հանրամատչելի ձևով՝ օրինակների և պատմությունների հիման վրա իրավունք սովորեցնելուն: Ծրագրի առանցքային շահառուները դպրոցահասակ երեխաներն են: Սակայն ծրագիրը կարող է իրականացվել նաև ավագ սերնդի ներկայացուցիչների հետ՝ այնպիսի լսարաններում, որտեղ կարիք կա մարդկանց իրավական իրազեկման:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը իրագործվում է երկու ձեռնարկների միջոցով՝

1. «Իրավունք բոլորի համար». ձեռնարկ սովորողների համար
2. «Իրավունք բոլորի համար». ձեռնարկ դասավանդողների համար:

Վերոհիշյալ երկու ձեռնարկներում քննարկվում են յուրաքանչյուր քաղաքացու առօրյա գործունեության համար պիտանի և նրան հաճախ հանդիպող հետևյալ իրավական թեմաները.

1. Հայաստանի Հանրապետության իրավունքի հիմունքները
2. Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները
3. Քրեական իրավունքը
4. Ընտանեկան իրավունքը
5. Ժառանգական իրավունքը
6. Աշխատանքային իրավունքը
7. Սպառողների իրավունքը
8. Ընտրական իրավունքը:

Ձեռնարկներում գետեղված յուրաքանչյուր թեմա պարունակում է իրավունքի համապատասխան ոլորտում հիմնարար իրավական կարգավորումների ներկայացում, ապա՝ խնդիրներ, հարցեր, դերախաղերի և դատախաղերի առաջադրանքներ, որոնք նպաստում է նյութի յուրացմանը և մտապահելուն:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը հատկապես երիտասարդ սերնդի շրջանում նպաստում է՝

- իրավական գիտելիքների և իրավական իրազեկվածության բարձրացմանը,
- իրենց իրավունքների վերաբերյալ քաջատեղյակ սերնդի ձևավորմանը, որն ի վիճակի կլինի աջակցել Հայաստանում ժողովրդավարական հասարակության զարգացմանը,
- հիմնարար իրավունքների և ազատությունների վերաբերյալ գիտելիքի խորացմանը:

Լիահույս ենք, որ այս ձեռնարկները Ձեզ կպարզեն դասավանդման և ուսուցանելու հաճելի պահեր՝ Ձեզ հաղորդելով առօրյա կյանքում կիրառական և պիտանի իրավական գիտելիքներ:

*Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)
«Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվությ
ուն» ծրագրի հայաստանյան գրասենյակ*

ՎԼՈՒԽ 1. «ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈՒՆՈՒ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ի՞նչ է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը

«Իրավունք բոլորի համար» ծրագիրն ուսուցողական է. այն կպատասխանի իրավաբանական կրթությունն չունեցող անձանց՝ առօրյա կյանքում հաճախ հանդիպող իրավական հարցերին: Արտասահմանյան կրթական գործընթացներում այն հայտնի է “Street law” կամ, թարգմանաբար, «Փողոցային իրավունք» անվամբ: Այլ կերպ ասած՝ «Իրավունք բոլորի համար» ծրագիրն ուղղված է մարդկանց իրավական գրագիտության բարձրացմանը:

Օրինակ, երբ ինչ-որ բան եք գնում, բնակարան եք վարձակալում, ամուսնանում կամ ամուսնալուծվում, դուք գործ եք ունենում իրավունքի հետ: «Իրավունք բոլորի համար» ծրագիրը կոչված է բացատրելու՝ ինչպե՞ս է գործում իրավունքը, ի՞նչ վարքագիծ է ակնկալվում ձեզանից այս կամ այն իրադրությունում և ինչպե՞ս կարող եք օգտվել իրավունքի պաշտպանությունից:

«Իրավունք բոլորի համար» վերտառությամբ այս ձեռնարկը ոչ միայն ներկայացնում է քրեական, քաղաքացիական, սպառողական, աշխատանքային, ընտանեկան իրավունքի և մարդու իրավունքների հիմնարար դրույթները, այլև գործնականում հաճախ հանդիպող իրավիճակների և խնդիրների ներկայացման միջոցով տեղեկացնում է մարդկանց իրենց իրավունքների մասին և օգնում կողմնորոշվել տարբեր իրավական իրավիճակներում:

1.1.1. Ի՞նչ է տալիս «Իրավունք բոլորի համար» ծրագիրը.

- *Իրավունքի և պետության վերաբերյալ համակարգված գիտելիքներ.*

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում ուսուցանվում են իրավունքի այն առանցքային մասերը, որոնց ժամանակակից հասարակության անդամն առավել հաճախ է առնչվում իր ամենօրյա գործունեության ընթացքում:

- *Ժամանակակից հասարակության մեջ կենսագործելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ.*

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը նպաստում է հաղորդակցման հմտությունների, հրապարակային խոսքի, բանակցություններ վարելու կարողությունների զարգացմանը, պետական մարմինների հետ հարաբերվելու և դրանց դերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելուն:

- *Հասարակական կյանքին մասնակցության ցանկություն և ունակություն.*

«Իրավունք բոլորի համար» ծրագրի դասավանդման մեթոդաբանությունն ինտերակտիվ է՝ շփումներ գործնական փորձառություն ունեցող մասնագետների հետ, այցելություններ պետական և հասարակական կազմակերպություններ, ակտիվ մասնակցություն հասարակական ծրագրերին: Անձի մոտ այն կձևավորի իրավական և քաղաքական կատեգորիաների վերաբերյալ գիտակցված մոտեցում՝ խթանելով ակտիվ, օրինապաշտ և իր իրավունքների համար պայքարող քաղաքացու ձևավորմանը:

1.1.2. «Իրավունք բոլորի համար» ծրագրի պատմական արմատները.

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը մեկնարկել է 1972 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Ջորջթաունի համալսարանի Իրավունքի կենտրոնի նախաձեռնությամբ: Ի

սկզբանե ձևավորվելով ԱՄՆ-ում՝ «Իրավունք բոլորի համար» ծրագիրը ներկայում լայն տարածում ունի աշխարհի զարգացած և զարգացող երկրներում:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի առանցքային շահառուները դպրոցահասակ երեխաներն են: Չնայած դրան՝ այն կարող է դասավանդվել նաև ուսուցիչներին, ազատագրկման վայրերում գտնվող անձանց, հասարակական կազմակերպությունների անդամներին, այլոց:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի առանձնահատկությունն այն է, որ ծրագիրն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր կուրսերի իրավաբան-ուսանողների կողմից: Վերջինները, նախքան դպրոցներում և այլ կառույցներում իրավունքի դասավանդում իրականացնելը, հատուկ վերապատրաստում են անցնում: Այս ծրագրի միջոցով իրավաբան-ուսանողները ոչ միայն ճանաչողական գիտելիքներ են ձեռք բերում քաղաքացիների իրավական կարիքների վերաբերյալ, այլև զարգացնում են ապագա իրավաբանի և դասախոսի իրենց հմտությունները:

1.2. «Իրավունք բոլորի համար» ծրագրի դասավանդման մեթոդաբանությունը.

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում իրավունքի դասավանդումն իրականացվում է ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են համատեղ ուսուցումը, ստեղծագործական աշխատանքները, դերախաղերը, փոքր խմբերում տարվող աշխատանքները, արտադասարանային պարապմունքները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասախոսությունների ընթացքում սովորողը մտապահում է ստացած տեղեկատվության ընդամենը 5 տոկոսը: Եթե սովորողը անձամբ է կարդում, ապա մտապահում է ստացած տեղեկատվության 10 տոկոսը: Դասավանդման գործընթացում, տեսաձայնային մեթոդներ կիրառելիս, սովորողը մտապահում է 20 տոկոս տեղեկատվություն, ցուցադրելիս՝ 30 տոկոս տեղեկատվություն, փոքր խմբերում քննարկումներ իրականացնելիս՝ 50 տոկոս տեղեկատվություն, գործնականում կիրառելու միջոցով ուսուցանելիս՝ 75 տոկոս տեղեկատվություն: Իսկ միմյանց սովորեցնելու կամ ձեռք բերված տեղեկատվությունն անմիջապես կիրառելու արդյունքում հնարավոր է հասնել տեղեկատվության 90 տոկոս մտապահելուն: Այդ իսկ պատճառով «Իրավունք բոլորի համար» ծրագիրը շեշտը դնում է հատկապես մատուցվող տեղեկատվության առավել արդյունավետ յուրացումն ապահովող դասավանդման մեթոդների վրա:



Հարցեր

- Արդյո՞ք միայն իրավաբանները պետք է իմանան իրավունքը և ինչու՞ :
- Արդյո՞ք գիտեք որևէ մեկին ով իրավական խնդիր ունի: Ինչպիսի՞ իրավական խնդիր է այն: Արդյո՞ք իրավունքի իմացությունը կարող էր օգնել իրեն այդ իրավիճակում և ինչպե՞ս:

1.3. Աշակերտների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի նպատակը և կառուցվածքը

Աշակերտների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկում անդրադարձ է կատարվում հետևյալ իրավական թեմաներին.

1. ՀՀ իրավունքի հիմունքները
2. Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները
3. Քրեական իրավունքը
4. Ընտանեկան իրավունքը

5. Ժառանգական իրավունքը
6. Աշխատանքային իրավունքը
7. Սպառողների իրավունքը
8. Ընտրական իրավունքը:

Վերը նշված յուրաքանչյուր թեմա դասապրոցեսում ինքնուրույն ուսումնասիրության առարկա է: Յուրաքանչյուր թեմայի շրջանակներում նախ ներկայացվում են իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում հիմնարար իրավական նորմերը, որոնց իմացությունը անհրաժեշտ է քաղաքացուն իր առօրյա կենսագործունեության համար: Ներկայացվող իրավական տեղեկատվությունը համալրվում է խնդիրներով, ստուգիչ հարցերով, դերախաղերի և դատախաղերի առաջադրանքներով, որոնք նպաստում է նյութի հեշտ յուրացմանը և մտապահմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1. Ի՞նչ է իրավունքը .իրավունք և հասարակական բարոյականության նորմեր

«Իրավունք» հասկացության սահմանում տալը բավական բարդ է և կան դրա ամենատարբեր ձևակերպումներ: Ամենապարզ բնորոշմամբ, իրավունքը կանոնների ամբողջություն է, որը կիրառվում է հասարակության անդամների վարքագիծը կարգավորելու համար: Այդ կանոնները մարդկանց թելադրում են՝ ի՞նչ անել և ի՞նչ չանել: Իրավունքն ազդում է մեր առօրյա գործունեության բոլոր կողմերի վրա, թեև մենք, հնարավոր է, չգիտակցենք այն: Իրավական նորմերը պարտադիր են մարդկանց համար և դրանց պահանջները չպահպանելու դեպքում կարող է առաջանալ պատասխանատվություն:

Իրավական նորմերը տարբերվում են հանրային բարոյականության նորմերից: Վերջինները որոշակի վարքագծի լավ կամ վատ լինելու վերաբերյալ հասարակության մեջ ձևավորված մոտեցումներ են: Սակայն, քանի դեռ հանրային բարոյականության նորմերը չեն ամրագրված օրենքով, դրանք չեն կարող կիրառվել պետական մարմինների կողմից, այդ թվում՝ դատարանի: Օրինակ՝ հանրային բարոյականության նորմերի տեսանկյունից սուտ խոսելը դատապարտելի է, սակայն ինքնին դա հակաիրավական չէ: Եվ հակառակը. կարող են գոյություն ունենալ իրավունքի նորմեր, որոնք շատ մարդիկ համարեն հանրային բարոյականության նորմերի տեսանկյունից դատապարտելի: Օրինակ՝ հղիության արհեստական ընդհատումը արգելված չէ օրենքով /մինչև որոշակի ժամկետը/, սակայն հանրային բարոյականության նորմերի տեսանկյունից այդ արարքը քննադատելի է:

Առանձին դեպքերում իրավունքի նորմերը կարող են շատ խիստ լինել մարդկանց նկատմամբ: Սակայն դատավորները, արդարադատություն իրականացնելիս, չեն կարող անտեսել իրավական նորմերը կամ փոխել դրանք: Ինչպես ասվում է լատինական ասացվածքում «*dura lex, sed lex*», որը թարգմանաբար նշանակում է «*օրենքը խիստ է, բայց դա օրենք է*»:



Խնդիր 1.

Կազմեք առօրյայում ձեր կողմից իրականացվող գործողությունների ցանկ: Յուրաքանչյուրի կողքը նշեք, թե արդյո՞ք, Ձեր կարծիքով, համապատասխան գործողությունը կարգավորվում է իրավական նորմերով: Ո՞րն է, ըստ ձեզ, իրավական նորմերով կարգավորելու նպատակը: Արդյո՞ք դուք կփոխեիք համապատասխան իրավական նորմերը:

Խնդիր 2. Նավարկելայլների գործը

Երեք հոգի՝ Նահապետը, Նարեկը և Անահիտը, նավարկում էին ծովում, երբ վերջիններիս նավը, ընկնելով փոթորկի մեջ, խորտակվեց: Երեքով հայտնվեցին մի անմարդաբնակ կղզում՝ առանց սննդի, ջրի և ձուկ որսալու որևէ հարմարության: Երեքով սկսեցին մտորել իրենց վիճակի շուրջ: Նահապետը, ով քաջատեղյակ էր նավագնացությունից, ասաց, որ իրենք ցամաքից մոտ 1600 կմ հեռավորության վրա են, և հազիվ թե որևէ նավ իրենց մոտով անցնի: Նարեկը, որը մասնագիտությամբ բժիշկ էր, ասաց, որ մարդը չի կարող առանց սննդի ապրի ավելի, քան 30 օր: Նա նաև ասաց, որ եթե իրենցից մեկը ավելի շուտ մահանա՝ մյուս երկուսը կարող են գոյատևել վերջինիս միսն ուտելով: 25-րդ օրը Անահիտը, ով արդեն բավական թուլացել էր, առաջարկեց վիճակ գցել և որոշել իրենցից մեկին մորթել ու ուտել: Նահապետն ու Նարեկը համաձայնեցին: Վիճակահանությամբ ընտրվեց Անահիտը, սակայն նա հրաժարվեց վիճակահանության պայմանը պահել: Նահապետն ու Նարեկը, ովքեր, միևնույն է, սովից շուտով մեռնելու էին, սպանեցին Անահիտին և կերան նրան: Հինգ օր հետո Նահապետին ու Նարեկին գտավ պատահաբար անցնող մի նավ և փրկեց նրանց: Սակայն Նահապետին ու Նարեկին դատարանի առջև բերեցին դիտավորյալ սպանության համար: Քրեական օրենսգիրքն ասում է, որ անձին դիտավորյալ կյանքից զրկելը սպանություն է և պատժվում է քրեական օրենսգրքով:

Կազմակերպեք դերախաղ՝ պատասխան տալով հետևյալ հարցերին.

- *Արդյո՞ք Նահապետն ու Նարեկը ենթակա են քրեական պատասխանատվության սպանության համար:*
- *Եթե Դուք լինեք Նահապետի և Նարեկի փաստաբանը, ինչպիսի՞ փաստարկներ կներկայացնեք:*
- *Եթե Դուք լինեք գործով մեղադրանքը պաշտպանող դատախազը, ինչպիսի՞ փաստարկներ կներկայացնեք:*
- *Եթե Նահապետն ու Նարեկը մեղավոր ճանաչվեն, ի՞նչ արարքի համար նրանք պատասխանատվության կենթարկվեն:*
- *Ինչո՞ւ է անհրաժեշտ դատապարտել Նահապետին ու Նարեկին:*
- *Բերված օրինակում ո՞րն է օրենքի և բարոյականության նորմերի միջև կապը: Արդյո՞ք բարոյականության նորմերի տեսանկյունից Նահապետն ու Նարեկը սխալ էն վարվել:*
- *Կարո՞ղ է արդյոք մարդը գործել իրավաչափ, բայց՝ հակաբարոյական:*

2.2. Նորմատիվ իրավական ակտերի համակարգը

Հասարակական վարքագծի կանոններ ամրագրող իրավական նորմերը զետեղվում են տարբեր տեսակի իրավական ակտերում: Գործնականում Դուք, հավանաբար, առավել քաջատեղյակ եք «օրենք» եզրույթին:

Վերջինը առօրյա խոսակցական լեզվում ունի փոքր-ինչ այլ ծավալ, քան իրավական լեզվում: Առօրյա խոսակցական լեզվում օրենք են համարվում վարքագծի կանոններ սահմանող բոլոր ակտերը: Մինչդեռ իրավական լեզվում օրենքը նորմատիվ իրավական ակտերի միայն մի տեսակ է: Նորմատիվ իրավական ակտերը վարքագծի կանոններ սահմանող պաշտոնական գրավոր փաստաթղթեր են: Յուրաքանչյուր երկրի ներսում գործում են իրավական ակտերի տարբեր տեսակներ, որոնք մեկը մյուսից տարբերվում են իրենց իրավական ուժով և դրանք ընդունող մարմինների շրջանակով: Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերը, ըստ իրենց իրավական ուժի, դասակարգվում են հետևյալ ստորադասությամբ:

Նշված նորմատիվ իրավական ակտերին հաջորդում են մյուս մարմինների կողմից ընդունվող ակտերը, այդ թվում՝ համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշումներ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի, Վերաքննիչ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի վճիռները կամ դատավճիռները:

Բոլոր նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ դրանց իրականացումն ապահովելու նպատակով: Ավելի ցածր իրավական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտը չի կարող հակասել ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտին, իսկ հակասության դեպքում գործում է ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտը:

2.2.1. Սահմանադրություն

Սահմանադրությունն այլ կերպ անվանում են «*Հիմնական օրենք*»: Այս իրավական ակտով սահմանվում են յուրաքանչյուր պետության կառավարման, մարդու իրավունքների և պարտականությունների համար հիմնարար իրավական սկզբունքները: Սահմանադրությունը երկրի բարձրագույն օրենքն է և իր իրավական ուժով գտնվում է նորմատիվ իրավական ակտերի բուրգի գագաթին: Երկրում գործող մյուս բոլոր իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ վերջինիս հակասելու դեպքում չեն կարող գործել: Հաշվի առնելով Սահմանադրության հիմնարար բնույթը, այս փաստաթուղթն ընդունվում է հատուկ բարդեցված կարգով:


Կան երկրներ, որտեղ Սահմանադրություններն ընդունվում և փոփոխվում են երկրի օրենսդիր մարմնի՝ Խորհրդարանի կողմից կամ հատուկ ստեղծվող սահմանադիր ժողովի կողմից: Այսպես են ընդունվել, օրինակ՝ ԱՄՆ-ի, Իտալիայի, Հնդկաստանի, Ռումինիայի, Իսպանիայի Սահմանադրությունները: Սակայն առավել տարածված է Սահմանադրությունների ընդունումը համաժողովրդական քվեարկության՝ հանրաքվեի միջոցով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է հանրաքվեի միջոցով 1995 թվականի հուլիս 5-ին: Այս օրը յուրաքանչյուր տարի նշվում է որպես Սահմանադրության օր և հայտարարված է ոչ աշխատանքային օր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն իր գործողության ընթացքում մեկ անգամ ենթարկվել է փոփոխությունների՝ 2005թ-ի նոյեմբերի 27-ին, կրկին հանրաքվեով:

Սահմանադրությունները, որպես կանոն, սկսվում են նախաբանով՝ պրեամբուլա, որը, թեև ունի հռչակագրային բնույթ, սակայն կատարում է գաղափարախոսական գործառույթ: Դրանով ամրագրվում է պետության տեսլականը, ընդգծվում է փաստաթղթի՝ ժողովրդի կողմից կամ նրա անունից ընդունված լինելը, մատնանշվում են պետության պատմությամբ և ազգային արժեքներով պայմանավորված որոշակի դրույթներ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում ասված է.

«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

Ցանկացած Սահմանադրության առանցքային նպատակներից է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ամրագրումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը ևս ամբողջությամբ նվիրված է այս հարցին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ են ամրագրված նաև պետական կառավարման ձևին, իշխանությունների բաժանմանը և հավասարակշռմանը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործունեությանը, տեղական ինքնակառավարմանը վերաբերող հիմնարար դրույթները:



Հարցեր

- *Ու՞մ կողմից է ընդունվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:*
- *Ինչո՞ւ է անհրաժեշտ ունենալ Սահմանադրություն: Արդյո՞ք այն մեր կյանքում որևէ դերակատարում է ունենո՞ւմ:*
- *Մարդու և քաղաքացու ինչպիսի՞ իրավունքներ են ամրագրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:*
- *Պետական իշխանության ինչպիսի՞ մարմինների գործունեության հիմունքներն են ամրագրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:*

2.2.2. Օրենքներ, ինչպե՞ս են դրանք ստեղծվում

Հայաստանի Հանրապետությունը պատկանում է մայրցամաքային կամ ռոմանո-գերմանական իրավական ընտանիքին, որտեղ գործում են գրված օրենքներ: Օրենքներն ընդունվում են օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից: Դատական իշխանությունը չի մասնակցում օրենքների ստեղծմանը, այլ ապահովում է դրանց կենսագործումը: Մայրցամաքային իրավական ընտանիքից բացի, գոյություն ունի նաև ընդհանուր իրավունքի կամ անգլոսաքսոնական իրավունքի համակարգ /օրինակ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն/, որտեղ դատարանները լայն մասնակցություն են ունենում իրավունքի ձևավորմանը: Ընդհանուր իրավունքի երկրներում դատարանները գործերը լուծում են նախկինում նմանատիպ գործերով իրենց կողմից ձևավորված մոտեցումների, իրավունքի մեկնաբանությունների հիման վրա ստեղծված նախադեպերի միջոցով՝ դրանով իսկ ստեղծելով իրավունք և զարգացնելով այն:

Այդուհանդերձ, իրավունքի զարգացմանը և հասարակական հարաբերությունների ընդլայնմանը զուգահեռ, ներկայում աշխարհում տեղի է ունենում մայրցամաքային և ընդհանուր իրավունքի համակարգերի մերձեցում՝ մեկը մյուսից փոխառելով որոշակի տարրեր: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մայրցամաքային իրավունքն առանձին դեպքերում զգում է դատական նախադեպերի կարիք, որոնց միջոցով դատական պրակտիկան դառնում է կանխատեսելի, միատեսակ, իսկ ընդհանուր իրավունքի երկրներն էլ օրենսդիր մարմնի կողմից ընդունվող գրված օրենքների կարիք են զգում, որոնցով իրավունքը դառնում է ավելի համակարգված, հեշտ կիրառելի և մատչելի ոչ իրավաբանի համար:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը օրենքներ ընդունող և դրանցում փոփոխություններ կատարող կարևորագույն պետական մարմինն է:

Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունմանը նախորդում է օրենքի նախագծի մշակումը: ԱԺ-ում օրենք ընդունելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ միայն պատգամավորները և Կառավարությունը:

Սակայն դա չի նշանակում, որ հասարակական կազմակերպությունները, այլ անձինք չեն կարող առաջարկել օրենք ընդունել կամ գործող օրենքում փոփոխություն իրականացնել: Ցանկացած շահագրգիռ անձ կարող է հանրային քննարկումներ կազմակերպել որևէ օրենք ընդունելու գաղափարի շուրջ, սակայն հետագայում օրենքի նախագիծ Ազգային ժողովի քննարկմանը կարող են ներկայացնել միայն պատգամավորները կամ Կառավարությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ օրենքներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին/ Հոդված 71/:

Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները ստորագրում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ օրենքը ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում: Սակայն Նախագահն իրավունք ունի չստորագրել Ազգային ժողովից ստացված օրենքը և վերը նշված ժամկետում օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Դրանով Նախագահը վետո է դնում օրենքի վրա: Հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում Ազգային ժողովը կարող է հաղթահարել Հանրապետության Նախագահի վետոն՝ վերադարձված օրենքը վերստին ընդունելով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ազգային ժողովի կողմից ընդունված և Հանրապետության Նախագահի կողմից ստորագրված օրենքները պարտադիր պետք է հրապարակվեն: Օրենքները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» կոչվող ամսագրում և միայն դրանից հետո կարող են մտնել օրինական ուժի մեջ: Հանրապետության պաշտոնական տեղեկագրում չհրապարակված օրենքներն իրավական ուժ չունեն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների աշխարհում Հայաստանի Հանրապետության բոլոր օրենքները հասանելի են նաև էլեկտրոնային եղանակով www.arlis.am կայքում:



Խնդիր

Երևան քաղաքի կենտրոնում գեղեցիկ այգի է կառուցվել: Քաղաքապետարանը ցանկանում է պահպանել այգու բնական միջավայրը քաղաքային ադմուկից, աղտոտումից, մարդկանց մեծ բազմությունից, տրանսպորտային միջոցներից: Այգին պետք է լինի մի վայր, որտեղ մարդիկ կվայելեն իրենց հանգիստը: Այգում կան խաղահրապարակներ և պիկնիկի համար նախատեսված վայրեր: Քաղաքապետարանը այգու բոլոր մուտքերի մոտ տեղադրում է հետևյալ ցուցանակը.

« ԱՅԳՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՐԳԵԼ ՎԱԾ ԵՆ »

Թեև առաջին հայացքից տեքստը հստակ է թվում, սակայն գործնականում դրա բովանդակության վերաբերյալ առաջանում են վեճեր:

Ստորև բերվող իրավիճակների նկատմամբ կիրառեք նշված կանոնը, և մեկնաբանեք ցուցանակի վրա զետեղված վարքագծի նորմը՝ հիմք ընդունելով, թե ի՞նչ է «օրենքի տառը» և իրավական նորմը սահմանողի նպատակը.

- 1) *Նարեկն ապրում է քաղաքի մի ծայրում, իսկ նրա աշխատավայրը քաղաքի մեկ այլ մասում է: Նարեկը կիսնայի տասը բռպե, եթե մեքենայով անցնի այգու միջով:*
- 2) *Այգում կան բազմաթիվ աղբամաններ: Աղբատար ավտոմեքենան ցանկանում է մտնել այգի աղբահանություն իրականացնելու համար:*
- 3) *Շտապօգնության ավտոմեքենան տեղափոխում է մահամերձ հիվանդի, իսկ դեպի հիվանդանոց ամենակարճ ճանապարհն այգու միջով է:*
- 4) *Այգի եկող որոշ երեխաներ ցանկանում են այնտեղ հեծանիվ և սքեյթբորդ քշել:*
- 5) *Նարեն ցանկանում է իր երեխային մանկասայլակով այգի տանել:*
- 6) *Այգում կառուցվում է Արցախյան հերոսամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան, որի վրա պետք է կայանվի ռազմի դաշտից բերված տանկը:*

Արդյո՞ք վերոհիշյալ իրավական նորմը պետք է վերաձևակերպվի տարրնթերցումներից խուսափելու համար:

Արդյո՞ք օրենքները պետք է գրվեն այնքան մանրամասն, որ քաղաքացիներին հասկանալի լինեն դրանց իմաստը:

Արդյո՞ք օրենքները պետք է ձկուն լինեն տարբեր իրավիճակների հարմարեցվելու համար: Կարո՞ղ են օրենքները միաժամանակ լինել և՛ ձկուն, և՛ մանրամասն: Ինչպե՞ս կարող են արտակարգ իրավիճակները կանխատեսվել օրենքում:

2.3. Դատարանները և վեճերի լուծման արտադատական եղանակները

Դատարանները կարևոր դերակատարում ունեն օրենքների պահպանումն ապահովելու, իրավունքը մեկնաբանելու և կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ այն կիրառելու գործում: Այս գործառույթը դատարաններն իրականացնում են գործեր քննելու և լուծելու միջոցով: Հայաստանի Հանրապետությունում գործում են հետևյալ դատարանները.

2.3.1. Առաջին ատյանի դատարաններ

Մրանք դատական համակարգի ստորին օղակն են, որոնք առաջին անգամ քննում են բոլոր քաղաքացիական, քրեական և վարչական գործերը:

Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի դատարաններն են՝

- ընդհանուր իրավասության դատարանները,
- վարչական դատարանը:

Ընդհանուր իրավասության դատարանները քննում են քաղաքացիական և քրեական գործերը: Ընդհանուր իրավասության դատարանները տեղակայված են Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների, իսկ մարզերում՝ մարզկենտրոններում: Երևան քաղաքում կա 7, իսկ մարզերում՝ ընդհանուր թվով 9-ը դատարան:

Վարչական դատարանը մասնագիտացված դատարան է և քննում է միայն վարչական գործեր: Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, օրինակ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության հետ կապված վեճերը, ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումները, վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով և այլն:

Վարչական դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է Երևան քաղաքում, սակայն դատարանն ունի այլ նստավայրեր մարզերում:

Քրեական և վարչական գործերով առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող ակտն անվանվում է վճիռ, իսկ քրեական գործերով՝ դատավճիռ:

Առաջին ատյանի դատարանների վճիռներն ու դատավճիռները, որպես կանոն, օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո՝ բացառությամբ որոշակի դեպքերում սահմանված այլ ժամկետների:

2.3.2. Վերաքննիչ դատարաններ

Վերաքննիչ դատարանները վերանայում են ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Հայաստանի Հանրապետությունում գործում է երեք վերաքննիչ դատարան՝

- 1) վերաքննիչ քաղաքացիական դատարան,
- 2) վերաքննիչ քրեական դատարան,
- 3) վարչական վերաքննիչ դատարան:

Բոլոր վերաքննիչ դատարանների նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Վերաքննության իրավունքը երաշխավորում է առաջին ատյանի դատարանների կողմից թույլ տված իրավունքի նորմերի խախտումների վերացումը: Սակայն վերաքննիչ դատարանը ոչ թե ամբողջությամբ նորից քննում է առաջին ատյանի դատարանի քննած գործը, այլ դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով: Այս դեպքում վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցը էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն

- դատավարության մասնակիցները,
- դատավարության մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Գործն, ըստ էության, լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշում է ընդունում, որն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

2.3.2. Վճռաբեկ դատարան

Վճռաբեկ դատարանը Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բարձրագույն օղակն է, որի գործունեության նպատակն է ապահովել մյուս բոլոր դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառումը:

Հայաստանի Հանրապետությունում գործում է մեկ Վճռաբեկ դատարան, որի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է: Վճռաբեկ դատարանի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Վճռաբեկ դատարանն ունի երկու պալատ՝

- Քրեական պալատ,
- Քաղաքացիական և Վարչական պալատ:

Անձը չի կարող ակտը բողոքարկել Վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքով չի բողոքարկել դատական ակտը Վերաքննիչ դատարանում: Բացառություն են կազմում այն ակտերը, որոնք վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն:

Կարևոր է իմանալ, որ ի տարբերություն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների, Վճռաբեկ դատարանը պարտավոր չէ վարույթ ընդունել և քննել բոլոր բողոքները: Վճռաբեկ դատարանը բողոքը քննում է միայն այն դեպքերում, եթե.

- բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ
- առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ
- առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Վճռաբեկ դատարանի որոշումները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական կայքէջում՝ www.court.am:

2.3.3. Սահմանադրական դատարան

Ինչպես արդեն նշել ենք վերոգրյալում, Սահմանադրությունն իրավական ակտերի համակարգում ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Դրա գերակայությունը և անմիջական գործողությունը ապահովվելու համար առանձին երկրներում, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, գործում է հատուկ մասնագիտացված դատական ատյան: Այլ երկրներում, որտեղ չկան սահմանադրական դատարաններ, սահմանադրական արդարադատության իրականացումը վերապահված է բարձրագույն դատական ատյաններին /օրինակ՝ ԱՄՆ, Ավստրալիա, Կանադա և այլն/: ՀՀ Սահմանադրական դատարանը ստեղծվել է 1996 թվականին: Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից, որոնցից 5-ին նշանակում է Ազգային ժողովը, 4-ին՝ Հանրապետության Նախագահը: Սահմանադրական դատարանը գործերը քննում է կոլեգիալ՝ ամբողջ կազմով:

Տարբեր երկրներում սահմանադրական դատարաններին վերապահվում են տարբեր լիազորություններ, բայց վերջինների գլխավոր առաքելությունն օրենքի սահմանադրականության ստուգումն է և հակասահմանադրական ճանաչվելու դեպքում՝ այն անվավեր ճանաչելը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանն իրականացնում է հետևյալ լիազորությունները.

- որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը,
- մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը,
- լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը,
- լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը,
- անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները,
- եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին,
- եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին,
- եզրակացություն է տալիս Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ,
- եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին,
- որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը պարզելու համար Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

- Հանրապետության Նախագահը,
- պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը,
- կառավարությունը, դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով,
- մարդու իրավունքների պաշտպանը,
- յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:



Խնդիր. Ո՞ր դատարանն է իրավասու քննելու գործը

1) Նահապետը Կապան քաղաքում անզգուշությամբ վթարի է ենթարկել մի կնոջ: *Ո՞ր դատարանն է իրավասու քննելու գործը:*

2) Նարեն Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խանութներից մեկից գնում է 1 մլն դրամ արժողությամբ հեռուստացույց, բայց տուն բերելուց հետո պարզվում է, որ այն չի աշխատում: Վաճառողը հրաժարվում է հետ վերցնել ապրանքը կամ փոխանակել այն: *Ո՞ր դատարանն է իրավասու քննելու գործը:*

Ինչպե՞ս կարող է Նարեն բողոքարկել դատարանի որոշումը, եթե համաձայն չլինի դրա հետ:

- 3) Նարեկը հարկային տեսչության կողմից ենթարկվում է տուգանքի հարկային վճարումներն ուշացնելու համար: Նարեկը գտնում է, որ հարկային վճարումները կատարվել են ժամանակին և հարկային մարմինների ակտը սխալ է: *Ո՞ր դատարանն է իրավասու քննելու գործը: Ինչպե՞ս կարող է Նարեկը բողոքարկել դատարանի որոշումը, եթե համաձայն չլինի դրա հետ:*

- 4) Շաքեն գտնում է, որ օրենքով նախատեսված առողջության պարտադիր ապահովագրության համակարգը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և խախտում է իր սահմանադրական իրավունքները: *Ինչպե՞ս նա կարող է պաշտպանել իր սահմանադրական իրավունքները:*

2.4. Քրեական, քաղաքացիական և վարչական գործերի դատական քննության առանձնահատկությունները

Դատարանում գործերի քննության ընթացակարգը և դատարանի դերը գործի քննության ժամանակ տարբերվում է քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության հիման վրա: Մրցակցային դատավարությունը նման է կողմերի միջև մրցույթի, որից էլ բխում է «մրցակցային» անվանումը: Դատավորը մրցակցային վարույթում պասիվ մասնակից է, որը լսում է կողմերին, նրանց փաստարկներն ու ներկայացրած ապացույցները և, արդյունքում, կայացնում է վճիռ: Դատարանը չի հուշում կողմերին՝ ինչ ապացույցներ ներկայացնել: Դա նշանակում է, որ դատարանը վճիռ է կայացնում այս կամ այն կողմի օգտին՝ ելնելով այդ կողմի ներկայացրած ապացույցների ծանրակշիռ և արժանահավատ լինելուց:

Քրեական դատավարությունում դատարանի դերը համեմատաբար առավել ակտիվ է, և դատարանը ավելի ակտիվ է մասնակցում ապացուցման գործընթացին և կարող է, ըստ անհրաժեշտության, ապացույց պահանջել: Քրեական դատավարությունում պետական մեղադրանքի կողմը՝ դատախազն է, որը պետք է ապացուցի անձի մոտ մեղքի առկայությունը: Հանցագործության մեջ մեղադրվող անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղ լինելը: Եթե մեղադրանքի կողմը բավարար ապացույցներ չներկայացնի, դատարանը պարտավոր է անձին անմեղ ճանաչել և կայացնել արդարացման դատավճիռ:

Քրեական և քաղաքացիական գործերը լսվում են առանձին դատավարություններում: Եթե հանցագործության կատարմամբ տուժողին նաև նյութական վնաս է պատճառվել, դրա հատուցման պահանջը քննվում է քրեական գործից առանձին՝ քաղաքացիական դատավարության կարգով:

Ի տարբերություն քաղաքացիական և քրեական դատավարության՝ վարչական դատավարությունում դատարանը ակտիվ է և գործի փաստական հանգամանքները պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դա նշանակում է, որ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ

հստակ պահանջները, պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

2.5. Գործերի քննության փուլերը քաղաքացիական դատավարությունում

Քաղաքացիական վարույթում գործերի քննությունը, որպես կանոն, անցնում է որոշակի փուլեր, որոնք հետևյալն են.

Հայցի հարուցում

Քաղաքացիական իրավահարաբերություններից բխող վեճը դատարանի քննության առարկա դարձնելու համար, նախ և առաջ, պետք է հայցադիմում ներկայացնել դատարան: Որպես կանոն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան: Այլմեծ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան: Առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի կամ վնասի պատճառման վայրի դատարան:

Հայցադիմումը ներկայացվում է գրավոր: Հայցադիմումում պետք է մասնավորապես նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը,
- 2) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները,
- 4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները,
- 5) հայցապահանջները հաստատող ապացույցները,
- 6) բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը,
- 7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները.
- 8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հայցադիմումը ստորագրում է հայցվորը կամ նրա կողմից դրա համար լիազորված ներկայացուցիչը: Դատարան հայցադիմում ներկայացնելու համար վճարվում է պետական տուրք, որը գանձվում է պետական բյուջե: Պետական տուրքը գույքային պահանջով հաշվարկվում է հայցագնի երկու տոկոսի չափով, իսկ ոչ գույքային պահանջով՝ 4000 ՀՀ դրամ: Առանձին կատեգորիայի անձինք կարող են դիմել և խնդրել դատարանին ազատել պետական տուրքի վճարումից: Իսկ վճիռ կայացնելիս դատարանը կարող է պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձել պետական տուրք, եթե նա գործով պարտված կողմն է:

Դատարանը հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է պատասխանողին և նախազգուշացնում հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Հայցադիմումի ընդունում

Օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում դատավորը պարտավոր է վարույթ ընդունել:

Գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքը

Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն: Գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը կարող է հրավիրել նախնական դատական նիստ, որի ընթացքում դատարանն իրականացնում է գործի արդյունավետ քննությանն ուղղված գործողություններ՝ հայցի առարկայի և հիմքի պարզում, ապացուցման բեռի բաշխում և այլն: Կողմերը և դատավարության այլ մասնակիցները ծանուցվում են նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին:

Գործին մասնակցող անձինք դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատական ծանուցագրերի միջոցով: Դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Ծանուցագիրը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից կամ հասցեատերը ծանուցումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է ծանուցագիրը ստանալուց հրաժարվելու մասին:

Ծանուցագիրն ուղարկվում է դատավարության մասնակից ֆիզիկական անձի հայտնած հասցեով: Եթե նա իր հասցեն չի հայտնել կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է փոստային ծառայության կողմից, ապա դատական ծանուցագիրն ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով, ինչպես նաև համապատասխան համայնքի ղեկավարին (Երևան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարին):

Դատաքննություն

Գործի քննությունը տեղի է ունենում դատական նիստերի միջոցով՝ դատական նիստերի դահլիճում: Գործի քննության համար նշանակված ժամին դատական նիստը նախագահողը բացում է նիստը, հայտարարում է դատարանի կազմը և այն գործը, որը քննության է առնվելու: Դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահին դահլիճում ներկա գտնվողները ոտքի են կանգնում, այնուհետև, նախագահողի հրավերով, զբաղեցնում իրենց տեղերը: Դատավարության մասնակիցները դատարանին դիմում են և իրենց ցուցմունքներն ու բացատրությունները տալիս են կանգնած, բացառությամբ նախագահողի թույլատրած դեպքերի:

Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն:

Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ:

Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի նիստին ներկա գտնվող անձանց նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ՝ սանկցիաներ: Դրանք են.

- նախազգուշացում,
- նիստերի դահլիճից հեռացնելը,
- դատական տուգանք,

- պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

Դատական տուգանքը կարող է կիրառվել մինչև 100.000 դրամի չափով: Դատական տուգանքի չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ, սակայն, բացի արարքի ծանրությունից, պետք է հաշվի առնվի նաև արարք կատարողի անձը:

Եթե պատասխանողը կամ հայցվորը, որոնք դատական նիստի ժամի և վայրի մասին ծանուցվել են, չեն ներկայանում նիստին, դատարանը կարող է գործը քննել առանց վերջիններիս մասնակցության՝ գրավոր ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա:

Դատաքննության ընթացքում նիստը նախագահողը դատավարության մասնակիցներին պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, ապա պարզում է, արդյո՞ք, հայցվորը պնդում է իր պահանջները, պատասխանողն, արդյո՞ք ընդունում է հայցվորի պահանջները, և կողմերը չեն ցանկանում արդյո՞ք կնքել հաշտության համաձայնություն:

Ելույթի համար խոսք է տրվում հայցվորին և պատասխանողին:

Այնուհետև դատարանն անցնում է նոր կայացված ապացույցների հետազոտմանը: Բոլոր ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը գործին մասնակցող անձանց հարցնում է, թե նրանք արդյո՞ք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ: Նման միջնորդությունների բացակայության դեպքում նախագահողը գործի քննությունը հայտարարում է ավարտված, և դատարանը հայտարարում է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը:

Վճռի կայացում և հրապարակում

Դատարանի վճիռը կազմում և ստորագրում է նիստը նախագահած դատավորը: Դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Դատարանի վճիռը դառնում է ներկայացված լսում են հոտնկայս: Դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

Վճռի կատարում

Որպես կանոն՝ կողմերը պետք կամավոր կատարեն դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճիռը: Սակայն, եթե կողմերից մեկը հրաժարվում է վճիռը կատարելուց, ապա այն ի կատար է ածվում հարկադիր կարգով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով: Վճռի հարկադիր կատարման համար կողմը պետք է դիմի այն կայացրած առաջին ատյանի դատարան: Կատարողական թերթը տրվում է դատարան ներկայացված դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

Կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:

Վերաքննիչ բողոքարկում

Առաջին ատյանի դատարանի վճռի հետ համաձայն չլինելու դեպքում, անձը կարող է բողոքարկել այն ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան առաջին ատյանի դատարանի վճռի հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Վճռաբեկ բողոքարկում

Վերաքննիչ դատարանի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, անձը կարող է բողոքարկել այն ՀՀ վճռաբեկ դատարան՝ վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:



Հարցեր.

- Ինչո՞վ է տարբերվում դատարանի դերը քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում:
- Ի՞նչ է մրցակցության սկզբունքը: Ինչո՞ւ է քաղաքացիական դատավարությունն իրականացվում մրցակցության սկզբունքի հիման վրա:

Արդյո՞ք դա ճիշտ է:

Խնդիր.

Նարեկը Նահապետից գնել է ավտոմեքենա և դրա դիմաց նրան պարտք է 1 մլն ՀՀ դրամ: Մեքենան երկու շաբաթ շահագործելուց հետո շարժիչը փչանում է և Նարեկը հրաժարվում է վճարել Նահապետին: Նահապետը ցանկանում է դիմել դատարան առաջացած վեճը լուծելու համար:

Քննարկեք, թե ի՞նչ ընթացակարգերով պետք է անցնի Նահապետը վեճը լուծելու համար:

2.6. Վեճերի լուծման արտադատական եղանակները

Շատ իրավական խնդիրներ կարող են լուծվել առանց դատարան գնալու: Սովորաբար, դատարան գնալը ժամանակատար և ծախսատար է, որի պատճառով էլ մարդիկ հաճախ փնտրում են դատարանից դուրս վեճերի լուծման ճանապարհ: Միևնույն ժամանակ պետք է խուսափել իրավունքի հարցերը սեփական միջոցներով լուծելու փորձերից և դիմել իրավաբանի, եթե կողմերի միջև վեճի շուրջ հաշտություն դեռ չի բերվում: Հաշվի առնելով դատական ճանապարհով վեճերի լուծման մի շարք բարդությունները և անհարմարությունները՝ գործնականում ձևավորվել են արտադատական ճանապարհով վեճերի լուծման մի շարք ընթացակարգեր: Դրանցից առավել հայտնիներն են.

- բանակցությունները,
- միջնորդ-հաշտարարությունը /մեդիացիա/,
- արբիտրաժը:

2.6.1. Բանակցություններ

Բանակցությունների ժամանակ մարդիկ փորձում են խոսել միմյանց հետ և հասնել իրենց վեճի **փոխշահավետ** լուծման: Հաճախ մարդիկ բանակցությունների են ներգրավում իրավաբանների, որոնք իրենց անունից կամ իրենց հետ համատեղ վարում են բանակցությունները: Կողմերը կարող են բանակցել անգամ դատարանում վեճի վերաբերյալ գործի քննությանը զուգահեռ: Այս դեպքում, եթե նրանք վեճի լուծման վերաբերյալ գալիս են ընդհանուր հայտարարի, կնքում են հաշտության համաձայնություն, որը հաստատվում է դատարանի կողմից: Դատարանի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը (տեքստը):

2.6.2. Միջնորդ-հաշտարարությունը

Միջնորդ-հաշտարարության դեպքում որևէ երրորդ անձ հանդես է գալիս երկու կողմերի միջև հաշտեցնողի դերում: Օրինակ, երբ երկու երեխա վիճում են այն բանի շուրջ, թե որ հեռուստահաղորդումը նայեն, նրանց ծնողներից մեկը հանդես է գալիս հաշտեցնողի դերում՝ օգնելով նրանց համաձայնության գալ հեռուստաալիքի շուրջ: Իրավական բարդ խնդիրները լուծելու հարցում, որպես հաշտեցնող, կարող են հանդես գալ միջնորդ-հաշտարարության տեխնիկային տիրապետող հատուկ մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձինք, որոնք պարտադիր չէ, որ լինեն իրավաբաններ: Օրինակ՝ ընտանեկան վեճերը լուծելու դեպքում հաճախ առավել արդյունավետ է, երբ, որպես միջնորդ-հաշտարար, հանդես է գալիս հոգեբանը:

Ընդ որում, միջնորդ-հաշտարարության դեպքում, միջնորդ-հաշտարարը ոչ թե ինքն է որոշում կայացնում կողմերի փոխարեն, այլ, կողմերին համոզելով, բերում է որոշակի լուծման: Հետագայում լուծման հետ համաձայն չլինելու դեպքում, կողմերը կարող են դիմել դատարան: Սրանով էլ միջնորդ-հաշտարարությունը տարբերվում է արբիտրաժից: Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականից գործում է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը, որն իրականացնում է ֆինանսական կազմակերպությունների հանդեպ գույքային/դրամական պահանջ ունենալու դեպքում սպառողների բողոքների քննման, սպառող-կազմակերպություն վեճերի լուծման ծառայություններ:

Միջնորդ հաշտարարությունն ընթանում է որոշակի փուլերով, մասնավորապես.

- **Բացում**

Միջնորդ-հաշտարարը կողմերին բացատրում է կանոնները, նրանց հանգստացնում է և տրամադրում բանակցելու, ասում է, որ չի ներկայացնում որևէ կողմի շահերը:

- **Վեճի ներկայացում**

Յուրաքանչյուր կողմ ներկայացնում է վեճի վերաբերյալ պատմությունը:

- **Ֆաստերի և վիճահարույց հարցերի առանձնացում**

Միջնորդ-հաշտարարը, լսելով երկու կողմերի ներկայացրած պատմությունը, առանձնացնում է վեճի լուծման համար կարևոր փաստերը, այն փաստերը, որոնց վերաբերյալ կողմերը համաձայնության են եկել, և վիճահարույց հարցերը:

- **Վեճի լուծման այլընտրանքների բացահայտում**

Կողմերից յուրաքանչյուրն առաջարկում է վեճի լուծման իր տարբերակը: Միջնորդ հաշտարարը դրանք արձանագրում է և լսում դրա վերաբերյալ մյուս կողմի կարծիքը:

- **Լուծումների վերանայում և քննարկում**

Կողմերի ներկայացրած դիրքորոշումների հիման վրա, միջնորդ-հաշտարարը վեր է հանում այն հնարավոր լուծումները, որոնց հետ երկու կողմն էլ համաձայն կլինեն:

- **Համաձայնության հաստատում**

Միջնորդ-հաշտարարը կողմերին օգնում է գալ վեճի այնպիսի լուծման, որը երկու կողմերի համար էլ շահեկան կլինի: Համաձայնությունը ձևակերպվում է գրավոր, որից հետո կողմերը քննարկում են, թե ինչ կլինի, եթե յուրաքանչյուրը խախտի ձեռք բերված համաձայնությունը:

2.6.3. Արբիտրաժ

Ի տարբերություն բանակցությունների և միջնորդ-հաշտարարության՝ արբիտրաժը վեճերի արտադատական եղանակով լուծման առավել բարդ և ինստիտուցիոնալիզացված ձև է: Արբիտրաժի դեպքում վեճերը լուծում է երրորդ անձը՝ արբիտրը: Նա հանդես է գալիս որպես դատավոր, լսում է կողմերի փաստարկները, հետազոտում ներկայացրած

ապացույցները: Արբիտրաժն իր ընթացակարգով առավել նման է ոչ-ֆորմալ դատավարության: Սակայն, ի տարբերություն պետական դատարաններում վեճի լուծման, արբիտրաժում կողմերն իրենք են ընտրում իրենց վեճը լուծող արբիտրին կամ արբիտրներին, որոշում արբիտրաժի լեզուն, վայրը, վեճի լուծման նկատմամբ կիրառվելիք իրավունքը:

Արբիտրաժով իրենց վեճը լուծելու համար կողմերը պետք է հատուկ համաձայնություն կնքեն: Վեճը արբիտրաժին հանձնելուց հետո, նրանք այլևս չեն կարող հրաժարվել այդ համաձայնությունից: Արբիտրաժի կայացրած վճիռը պարտադիր է կողմերի համար: Այն կարող է բողոքարկվել դատարան միայն խիստ սահմանափակ դեպքերում:

Արբիտրաժային դատարանի ծառայություններ մատուցելու համար գործում են հատուկ ստեղծված ինստիտուցիոնալ կառույցներ: Օրինակ՝ ՀՀ բանկերի միությանը կից արբիտրաժը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից արբիտրաժը և այլն:

Սակայն կողմերը կարող են իրենք ընտրել մեկ այլ անձի, որի հեղինակությանն ու մասնագիտական գիտելիքներին վստահում են, որպեսզի նա հանդես գա որպես իրենց վեճը լուծող արբիտր՝ առանց դիմելու որևէ մասնագիտացված կառույցի:



Խնդիր 1.

Նահապետը ստոնարան է գնում, բայց տուն բերելուց հետո, պարզում է, որ լավ չի աշխատում: Նա վաճառողից պահանջում է գումարը հետ վերադարձնել, սակայն վերջինս հրաժարվում է: Նահապետը, գտնելով, որ դատական գործընթացները ավելորդ գլխացավանք են, որոշում է պատժել վաճառողին՝ հրկիզելով նրա խանութը:

Արդյո՞ք Նահապետը ճի՞շտ է վարվել: Ի՞նչ տեղի կունենա, եթե յուրաքանչյուրը փորձի նման կերպ լուծել իր վեճը: Իրավական ի՞նչ ճանապարհներով Նահապետը կարող է հետ ստանալ իր գումարը:

Խնդիր 2. Որո՞նք են ստորև նշված վեճերի լուծման լավագույն եղանակները.

- 1) Մեքենայի հայրը համաձայնում է վճարել իր ուսման վարձը, սակայն հետագայում հրաժարվում է դա անել:
- 2) Շաքեն զգեստ է գնում խանութից, սակայն տանը պարզում է, որ կտորը թերություններ ունի: Վաճառողը հրաժարվում է հետ տալ գումարը:
- 3) Գործատուն հրաժարվում է բարձրացնել Նարեկի աշխատավարձը և բարելավել նրա աշխատանքային պայմանները:
- 4) Ամուսնացած զույգը ցանկանում է ամուսնալուծվել և բաժանել իրենց ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը:
- 5) «Ա» ընկերությունը 100 տոննա հացահատիկի մատակարարման պայմանագիր է կնքել «Բ» ընկերության հետ, սակայն վերջինս 1 օր ուշացումով մատակարարել է միայն 90 տոննա ապրանք: «Ա» ընկերությունը հրաժարվել է ընդունել ապրանքը, որի արդյունքում այն, մնալով անձրևի տակ, փչացել է:

2.7. Փաստաբանությունը

2.7.1. Ո՞վ է փաստաբանը

Այն դեպքում, երբ անձը իրավաբանական խնդիր ունի, դատարան դիմելու կամ դատավարության մասնակցելու կարիք ունի, շատ կարևոր է իրավաբանի մասնագիտական օգնությանը դիմելը:

Հարկ է իմանալ, որ իրավաբանական գործունեության մեջ առանձնացվում է իրավապաշտպան գործունեության առանձին տեսակ, որն իրականացնում են միայն փաստաբանները: Վերջիններս անձին տրամադրում են իրավաբանական օգնություն՝ իրականացնելով նրա իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանություն:

Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

Իրավաբանական օգնությունը ներառում է՝

- խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում,
- ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Հարկ է նկատել, որ փաստաբանի դերը տարբեր է քրեական և քաղաքացական, վարչական ու այլ գործերով: Քրեական գործերով փաստաբանը կոչվում է պաշտպան և իրականացնում է կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի պաշտպանությունը մեղադրանքից: Քաղաքացիական և վարչական գործերով փաստաբանը ոչ միայն հանդես է գալիս դատարանում, այլ նաև կարող է միայն խորհրդատվություն տրամադրել անձանց նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, իրականացնել փաստաթղթերի ուսումնասիրում, փաստաթղթերի կազմումը, իր վստահորդի անունից հանդես գալ պետական և այլ մարմիններում՝ ներկայացնելով վստահորդի շահերը:

2.7.2. Ինչպե՞ս ստանալ իրավաբանական օգնություն

Փաստաբանին պետք է դիմել ոչ թե այն դեպքում, երբ անձն արդեն որոշակի իրավական խնդիր ունի լուծելու, այլ մինչև խնդրի առաջացումը, որպեսզի գրագետ իրավական խորհրդատվության միջոցով կանխվի հետագա իրավական խնդիրների առաջացումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առանձին դեպքերում պարտադիր է համարում փաստաբանին դիմելը:

Այսպես, անձին միշտ էլ կարող է անձամբ գնալ դատարան և ներկայացնել իր շահերը: Սակայն իր փոխարեն դատարանում անձին կարող է ներկայացնել միայն փաստաբանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ծառայությունն իրավաբանի կամ այլ մասնագետի կողմից մատուցվում է ոչ պարբերաբար կամ անվճար հիմունքներով կամ տրամադրվում է, մասնավորապես՝ մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար: Օրինակ՝ հարևանը, որն իրավաբան չէ, կարող է ներկայացնել իր հարևաններից մեկին մի դատավարության ընթացքում, սակայն դա չի կարող անել պարբերաբար կամ վճարովի հիմունքներով:

Մինչդեռ քրեական գործերով պաշտպանությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը:

Այն դեպքում, երբ անձը բավարար միջոցներ չունի իրավաբանական օգնություն ստանալու համար, գոյություն ունեն մի շարք մեխանիզմներ նման օգնություն անվճար ստանալու համար:

Այսպես, անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված է հատուկ մարմին՝ Հանրային պաշտպանի գրասենյակ: Հանրային պաշտպանի գրասենյակը

փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որի մեջ մտնող հանրային պաշտպանները, վարձատրվելով պետական բյուջեի միջոցների հաշվին, տրամադրում են անվճար իրավաբանական օգնություն:

Քրեական գործերով, ելնելով կասկածյալի կամ մեղադրյալի գույքային դրությունից, քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել նրան անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին:

Քաղաքացիական և այլ տեսակի գործերով անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է հետևյալ անձանց՝

- Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին,
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին,
- դատապարտյալներին,
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին,
- Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին,
- գործազուրկներին,
- միայնակ բնակվող կենսաթոշակառուներին,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,
- փախստականներին,
- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին,
- անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց,
- հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:

Սակայն վերոնշյալ անձանց անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել.

- ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով),
- նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ,
- եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար անձը կարող է դիմել նաև տարբեր իրավաբանական կլինիկաներ, որոնք գործում են համալսարանների շրջանակում: Փաստաբանների պալատը ևս իրականացնում է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու առանձին ծրագրեր:

2.7.3. Ինչպե՞ս գտնել փաստաբան. փաստաբան-վստահորդ հարաբերությունները

Հայաստանի Հանրապետությունում բոլոր փաստաբանները հանդիսանում են Փաստաբանների պալատի անդամ և սահմանված չափով մուծում են անդամավճար:

Փաստաբանների պալատի կայքում՝ www.advocates.am, տեղադրված են արտոնագրված փաստաբանների տվյալները՝ ըստ իրենց մասնագիտացման ոլորտների:

Փաստաբան գտնելուց բացի, հետագա աշխատանքի տեսանկյունից շատ կարևոր է իրավաբանին մի շարք ճիշտ հարցեր տալը: Եթե Դուք գտել եք փաստաբան, որը համաձայն է ստանձնել Ձեր գործը, ապա հաջորդ քայլին պետք ստանաք առնվազն հետևյալ հարցերի պատասխանները.

- Որքան է տվյալ փաստաբանի ծառայության վճարը,
- արդյո՞ք փաստաբանը նախկինում զբաղվել է նման տեսակի գործերով և ի՞նչ արդյունքներ է ունեցել,
- արդյո՞ք փաստաբանը Ձեզ տրամադրելու է Ձեր անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերի և հաղորդագրությունների օրինակները,
- արդյո՞ք փաստաբանը Ձեզ տեղյակ է պահելու գործի զարգացումներից և բացատրելու է գործի ընթացքը:
- Եթե փաստաբանը փաստաբանական գրասենյակի անդամ է, արդյո՞ք նա անձամբ է զբաղվելու գործով, թե՞ գրասենյակի մեկ այլ փաստաբան:

Փաստաբանի և նրա հաճախորդի /վստահորդի/ հարաբերությունների հիմքում ընկած է վստահությունը: Դուք պետք է կարողանաք վստահել Ձեր փաստաբանին: Որպեսզի փաստաբանը Ձեզ օգնի, նա պետք է Ձեր խնդրի մասին ամեն ինչ իմանա: Վստահորդի և նրա փաստաբանի միջև անկաշկանդ հաղորդակցությունը խրախուսելու համար օրենքը փաստաբանական գաղտնիք է համարում և պաշտպանում է ցանկացած տեղեկություն և ապացույց, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը ձեռք է բերել ինքնուրույն: Փաստաբանը, փաստաբանի մոտ աշխատող ոչ փաստաբանը իրավունք չունի հրապարակելու փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ եթե.

- առկա է վստահորդի համաձայնությունը,
- դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում կամ կարգապահական վարույթում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար:

Սակայն փաստաբանը պարտավոր է հրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

Եթե փաստաբանն իր վստահորդի հետ հարաբերություններում խաբում է նրան, թերանում է իր աշխատանքում, կատարում է վստահորդի շահերին հակասող գործողություններ կամ այլ կերպ խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, ապա անձը կարող է դիմել Փաստաբանների պալատ՝ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու համար: Փաստաբանների պալատի խորհուրդը կքննի գործը և, կանոնագրքի խախտում հայտնաբերելու դեպքում, փաստաբանը կենթարկվի կարգապահական պատասխանատվության:



Խնդիր 1.

Ստորև ներկայացված են տարբեր իրավիճակներ, որոնց ժամանակ կարող է պահանջվել փաստաբանի օգնություն: Յուրաքանչյուր դեպքի համար քննարկեք, թե ինչո՞ւ է անհրաժեշտ կամ ոչ փաստաբանի ներգրավումը:

- 1) Նարեկն իր ավտոմեքենայով վթարի է ենթարկվում՝ հարվածելով խանութին և վնասելով այն:
- 2) Շաքեն, առանց հոր իմացության, վերցնում է նրա ավտոմեքենան, իսկ հայրը,

մտածելով, որ այն առևանգել են, դիմում է ոստիկանություն:

- 3) Նարեկը ցանկանում է ամուսնալուծվել:
- 4) Անահիտը ցանկանում է կտակ կազմել:
- 5) Նահապետը որոշում է վաճառել իր բնակարանը:

Խնդիր 2.

Նահապետն ազատամարտիկ է և մասնակցել է Շուշիի ազատագրմանը: Նա դատարանում քննվող վեճ ունի իր հարևանների հետ՝ հողամասի օգտագործման հետ կապված:

- *Արդյո՞ք Նահապետը կարող է անձամբ հանդես գալ դատարանում և ներկայացնել իր շահերը:*
- *Նահապետը բավարար միջոցներ չունի փաստաբան վարձելու համար: Արդյո՞ք Նահապետը կարող է ստանալ անվճար իրավաբանական օգնություն: Եթե այո՝ ինչպե՞ս և ո՞ւմ կարող է նա դիմել:*
- *Նահապետի հարևանը իրավաբան է, սակայն փաստաբան չէ: Վերջինս առաջարկում է Նահապետին անվճար հիմունքներով ներկայացնել Նահապետի շահերը դատարանում: Արդյո՞ք Նահապետի հարևանն իրավունքն ունի Նահապետի անունից հանդես գալ դատարանում:*

Խնդիր 3.

Քննարկեք, թե արդյոք ստորև բերված օրինակներից յուրաքանչյուրում արդյո՞ք անձը կարող է հավակնել անվճար իրավաբանական օգնության: Եթե ոչ՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու ի՞նչ այլընտրանքներ կան:

- 1) Նարեի ամուսինը դեռևս 2 տարի առաջ մեկնել է արտագնա աշխատանքի, իսկ դրանից հետո լուր չունի իրենից: Նարեն ցանկանում է ամուսնալուծվել: Նրա ամսական եկամուտը կազմում է 30.000 ՀՀ դրամ, իր խնամքին ունի 3 անչափահաս երեխա:
- 2) Նարեկի հարևանները Միրիայում տիրող պատերազմական իրավիճակի պատճառով արտագաղթել են Հայաստանի Հանրապետություն և ստացել ժամանակավոր ապաստան: Նրանք ունեն իրավաբանական խորհրդատվության կարիք՝ իրենց կացության կարգավիճակի հետ կապված հարցերի շուրջ:
- 3) Անահիտը երկրորդ խմբի հաշմանդամ է: Նա աշխատանքային վեճ ունի իր գործատուի հետ: Նախքան մեկ ամիս առաջ հաշմանդամություն ձեռք բերելը՝ նրա ամսական աշխատավարձը կազմել է 500.000 ՀՀ դրամ: Նա բնակվում է միայնակ՝ իր սեփական բնակարանում, իսկ իրեն պատկանող մեկ այլ բնակարան տրամադրել է վարձակալության: Նրա որդիներն ապրում են ԱՄՆ-ում և ֆինանսապես ևս օժանդակում են Անահիտին:

Հարցեր.

- 1) Ինչո՞ւ է անհրաժեշտ դիմել փաստաբանի օգնության:
- 2) Որո՞նք է փաստաբանի կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակները:
- 3) Ո՞վ կարող է ներկայացնել անձի շահերը դատարանում:
- 4) Ինչո՞վ են տարբերվում իրավաբանը, փաստաբանը և պաշտպանը:
- 5) Ո՞վ է հանրային պաշտպանը:
- 6) Անձն ինչպե՞ս կարող է դառնալ փաստաբան:
- 7) Եթե Ձեզ անհրաժեշտ է փաստաբան, ինչպե՞ս կարող եք գտնել նրան:

Դերախաղ. Ավտոմեքարի գործը

2014 թվականի հունվարի 1-ին Նարեկը մեքենան վարում էր Բաղրամյան պողոտայով: Մոտենալով Մոսկովյան Բաղրամյան խաչմերուկի լուսափորին՝ Նարեկը մեքենան դանդաղեցրեց, և 2010 թվականի արտադրության Շաքեի Գոլֆ ավտոմեքենան բախվեց մեքենայի հետևին: Նարեկի 2011 թվականի արտադրության Մազդա ավտոմեքենայի հետևի նստատեղն ամբողջությամբ վնասվեց: Նարեկը մեքենան տանում է արհեստավորի մոտ, որը պահանջում է 100.000 ՀՀ դրամ այն վերանորոգելու համար:

Շաքեն պնդում է, որ Նարեկի մեքենայի արգելակման լույսը չի աշխատել, որի պատճառով էլ նա չի նկատել, որ Նարեկը դանդաղեցնում է ընթացքը: Շաքեին տուգանում են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար: Նարեկի ապահովագրական ընկերությունը նրան առաջարկում է վճարել միայն 50.000 ՀՀ դրամ՝ պատճառաբանելով, որ վթարի մեջ առկա է եղել նաև Նարեկի մեղքը, քանի որ նրա արգելակման լույսերը չեն աշխատել: Նարեկը վստահ չէ՝ համաձայնվել և առաջարկին, թե՞ ոչ, ուստի դիմում է փաստաբանի խորհրդի:

Կազմակերպեք դերախաղ Նարեկի և նրա փաստաբանի միջև: Մի խումբը, որը փաստաբանի դերն է կատարում, պետք է տա փաստաբանին տրվող հնարավոր հարցերը: Մյուս խումբը, որը կատարում է Նարեկի դերը, պետք է պատասխաններ տա փաստաբանի հարցերին և նրան ներկայացնի իր հարցերն ու տեղեկությունները, որոնք, ըստ իրենց, կարևոր են գործի համար:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԳԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները մեծաթիվ են և խիստ բազմազան: Իրավունքների և ազատությունների այդ բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է դրանք խմբավորել, դասակարգել՝ ըստ որոշակի հատկանիշների: Մարդու հիմնարար իրավունքները հիմնականում խմբավորում են՝ ըստ դրանց բովանդակության: Այս առումով իրավունքները և ազատությունները բաժանվում են 3 հիմնական խմբի՝

- անձնական կամ քաղաքացիական իրավունքներ և ազատություններ,
- քաղաքական իրավունքներ և ազատություններ,
- սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքներ:

3.1. Կյանքի իրավունք

Մարդու իրավունքների և ազատությունների առաջին խմբի՝ անձնական իրավունքների և ազատությունների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում կյանքի իրավունքը: Կյանքի իրավունքը մարդուն ի ծնե պատկանող, բնական և անօտարելի իրավունք է, այսինքն՝ ոչ ոք չի կարող մարդուն զրկել կյանքից: Այս կարևորագույն իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային-իրավական ակտերով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և Քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և այլն: ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածում ամրագրված և երաշխավորված է կյանքի իրավունքը: Սահմանադրությամբ արգելվում է մահապատիժ իրականացնելը:

Այս իրավունքը պարտավորեցնում է պետությանը ձեռնարկելու և իրականացնելու այնպիսի միջոցառումներ, որոնք ոչ միայն մարդու համար կապահովեն անվտանգ կյանք, այլ նաև մեծապես կնպաստեն մարդու համար բարեկեցիկ կենսապայմանների ստեղծմանը:

Կյանքի իրավունքը քննարկելիս՝ այս իրավունքի բովանդակությունը համակողմանիորեն բացահայտելու համար անհրաժեշտ է այն քննարկել մի քանի ասպեկտներով, մասնավորապես՝

- մահապատիժը և կյանքի իրավունքը,
- էֆթանազիան և կյանքի իրավունքը,
- պատերազմական գործողությունների ժամանակ հովանավորվող անձինք և կյանքի իրավունքը,
- կյանքի իրավունքը և հղիության արհեստական ընդհատումը

3.1.1. Մահապատիժը և կյանքի իրավունքը

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում էր, որ մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար: 2005 թվականին կատարված սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանադրական նշյալ դրույթը փոփոխվեց, և մեր երկիրն իր կամքն արտահայտեց մահապատժի վերացման վերաբերյալ:

3.1.2. Էֆթանազիան և կյանքի իրավունքը

Կյանքի իրավունքը սերտորեն առնչվում է էֆթանազիայի ինստիտուտի հետ: Էֆթանազիան հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումն է որևէ գործողությամբ և միջոցներով: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետությունում արգելում է էֆթանազիան: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էֆթանազիայի կամ իրականացնում են այն՝ կրում են պատասխանատվություն: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգիրքը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է նախատեսում հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը:


Բոլոր դեպքերում էֆթանազիայի նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չի ընկալվում հասարակության մեջ: Արդյո՞ք կյանքի իրավունքը պետք է դիտել մարդու՝ ապրելու պարտականություն, թե հնարավոր է նաև կյանքից ինքնակամ հրաժարվել: Մրանք հարցեր են, որոնց շուրջ քննարկումները երբեք չեն կորցնում իրենց արդիականությունը:

3.1.3. Պատերազմական գործողությունների ժամանակ հովանավորվող անձինք և կյանքի իրավունքը

Կյանքի իրավունքը պաշտպանվում է նաև պատերազմական գործողությունների ժամանակ: Մասնավորապես՝ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը չի կարող քրեորեն հետապնդվել պատերազմական գործողությունների ժամանակ, եթե այն ուղղված է հակառակորդ բանակի մարտնչող կազմի դեմ: Ժնևյան կոնվենցիաները հստակ սահմանում են պատերազմական գործողությունների ժամանակ հովանավորվող անձանց շրջանակը, որոնց կյանքի դեմ ուղղված ոտնձգությունները պատժվում են ինչպես միջազգային մարդասիրական իրավունքին, այնպես էլ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան: Ըստ այս դաշնագրերի՝ հովանավորվող անձանց մեջ են մտնում գործող բանակներում վիրավորներն ու հիվանդները, ծովում զինված ուժերի վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները, ռազմագերիները, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչությունը:

3.1.4. Հղիության արհեստական ընդհատումը և կյանքի իրավունքը

Կյանքի իրավունքն անձին պատկանում է ոչ թե ծննդյան պահից, այլ սաղմնային զարգացման որոշակի փուլից: Հետևաբար, կյանքի իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունն առաջ է գալիս հղիության ընդհատման գործընթացում: Այսպես, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 1116-Ն որոշման համաձայն՝ հղիության արհեստական ընդհատում թույլատրվում է կատարել մինչև 12 շաբաթական հղիության ժամկետում, և միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում ավելի ուշ ժամկետում, մասնավորապես՝ մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատում: Մինչև 22 շաբաթական ժամկետը հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է ինչպես բժշկական բնույթի հակացուցումների /օրինակ՝ ինֆեկցիոն հիվանդություններ/ առկայության, այնպես էլ կնոջ սոցիալական կարգավիճակի հետ կապված հիմքերի առկայության դեպքում /օրինակ՝ հղիության ընթացքում ամուսնու մահը, կնոջ կամ ամուսնու ազատագրկման վայրում գտնվելը, ամուսնալուծությունը հղիության ընթացքում, հղիություն բռնաբարությունից հետո/ կնոջ համաձայնությամբ: Մնացած դեպքերում հղիության արհեստական ընդհատումն արգելվում է: ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի աբորտ կատարելու համար:



Խնդիր 1.

Անահիտը դիմում է իր ծանոթ բժշկին աղջկա հղիությունն արհեստականորեն ընդհատելու խնդրանքով: Նա բժշկին պատմում է, որ աղջկա ընտանիքն ապրում է ծանր նյութական պայմաններում, ամուսինը չի աշխատում, նրանք ունեն անչափահաս ևս 3 երեխա: Բժիշկը որոշակի գումարի դիմաց համաձայնվում է հղիությունն ընդհատել:

Գնահատե՛ք բժշկի գործողությունները կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:

Խնդիր 2.

Նարեն տառապում է անբուժելի հիվանդությամբ, որն ուղեկցվում է անմարդկային ցավերով: Ուժեղ ցավազրկողներն անգամ նրան չեն օգնում: Նա խնդրում է իր բժշկին իրեն դեղի մահաբեր չափաբաժին ներարկել: Բժիշկը կտրականապես մերժում է: Սակայն հերթական նույնի ժամանակ բժիշկը, չկարողանալով տանել նրա տառապանքները, տեղի է տալիս:

Գնահատե՛ք բժշկի գործողությունները կյանքի իրավունքի համատեքստում:

3.2. Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելք

Մարդու անձնական կամ քաղաքացիական իրավունքների շարքում առանձնանում է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելքի իրավունքը: Այն անհատի կյանքի, արժանապատվության և անձեռնմխելիության իրավունքների իրականացման ապահովման կարևոր երաշխիքներից է: Այս իրավունքն ամրագրված է Սահմանադրության 17-րդ հոդվածում, ըստ որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող

վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի, առանց իր համաձայնության, ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

Խոշտանգում է համարվում այն արարքը, որը կատարվել է դիտավորությամբ, հետապնդել է կոնկրետ նպատակ, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տանջանք է պատճառել անձին: Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն այն վերաբերմունքն է, որն անձի մոտ առաջացնում է վախի, տագնապի զգացում, ունակ է ստորացնելու նրան և դրսևորվել է նվազ դաժանությամբ: Խոշտանգում չեն դիտվում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից: Օրինակ՝ անձին ազատազրկման դատապարտելը ուղեկցվում է նրան հոգեկան տառապանքներ պատճառելու հետ, սակայն նման իրավիճակը չի կարող դիտվել խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի լույսի ներքո:

Արարքը նվաստացնող կամ անմարդկային որակելը պրակտիկայում բավականին դժվար է, քանի որ այն սերտորեն կապված է սուբյեկտիվ այնպիսի կատեգորիայի հետ, ինչպիսին մարդու արժանապատվությունն է: Իսկ արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որ հավասարազոր է հարգվելու իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականության:

Սահմանադրական այս իրավունքի հիման վրա քրեական օրենսդրությունը, հենվելով մարդասիրության և այլ սկզբունքների վրա, ամրագրում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում խոշտանգման համար՝ բնորոշելով այն որպես ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի արժանապատվությունը առավել հաճախ կարող է խախտվել պաշտոնատար անձանց արարքների արդյունքում, քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելու համար:

Պատշաճ վերաբերմունքի արժանի են ոչ միայն ազատ մարդիկ, այլ նաև ձերբակալվածները, քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորվածներն և դատապարտվածները: Ընդ որում, անազատության մեջ գտնվող անձինք առավել հաճախ են ենթարկվում խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի: Այս առումով պետության պարտականությունն է իրավական լծակների և կազմակերպաիրավական միջոցառումների միջոցով ապահովել այդ կատեգորիայի անձանց արժանապատվության իրավունքը: Մասնավորապես՝ քրեական իրավունքն ազդարարում է, որ պատիժը մեր երկրում ունի դաստիարակչական և նախականիչ բնույթ, այն միտված է սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձին ուղղելուն, ինչպես նաև հանցագործությունների կանխմանը: Քրեական դատավարության օրենսդրությունը ևս սահմանում է, որ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ռոտահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների

միջոցով: Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողություններ կատարելուն:

Ազգային ժողովը 2002 թվականին ընդունել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են ձերբակալված և կալանավորված անձանց կալանքի տակ պահելու սկզբունքները, այս կատեգորիայի անձանց իրավական կարգավիճակը, նրանց իրավունքները և պարտականությունները, փաստաբանի, մերձավոր ազգականների հետ տեսակցությունների կարգը և ժամկետները և այլն: Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրել, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ: Անազատության մեջ գտնվող անձանց արժանապատվությունը խոշտանգումներից, դաժան կամ անմարդկային վերաբերմունքից զերծ պահելու պարտականությունը դրված է , նախ և առաջ, իրավապահ մարմինների վրա՝ հետաքննության, նախաքննության մարմիններ, դատախազություն, դատարաններ: Պետությունը, ի դեմս այս սուբյեկտների, կրում է նշյալ անձանց արժանապատվությունը պաշտպանելու պարտականություն: Ընդ որում, այստեղ կարևորվում է ոչ միայն նշյալ սուբյեկտների վերաբերմունքը, այլ նաև այն պայմանները, որոնցում պահվում են նշյալ կատեգորիայի անձինք: Ուղղիչ հիմնարկներում ապրելու պայմանները պետք է լինեն այնպիսին, որ չհանգեցնեն անազատության մեջ գտնվող անձանց արժանապատվության ոտնահարմանը:



Հարցեր.

- 1.Տվե՛ք խոշտանգում, նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք եզրույթների բովանդակային սահմանումները:*
- 2.Որո՞նք են այս իրավունքի իրականացումն ապահովող քրեական և քրեադատավարական երաշխիքները:*

Խնդիր 1.

Նարեկին ազատագրկման դատապարտելու հետևանքով նրա ընտանիքը քայքայվեց: Կինը բաժանվեց, մայրը մահացավ: Նարեկը գտնում էր, որ իր նկատմամբ դրսևորած անմարդկային վերաբերմունքն է ստեղծված իրավիճակի պատճառը: Նա ցանկանում է դիմել դատական ատյանների՝ Սահմանադրության 17-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքի պաշտպանության նպատակով:

Իրավացի՞ է արդյոք Նարեկը:

Խնդիր 2.

Նահապետն իր պատիժն է կրում ազատագրկման վայրում: Նրա խցում նրա հետ միասին իրենց պատիժն են կրում ևս 4 դատապարտյալներ: Խուցը չունի պատուհան, նեղվածքի պատճառով խցում դրված է 3 մահճակալ, և դատապարտյալները հերթով են հանգստանում:

Գնահատե՞ք իրավիճակը, առկա՞ է արդյոք անմարդկային վերաբերմունքի դրսևորում:

Խնդիր 3.

Նարեն քրեական գործով հարցաքննվում էր որպես վկա: Ժամերն անցնում էին, սակայն հարցաքննության ավարտը չէր ուրվագծվում: Նարեն, ով սրտի հետ կապված խնդիրներ ուներ, սկսում է իրեն վատ զգալ, քանի որ դեղերն ընդունելու ժամն անցել էր: Այդ մասին հայտնելով հետաքննության մարմնին՝ նա խնդրեց հետաձգել հարցաքննությունը:

Հետաքննության մարմինը նրան մերժեց՝ պատճառաբանելով, որ ժամանակը խիստ սուղ է, նրա տված ցուցմունքների հիման վրա ինքը պետք է հնարավորինս արագ խուզարկություն իրականացնի:

Գնահատեք այս իրավիճակը:

3.3. Անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք

Բոլոր մարդիկ

ծնվում են ազատ և հավասար

արժանապատվությամբ և իրավունքներով:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես և կյանքի իրավունքը, անձին ի ծնե պատկանող, անօտարելի և բնական իրավունքն է, որին համապատասխանում է պետության պարտականությունը, այն է՝ համապատասխան իրավական լծակներով և կազմակերպաիրավական միջոցառումներով ապահովել այդ իրավունքի անարգել իրականացումը: Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը նշանակում է, որ անձն ազատ է տնօրինել իր գործողությունները, ազատ ժամանակն այնպես, ինչպես ինքն է ցանկանում, սակայն այդ ազատությունը չպետք է վնասի որևէ մեկին: Անձի անձեռնմխելիությունը ենթադրում է անձի նկատմամբ կամայական ցանկացած բնույթ կրող միջամտության արգելք:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

- 1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից,
- 2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը,
- 3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով,
- 4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած կամ, երբ այն անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով,
- 5) անչափահասին դատախարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով,
- 6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով,
- 7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Անձը կարող է ազատությունից զրկվել միայն օրենքով սահմանված կարգով, իսկ ազատությունից զրկվելու դեպքերը սպառիչ սահմանված են Սահմանադրությամբ: Այսինքն, որևէ ենթաօրենսդրական ակտով, պետական այս կամ այն պաշտոնյայի որոշման հիման վրա անձը չի կարող զրկվել ազատությունից:

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև

մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Այսինքն, ձերբակալման հետևանքով անձն անազատության մեջ կարող է մնալ ընդամենը 3 օր, որից հետո կամ պետք է դատարանի որոշմամբ կալանավորվի, կամ պետք է անհապաղ ազատ արձակվի:

Սահմանադրությունն ուղղակիորեն սահմանում է, որ չի կարելի մարդուն ազատությունից զրկել իր քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու հիմքով: Այսինքն, եթե անձը տարբեր պատճառներով ի վիճակի չէ կատարելու իր քաղաքացիաիրավական պարտավորությունները, նա կարող է ենթարկվել ազատազրկման հետ չկապված այլ պատժի և պատասխանատվության:

Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Քրեական դատավարության օրենսդրությունը, երաշխավորելով անձի անձեռնմխելիության իրավունքը, մանրամասն կանոնակարգում է խուզարկություն կատարելու կարգը և պայմանները: Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար: Խուզարկությունը կատարվում է ընթերականների մասնակցությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ևս կանոնակարգում է անձնական զննությանն առնչվող հիմնախնդիրները: Մասնավորապես սահմանվում է, որ անձնական զննություն կարող են կատարել ոստիկանության, մաքսային մարմինները, ինչպես նաև օրենսդրությամբ լիազորված այլ պաշտոնատար անձինք: Ընդ որում, անձնական զննություն կարող է կատարել զննության ենթարկվողի հետ նույն սեռին պատկանող լիազորված անձը՝ նույն սեռին պատկանող երկու ընթերականների ներկայությամբ: Միաժամանակ, անձնական զննությունը, դրա արդյունքում իրերն ու փաստաթղթերը վերցնելը կարող են շահագրգռված անձի կողմից գանգատարկվել վերադաս մարմնին (պաշտոնատար անձին) կամ դատախազին:

Անձի խուզարկությունը /զննությունը, քննումը/ պետք է տարբերակել անձնական այն զննությունից, որը կապված չէ անձի կողմից իրավախախտում կատարելու փաստի կամ դրա հիմնավոր կասկածի հետ: Այսպես, օրինակ՝ ՀՀ դատական օրենսգրքում սահմանված կարգով դատական կարգադրիչն իրավունք ունի զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց:



Հարցեր

- *Տվե՛ք անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանումը:*
- *Ներկայացրե՛ք անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմքերը:*

Խնդիր 1.

Գողություն կատարելու կասկածանքով քննիչը ձերբակալել է Նարեկին: Նարեկն անազատության մեջ է գտնվում 4 օր: Քննիչի պատճառաբանությամբ՝ դատարանի որոշումը Նարեկին կալանավորելու վերաբերյալ ուշանում է դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Գնահատե՛ք իրավիճակը:

Խնդիր 2.

Նարեն չի կարողանում վերադարձնել փոխառության պայմանագրով Անահիտից վերցված գումարը: Դիմելով դատարան՝ Նարեն պահանջում է զրկել Անահիտին ազատությունից՝ պատճառաբանելով, որ անազատության մեջ Անահիտը խելքի կգա և կկատարի իր պայմանագրային պարտավորությունները:

Գնահատե՛ք իրավիճակը:

Խնդիր 3.

Դատարանը որոշում է կայացրել Նահապետին որպես վկա գործող վարույթին ներգրավելու համար: Դատարանի որոշումը ստանալուց հետո, որտեղ Նահապետը ծանուցված էր դատական նիստի ժամի և տեղի մասին, Նահապետն այդպես էլ չներկայացավ դատարան՝ ցուցմունք տալու: Դատարանը որոշում կայացրեց Նահապետին բերման ենթարկելու վերաբերյալ:

Արդյո՞ք Նահապետի ազատությունը սահմանափակվում է դատարանի որոշմամբ, եթե այո, ապա իրավաչա՞փ է նման սահմանափակումը, թե՛ ոչ:

Խնդիր 4.

Նարեկը տարված է թմրամոլությամբ: Նրա և կնոջ հարաբերությունները խիստ լարված են: Նարեկը պարբերաբար ծեծում է կնոջը: Կինը սպառնում է նրան, որ կղիմի դատարան, և վերջինը Նարեկին, որպես թմրամոլի, կմեկուսացնի հասարակությունից:

Հիմնավո՞ր ք են կնոջ սպառնալիքները:

Խնդիր 5.

Նահապետը մեկնում է Ռուսաստանի Դաշնություն որդու մոտ: Օդանավակայանում ինքնաթիռ նստելուց առաջ օդանավակայանի աշխատակիցը, մոտենալով Նահապետին, հայտնում է, որ Նահապետը պետք է անձնական գնության ենթարկվի: Նահապետը պահանջում է դատարանի համապատասխան որոշումը իրեն գնության ենթարկելու վերաբերյալ:

Գնահատե՞ք իրավիճակը:

3.4. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Մարդու անձնական իրավունքների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքն անձի անձնական և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրականացումն ապահովող կարևորագույն երաշխիքներից է: Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կայանում է նրանում, որ առանց օրինական հիմքերի ոչ ոք իրավունք չունի մուտք գործել բնակարան՝ առանց այնտեղ ապրողների համաձայնության:

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

«Բնակարան» եզրույթը լայն բովանդակություն ունի: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է «բնակարան» եզրույթի մեջ մտնող տարրերի շրջանակը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն՝ **բնակարանը**

դա շենք կամ շինություն է, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար նրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

Այսպիսով, բնակարանը, օրենսդրությամբ սահմանված իր տարրերով հանդերձ, անձեռնմխելի է շրջապատի համար: Բնակարանն այն տարածքն է, որը հեռու է պահում անձին օտար աչքից, հնարավորություն է տալիս լիարժեք հանգստանալու, մեկուսանալու արտաքին աշխարհից՝ մնալով իր մտորումների և հետաքրքրությունների հետ: Այդ անձեռնմխելիությունը կարող է խախտվել բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում:

Այսպես, քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է մարդու կամքին հակառակ նրա բնակարան մուտք գործելու երկու կարգ՝ բնակարանի խուզարկություն և բնակարանի զննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելը՝ այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ: Ընդ որում, եթե բնակարանի խուզարկությունն իրականացվում է բացառապես դատարանի որոշման հիման վրա, երբ քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար, ապա բնակարանի զննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելը քրեական դատավարության ընթացքում կարող են կատարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը ոստիկանությանն իրավունք է վերապահում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հետապնդելիս, ինչպես նաև հետաձգում չհանդուրժող այլ դեպքերում մուտք գործելու բնակարաններ, շինություններ, տարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով:

Բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործելուց հետո կազմվում է արձանագրություն, որում հստակ նշվում են դրա գտնվելու վայրը, անհրաժեշտ գործողությունները կատարելու ավարտի օրը, ժամը, տարածքում կատարված բոլոր գործողությունները, այդ գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, բնակության վայրերը:

Արձանագրության մեկ օրինակը տրվում կամ ուղարկվում է բնակարանի, շինության, տարածքի կամ հողամասի սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին:

Եթե ոստիկանությունը բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք է գործել դրա սեփականատիրոջ կամ նրա լիազորած անձի բացակայությամբ, ապա անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործած անձանց կողմից պետք է ապահովվի դրա հետագա անվտանգությունը:

Եթե այս գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ, ապա ոստիկանությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում ծանուցում է դատախազին:

ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու կամքին հակառակ նրա բնակարանն ապօրինի մուտք գործելու համար:



Խնդիր 1.

Ոստիկանությունը տեղեկություն է ստանում առ այն, որ Նարեի բնակարանում կատարվում է հանցագործություն: Առանց դատարանի որոշման՝ ոստիկանության աշխատակիցները Նարեի կամքին հակառակ մուտք են գործում նրա բնակարան:

Գնահատե՛ք ոստիկանության գործողությունները:

Խնդիր 2.

Քննիչը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Անահիտի տանը գտնվում են հանցագործության գործիքներ և հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ: Նա որոշում է կայացնում Անահիտի բնակարանը խուզարկելու վերաբերյալ:

Իրավաչափ փ են քննիչի գործողությունները:

Խնդիր 3.

Ոստիկանության աշխատակիցները ներխուժում են Նարեկի բնակարան խուզարկություն կատարելու: Նարեկը պահանջում է իրեն ցույց տալ դատարանի որոշումը խուզարկության վերաբերյալ: Ոստիկանության աշխատակիցները հայտնում են՝ քանի որ Նարեկը տան սեփականատերը չէ, այլ ընդամենը վարձակալում է բնակարանը, այդ իսկ պատճառով իրենց անհրաժեշտ չէ դատարանի որոշումը:

Գնահատե՛ք իրավիճակը:

3.5. Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված են անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը երաշխավորող հիմնական իրավունքները, այն է.

- յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը,
- առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով,
- յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք,
- յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:
- յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

Յուրաքանչյուր անձ իր կենսագործունեությունը կազմակերպում է հիմնականում իր անձնական և ընտանեկան կյանքի շուրջ՝ ձևավորելով նեղ անձնական, ընկերական, բարեկամական, ընտանեկան հարաբերություններ, որոնց վերաբերյալ տեղեկատվություն

անձը միայն իր ցանկությամբ է օգտագործում, տարածում կամ թույլ տալիս, որ ինչ-որ մեկը դա անի: Սա մարդու կենսագործունեության այն մասն է, որին նա չի ցանկանում հաղորդակից դարձնել այլ անձանց: Ինչ-որ առումով դա համարվում է նրա անձնական աշխարհը: Անձի անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհատի արտահայտման և անհատականության պաշտպանության իրավունքն է: Այն կարող է ներառել՝ մարդու ոչ պաշտոնական շփումների շրջանակը, մարդու սեփական ներաշխարհը ընտանեկան կապերը, որդեգրման հետ կապված հարցերը, կրոնական համոզմունքները, հավատքը և այլն:

Օրինակ՝ անձը զբաղեցնում է պետական պաշտոն և ունի հանրային ճանաչում: Բնականաբար, նրա նկատմամբ հասարակության հետաքրքրությունը մեծ է, որի պատճառով, անգամ, երբ նա աշխատանքից հետո գնում է հանգստանալու, նրան հետապնդում են լրագրողները և ամենուր նկարահանում՝ անգամ ներթափանցելով նրա անձնական կյանք: Այնուհետև, հավաքելով մեծ քանակությամբ տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում այն տարածում են լրատվամիջոցներով: Տվյալ պարագայում մենք գործ ունենք անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման հետ:

Կամ, երբ անձի ընտանեկան դրության, ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկատվություն են հավաքում այլ անձինք, օգտագործում, տարածում, այս դեպքում էլ առաջանում է անձի ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտում:

Տեղեկատվությունը կարող է տարբեր կերպ արտահայտվել: Այն կարող է դրսևորվել տեսաձայնային կրիչի վրա (օրինակ՝ տեսահոլովակ), ձայնային կրիչի վրա (ձայնագրություն), լուսանկարի վրա, փաստաթղթի վրա և այլն: Բոլոր դեպքերում էլ, երբ ինչ-որ կրիչի վրա ամրագրվում է անձի անձնական կամ ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկատվություն, որը հետագայում օգտագործվում է նշյալ գործողություններից որևէ մեկի կատարման համար, ապա մենք գործ ունենք ոչ իրավաչափ վարքագծի հետ:

Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը, երաշխավորելով անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության այդ իրավունքը, սահմանում է, որ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

Հետևաբար, եթե ինչ-որ մեկը փորձում է հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել անձի վերաբերյալ տեղեկատվությունն, առանց այդ անձի կամքը հարցնելու, ապա չի հարգում նրա անձնական և ընտանեկան կյանքը, և տեղի է ունենում անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության սահմանադրական իրավունքի խախտում:

Անձի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելը, պահպանելը, օգտագործելը և տարածելը արգելվում է: Այդ արգելքը անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության ապահովման և այդ կյանքը հարգելու իրավունքի երաշխիքն է:

Միևնույն ժամանակ, սա ամենևին չի նշանակում, որ այդ գաղտնիությունը թաքցնում է ինչ-որ հակահասարակական արարք՝ լինի դա հանցագործություն, թե՛՝ զանցանք:

Օրինակ՝, եթե ամուսինը բռնություն է գործադրել իր կնոջ նկատմամբ, իսկ հարևանները տեսել են այդ ամենը և հայտնել իրավապահ մարմիններին, ապա իրավախախտ ամուսինը չի կարող վկայակոչել ընտանեկան կյանքի գաղտնիության իր իրավունքն ու հանդիմանել հարևանին, որ այդ մասին հայտնել է իրավապահ մարմիններին: Այստեղ, քանի որ ամուսնու գործողություններն ինքնին հանցագործություն են, ընտանեկան կյանքի գաղտնիության մասին խոսք լինել չի կարող, իսկ հարևանը կատարել էր տվյալ պարագայում օրենքով սահմանված իր պարտավորությունը և այդ մասին հայտնել էր ոստիկանություն:

Եթե անձը գիտի, որ մեկ այլ անձ փորձելու է ինքնասպան լինել և այդ մասին չի հայտնում համապատասխան մարմիններին կամ նրա հարազատներին, որպեսզի կանխվի ինքնասպանությունը, նա չի կարող արդարացնել իր վարքագիծը՝ պատճառաբանելով ինքնասպան լինել ցանկացող անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը:



Հարցեր

- Ի՞նչ է իրենից ներկայացնում անձնական կամ ընտանեկան կյանքը:
- Ի՞նչ է նշանակում անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունք:
- Ի՞նչ կերպ կարող է արտահայտվել տեղեկատվությունը:
- Ի՞նչ կերպ կարող է արտահայտվել անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտումը:
- Բերե՛ք անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտման մի քանի օրինակներ:

Խնդիր 1.

Միերն, իմանալով, որ իր ընկերներից Շաքեն, ով ապրում է հարևանությամբ, որդեգրված է և նրա ծնողները արյունակից ծնողները չեն, այդ մասին ասաց իր մյուս ընկերներին, իսկ նրանք էլ՝ իրենց ընկերներին: Այդ կերպ թաղամասում բոլորն իմացան այդ մասին: Այդ մասին իմացավ նաև Շաքեն, ով մինչ այդ ոչինչ չգիտեր: Նրա ծնողները հանդիմանեցին Միերին տեղեկատվության տարածման համար:

Արդյո՞ք այս իրավիճակում առկա է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտում:

Ո՞ր դեպքերում է թույլատրվում տարածել կամ ինչ-որ ձևով օգտագործել անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվությունը:

Խնդիր 2.

Փաստաբան Անահիտը դիմեց ամուսնությունները գրանցող պետական մարմին՝ Քաղաքացական կացության ակտերի գրանցման պետական գործակալություն, և խնդրեց իրեն տրամադրել տեղեկատվություն առ այն, թե արդյոք քաղաքացիներ Նարեկն ու Նարեն գտնվում են գրանցված ամուսնական հարաբերություններում, և եթե այո, ապա ո՞ր թվականին է գրանցվել ամուսնությունը: Փաստաբանը դիմումին կցեց օրենքով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև դիմումի մեջ հղում կատարեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին, որտեղ սահմանված է պետական մարմիններից տեղեկատվություն պահանջելու փաստաբանների իրավունքը: Դիմումում նշեց նաև, որ տեղեկատվությունը ներկայացվում է դատարան՝ քաղաքացիական գործի շրջանակում ամուսիններից մեկի իրավունքները ներկայացնելու համար:

Վերլուծե՛ք իրավիճակը:

Արդյո՞ք փաստաբան Անահիտն իրավունք ունի նման տեղեկատվություն պահանջել պետական այդ մարմնից:

Եթե մյուս ամուսինը առարկի պետական այդ գործակալության կողմից նման տեղեկատվության տրամադրմանը, փաստաբանն ինչպե՞ս կարող է ընդդիմանա առարկությանը:

Ո՞ր դեպքերում է հնարավոր սահմանափակել անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը:

3.6. Տեղեկատվություն ստանալու իրավունքը

ՀՀ Սահմանադրությունը բոլորին տալիս է իրավունք ծանոթանալու պետական (օրինակ՝ կառավարություն, նախարարություններ, մարզպետարաններ, անշարժ գույքի

պետական կադաստր, ոստիկանություն և այլն) և տեղական ինքնակառավարման (օրինակ՝ գյուղապետարաններ, քաղաքապետարաններ) մարմիններում գտնվող իրենց վերաբերյալ տեղեկատվությանը:

Երբ անձն իր վերաբերյալ տեղեկատվություն է պահանջում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, վերջիններս պարտավոր են, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, տրամադրել այն, բացառությամբ, եթե տեղեկատվությունը.

- պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք է,
- խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

- պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
- բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, փաստաբանական, նոտարական, նոտարական գաղտնիք և այլն),

- խախտում է հեղինակային իրավունքը կամ հարակից այլ իրավունքները:

Տեղեկատվություն ստանալու հիմնական ձևը տեղեկատվությունը համակարգող ռեեստրներին, արխիվներին կամ հանրային իշխանության մարմիններին ուղղված հարցումներն են և դրանց հիման վրա անհրաժեշտ փաստաթղթերին ծանոթանալը:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Սա նշանակում է, որ եթե անձը նկատել է, որ, օրինակ՝ իր վերաբերյալ ինչ-որ տեղեկատվական բազայում (պետական կամ մասնավոր) սխալ կամ ոչ հավաստի տեղեկատվություն է զետեղած, նա իրավունք ունի պահանջել, որ այդ տեղեկատվությունն անմիջապես շտկվի և տեղադրվի ճիշտ տեղեկատվությունը:

Օրինակ՝ իրավապահ մարմինների գործունեությունը լուսաբանող հեռուստահաղորդմամբ հաղորդվում է, որ քաղաքացի Կ-ն կասկածվում է հանցագործության կատարման մեջ և գտնվում է հետախուզման մեջ: Սակայն իրականում ոչ թե Կ-ն, այլ Ն-ն է կասկածվում հանցագործության կատարման մեջ: Կ-ն իրավունք ունի դիմել այդ հեռուստաընկերությանը և պահանջել, որ այդ տեղեկատվությունը շտկվի:

Սահմանադրությունը նաև նախատեսում է ապօրինի ձեռք բերված տեղեկատվության վերացման իրավունք, ինչը նշանակում է, որ եթե ինչ-որ մեկը ապօրինի եղանակով ձեռք է բերել տեղեկատվություն այլ անձի վերաբերյալ, ապա օրենքով սահմանված պատասխանատվությունից զատ, նա նաև պարտավորություն է ստանձնում առաջին իսկ պահանջի դեպքում վերացնել այդ տեղեկատվությունը:



Հարցեր

- *Ներկայացրեք, թե ի՞նչ պարտավորություններ և ո՞ւմ համար է դրանք առաջացնում անձի՝ իրեն վերաբերող տեղեկատվության հետ ծանոթանալու իրավունքը:*

- *Ո՞ր դեպքերում կարող է անձը պահանջել վերացնել իր վերաբերյալ տեղեկատվությունը:*

- *Ի՞նչ է ոչ հավաստի տեղեկատվությունը, և ի՞նչ կարող է անել անձը, եթե իր վերաբերյալ նման տեղեկատվություն է տարածվել:*

3.7. Հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

Այս իրավունքը երաշխավորում է անձանց միջև առանց գրաքննության կամ որևէ այլ անձի միջամտությամբ հաղորդակցության հաստատումը: Եթե պետությունը կամ իշխանություն կրող որևէ այլ սուբյեկտ փորձում է միջամտել ինչ-որ ձևով կամ վերահսկել այն, ապա դա անձի հիմնարար իրավունքների լուրջ խախտում է դիտարկվում:

Մինևույն ժամանակ, պետք է նկատել, որ սահմանադրական այս իրավունքը նույնպես ունի որոշակի սահմանափակումներ: Սահմանադրության մեկ այլ հոդված (հոդված 43) թույլ է տալիս նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է՝

- հասարակական կարգի պահպանության,
- հանցագործությունների կանխման,
- հանրության առողջության և բարոյականության պաշտպանության,
- այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի

համբավի պաշտպանության համար:

Այս իրավունքները կարող են ժամանակավորապես սահմանափակվել նաև ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Նման սահմանափակումներ կիրառելը պետք է հիմնավորված լինի: Սահմանափակումները և միջամտությունը մարդու անձնական կյանքին արդարացվում է, օրինակ՝ հանցավորության դեմ պայքարի նպատակներով:

Արտակարգ իրավիճակներում հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ հայտարարում է ՀՀ Նախագահը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ և ընդունելով համապատասխան որոշում:

Առանձին դեպքում հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել նաև դատարանի որոշմամբ՝ քրեական հետապնդումն իրականացնող մարմնի դիմումի հիման վրա:



Հարցեր

• Ի՞նչ հարաբերակցության մեջ են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության և անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքները:

• Ո՞ր դեպքերում է կարելի սահմանափակել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը:

• Ո՞ր պետական մարմինը կամ մարմիններն իրավունք ունի/ունեն սահմանափակելու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը:

Խնդիր 1.

Ոստիկանության քննիչը, հարևաններից լսելով, որ Նարեկը Եվրոպայում բնակվող իր ընկերներից ամեն շաբաթ նամակ է ստանում՝ կասկածելի բովանդակությամբ, Հայփոստ ընկերությանը պարտավորեցնելու որոշում է կայացնում, համաձայն որի՝ փոստային ծառայությունը Նարեկին ուղղված նամակները նախ պետք է հանձնի իրեն վերահսկողության նպատակներով, այնուհետև՝ միայն դրական արձագանք ստանալուց հետո, ուղարկի նրա հասցեով:

Որոշ ժամանակ անց Նարեկն իմանում է այդ մասին և դիմում է դատարան՝ պնդելով, որ քննիչը, նման որոշում կայացնելով, խախտել է իր սահմանադրական իրավունքը: Ըստ նրա՝ քննիչը նախ պետք է արտակարգ իրավիճակ հայտարարեր, այնուհետև՝ ընդուներ նման որոշում:

Խնդիր 2.

Երբ փոստատարը նամակները բաժանում էր բնակիչներին, նկատեց, որ շենքի բնակիչներից մեկի տանը մարդ չկա և, դիմելով նրա հարևանին, խնդրեց փոխանցել նամակը: Սակայն, մինչ այդ, անձամբ բացեց նամակը՝ ստուգելու համար, թե արդյո՞ք շտապ արձագանքման կարիք չի պահանջում նամակում գրվածը: Հասկանալով, որ նման խնդիր չկա, հեռացավ: Հարևանը նույնպես բացեց և մի փոքր կարդաց նամակը: Բայց, քանի որ նամակում անձնական և ընթացիկ հարցերի մասին էր գրված, չշտապեց գտնել հարևանին և հանձնել նամակը: Եվ այդ կերպ նա մի քանի անգամ նամակները վերցրեց փոստատարից, մի քիչ կարդաց դրանցից յուրաքանչյուրը և պահեց իր մոտ:

Նամակների հասցեատերերի վերադառնալուց հետո, հիշելով նամակի գոյության մասին, հարևանը նամակները հանձնեց հասցեատիրոջը:

- *Արդյո՞ք փոստատարը և հարևանն իրավունք ունեին ծանոթանալ նամակի բովանդակությանը:*
- *Արդյո՞ք առկա է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում, և եթե կա՝ այդպիսին, ապա՝ ո՞րն է:*

3.8. Կարծիքն ազատ արտահայտելու իրավունք

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը (հոդված 27), սահմանելով, որ.

- յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն,
- յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից,
- լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է,
- պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

Կարծիքի, խոսքի և տեղեկատվության ազատություններն օրենսդրական մակարդակում ամրագրելու և պետականորեն երաշխավորելու հնարավորությունը մարդիկ ձեռք են բերել

դարավոր պայքարի արդյունքում, և այդ ազատությունները մարդկության պատմության ընթացքում համարվում են վերջին մի քանի հարյուր տարվա ձեռքբերում:

Որքան մարդ ավելի շատ է ներգրավված հասարակական հարաբերություններում, որքան ավելի շատ գիտելիքների է տիրապետում, այնքան ավելի հարուստ վերաբերմունք և, հետևաբար, կարծիք, կարող է նա ձևավորել այդ երևույթների, մարդկանց և այլնի մասին: Ձևավորելով նման կարծիք՝ նա ազատորեն կարող է արտահայտել այն այլ անձանց շրջանում, ընդգծելով, իր կարծիքով, որոշ գործընթացների, երևույթների նկատմամբ մարդկանց դրական և բացասական կողմերը:

ՀՀ Սահմանադրությունը կարծիքի և խոսքի ազատությունները դիտարկում է որպես միասնական ազատություն, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքով իր մտքերը և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք՝ չվախենալով որևէ մեկի, այդ թվում՝ պետական իշխանության հետապնդումներից:


Կարծիքները և համոզմունքները պետք է ազատորեն արտահայտվելու հնարավորություն ունենան, ինչն էլ տեղի է ունենում խոսքի ազատության միջոցով: Իսկ խոսքը կարող է արտահայտվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր:

Խոսքի ազատության իրավունքը հնարավորություն է տալիս անձին արտահայտել կամ չարտահայտել իր միտքը, բացատրել իր վերաբերմունքը կոնկրետ դեպքի նկատմամբ, առանց արտաքին միջամտության կազմավորել, ունենալ և պնդել իր տեսակետը: Այն նաև ներառում է տեղեկատվության և գաղափարների փնտրումը, ստանալը և տարածելը տեղեկատվության փոխանցման միջոցներով (ինչպիսիք էլ որ լինեն՝ հեռուստատեսություն, համացանց, ռադիո և այլն) և առանց պետական սահմանային սահմանափակման:

Տեղեկատվության ազատության իրավունքը համալիր իրավունք է և բաղկացած է մի քանի իրավական հնարավորություններից՝

- փնտրում՝ անհրաժեշտ տեղեկատվությունների ստացման ուղղված գործողությունների կատարում,
- ստանալ տեղեկատվության ձեռքբերման գործընթաց,
- փոխանցում՝ տեղեկատվության տեղափոխում, որի արդյունքում տեղեկատվության տիրապետող է դառնում մեկ այլ անձ,
- ստեղծում՝ նոր տեղեկատվություն ձևավորելու գործընթաց,
- տարածում՝ տեղեկատվության ստացողների քանակի ավելացման ուղղված գործունեություն:

Այս իրավունքները պարտավորեցնում են պետությանը չխոչընդոտել այդ ազատությունների իրականացմանը:



Հարցեր

- *Ի՞նչ է կարծիքը:*
- *Ի՞նչ է նշանակում ունենալ կարծիքի ազատության իրավունք:*
- *Ի՞նչ գործոններ կարող են ազդել կարծիքի ձևավորման վրա:*
- *Ի՞նչ է իրենից ներկայացնում խոսքի ազատությունը:*
- *Ի՞նչ հարաբերակցության մեջ են կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատությունները:*
- *Ի՞նչ տարրերից է բաղկացած տեղեկատվության ազատության իրավունքը:*

Խնդիր 1.

Քաղաքացի Նահապետն առանձնահատուկ կարծիք ուներ Երևան քաղաքի Մ. Սարյանի այգու նշանակության մասին: Նա մեկ անգամ իր ծանոթ լրագրողին հայտնել էր իր կարծիքը առ այն, որ այդ այգին չպետք է օգտագործվի նկարիչների կողմից որպես իրենց ստեղծագործությունների ցուցահանդես-վաճառքի վայր, այլ պետք է ծառայի որպես ազատ տարածություն, որտեղ մարդիկ կարող են վայելել բնությունը: Այդ լրագրողը պնդեց, որ նա կամ պետք է հրապարակայնորեն հրաժարվի իր կարծիքից՝ այն հրապարակելով լրատվամիջոցներով, կամ առնվազն համացանցում գործող սոցիալական ցանցերով կամ պարտավոր է պնդել իր կարծիքը՝ նորից հրապարակայնացնելով այն, որովհետև այն հանրային նշանակության օբյեկտին է վերաբերում և, հետևաբար, հանրությունը հնարավորություն պետք է ստանա իմանալ դրա մասին:

- *Արդյո՞ք քաղաքացի Նահապետն իրավունք ունի ունենալ նման կարծիք:*
- *Ինչպե՞ս են հարաբերվում այս օրինակով կարծիքի ազատ արտահայտման և խոսքի ազատությունները:*
- *Արդյո՞ք լրագրողը ճիշտ էր պնդելիս, որ Նահապետը պարտավոր է հրաժարվել իր այդ կարծիքից, ընդհանրապես, և հանրայնացնել այն՝ մասնավորապես:*

Խնդիր 2.

Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ Նարեն իր նկարած բնության նկարներից ստեղծեց տեսահոլովակ և տարածեց համացանցում: Որոշ ժամանակ անց նրա ընկերները խնդրեցին իրենց տրամադրել այդ տեսահոլովակը, ինչը Նարեն կատարեց: *Արդյո՞ք տեսահոլովակ ստեղծելը տեղեկատվության ազատության տարրերի մեջ մտնում է:*

- *Արդյո՞ք Արտյոմն իրավունք ուներ այն տարածել:*
- *Արդյո՞ք նա իրավունք ունի փոխանցել այն իր ընկերներին:*

3.9. Խոսքի և տեղեկատվության ազատության սահմանները

Ինչպես մյուս ազատությունները, կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի և տեղեկատվության ազատությունները չեն կարող լինել բացարձակ:

Ավելին, կարծիքի ազատությունից օգտվելը առաջացնում է առանձնահատուկ պարտականություններ և, հետևաբար, իրավունքի որոշ սահմանափակումներ: Այդ սահմանափակումները վերաբերում են՝

- այլոց (ֆիզիկական և իրավաբանական անձանց) իրավունքներին,
- վերջիններիս հեղինակությանը,
- հասարակական կարգին,
- պետական անվտանգությանը,
- հասարակության անդամների առողջության և
- հասարակության բարոյականության պահպանմանը:

Վերոգրյալ չափանիշները կարող են հիմք հանդիսանալ կարծիքի ազատ արտահայտման, խոսքի և տեղեկատվության ազատությունների սահմանափակման համար: Հենց դրանք են, որ թույլ չեն տալիս ազատությանը դառնալ ամենաթողություն:

Իսկ անվանարկումը կարող է դիտարկվել զանգվածային լրատվության միջոցներով (հեռուստացույց, թերթեր, տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային և այլ միջոցներ) կամ հնարավոր այլ միջոցներով, որոնք ապահովում են տեղեկատվության զանգվածային տարածումը, անձին արատավորող տեղեկատվության տարածումը:

Կարելի է առանձնացնել անվանարկման տեսակներ՝

- ոչ հավաստի կանխամտածված անվանարկում,

- ոչ հավաստի չկանխամտածված անվանարկում,
- հավաստի անվանարկում (արատավորող ճշմարիտ տեղեկատվության տարածում):

Անհրաժեշտ է նշել, որ տարբերություն կա նաև հանրային և մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվությունների հավաքման, օգտագործման և տարածման միջև:

Մասնավոր կյանքին, այսինքն՝ առանձին անձանց մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվությունը չի կարելի ինչ-որ ձևով հավաքել, օգտագործել և տարածել՝ առանց այդ անձի նախնական համաձայնությամբ և թույլտվությամբ:

Մինչդեռ հանրային կյանքին վերաբերող տեղեկատվությունը, որպես կանոն, բաց է և հանրամատչելի:

Պետական մարմինները (Ազգային ժողով, Նախագահ, Կառավարություն, նախարարություններ, այլ պետական մարմիններ) և տեղական ինքնակառավարման մարմինները (քաղաքապետարաններ, գյուղապետարաններ) պարտավոր են ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը:

Այստեղ կարևոր է այն, որ եթե անձը, ով ցանկանում է ստանալ հանրային կյանքին վերաբերող ինչ-որ տեղեկատվություն, պարտավոր չէ հիմնավորել, թե ինչու է նա ցանկանում ստանալ այն:

Իհարկե, այստեղ ևս կան սահմանափակումներ: Եվ ամեն հանրային նշանակության տեղեկատվություն չէ, որ կարելի է ազատորեն ձեռք բերել և տարածել: Այդպիսի սահմանափակումներ տարածվում են այն տեղեկատվությունների վրա, որոնք համարվում են, նախ և առաջ, պետական գաղտնիք: Իսկ պետական գաղտնիք համարվող տեղեկատվությունների շրջանակը սահմանվում է օրենքով և վերաբերում է երկրի պաշտպանությանը, անվտանգությանը, արտաքին և ներքին քաղաքականությանը, հետախուզական և հակահետախուզական գործունեությանը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ ոլորտներին:

Իսկ ինչ վերաբերում է մարդկանց և քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությանը, պետք է նշել, որ օրենսդրությունն արգելում է մասնավոր կյանքի մասին տեղեկատվության, այսինքն՝ անձնական գաղտնիքը, ընտանեկան գաղտնիքը, անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրային և այլ հաղորդումների գաղտնիությունը խախտող տեղեկատվության հավաքում, պահպանում, օգտագործում և տարածում առանց նրա համաձայնության: Այստեղ ևս կա բացառություն, իսկ բացառության էությունը կայանում է նրանում, որ այս իրավունքների սահմանափակումը հնարավոր է միայն դատարանի դատավճռի հիման վրա:

Պետությունը պետք է օգտագործի իր բոլոր գործառույթները այս իրավունքները երաշխավորելու համար և ինքն էլ չպետք է ոչ մի պարագայում խախտում թույլ տա:



Հարցեր

- Որո՞նք են խոսքի և տեղեկատվության ազատությունների սահմանափակման հնարավոր հիմքերը, չափանիշները:
- Ի՞նչ է անվանարկումը և ի՞նչ տեսակներով կարող է այն դրսևորվել:
- Արդյո՞ք ամբողջ հանրային տեղեկատվությունը հրապարակման ենթակա է, թե՞ առկա են որոշ սահմանափակումներ:
- Մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը ի՞նչ

բացատրություն ունի:

Խնդիր 1.

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ուսանող Կ-ն իր ավարտական աշխատանքը պատշաճ որակով գրելու համար դիմեց Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և խնդրեց տրամադրել Հայաստանի Հանրապետությունում հատուկ պահպանության ներքո գտնվող բուսատեսակների ցանկը, եթե այդպիսին կա: Իսկ եթե չկա նման ցանկ, ապա ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այդ ցանկը կազմելու համար:

ՀՀ բնապահպանությունը նրա դիմումին պատասխանեց՝ նշելով, որ նման ցանկ կա և այն ներկայացված է ՀՀ Կարմիր գրքում, որը նախարարությունը չի կարող տրամադրել, քանի որ անընդհատ լրացումներ են դրանում տեղի ունենում: Իսկ թե ինչպե՞ս կամ ի՞նչ քայլեր է ձեռնարկվում նախարարությունն այդ ցանկը կազմելու կամ դրանում ավելացումներ կատարելու համար, հանրայնացման ենթակա տեղեկատվություն չէ:

Միայն այն դեպքում է հնարավոր տրամադրել այդ տեղեկատվությունը, եթե դիմողն ավելի հիմնավոր ներկայացնի, թե ինչո՞ւ է այդ տեղեկատվությունը խնդրում:

- *Արդյո՞ք պահանջվող տեղեկատվությունը հանրայնացման ենթակա տեղեկատվություն չէ:*
- *Արդյո՞ք առաջին խնդրանքի մերժումն իրավաչափ էր:*
- *Արդյո՞ք երկրորդ խնդրանքի մերժումն իրավաչափ էր:*
- *Արդյո՞ք ուսանողը պարտավոր էր պատճառաբանել և հիմնավորել իր խնդրանքը:*

Խնդիր 2.

Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինն արգելեց հեռուստատեսությամբ ցուցադրել բազմասերիանոց մի ֆիլմ, որի տեսարաններում առկա էին հայհոյանքներով զուգորդված արտահայտություններ, մերկ և բռնությամբ զուգորդված տեսարաններ:

Հեռուստատեսությունը բողոքարկեց այդ որոշումը դատական կարգով և նշեց, որ դա համարվում է կարծիքն ազատ արտահայտելու և տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակում:

- *Որո՞նք են կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հնարավոր հիմքերը:*
- *Արդյո՞ք հայհոյանքներով զուգորդված արտահայտություններ օգտագործելը կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի պաշտպանության ներքո է գտնվում:*
- *Արդյո՞ք պետական համապատասխան մարմնի կողմից նման որոշման ընդունումը հակասում է կարծիքն ազատ արտահայտելու և տեղեկատվության ազատության իրավունքին:*

3.9.1 Պետության դերը լրատվամիջոցների և տեղեկատվության փոխանցման այլ միջոցներում և տեղեկատվության ազատությունը

Ինչպես գիտենք, անձի յուրաքանչյուր իրավունքին համապատասխանում է պետության պարտավորությունը:

Եվ եթե մեր Սահմանադրությունում գրված է, որ լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է, ապա դա նշանակում է,

որ այդ երաշխավորումը պետք է ապահովի պետությունը: Իսկ թե ինչպիսի՞ լծակներով և գործիքներով, սա արդեն պետության կողմից արդյունավետ կառուցակարգերի ձևավորման և դրանց աշխատացնելու խնդիր է:

Պետությունը պարտավոր է ապահովել բոլոր լրատվական կազմակերպությունների՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների, էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային թերթեր հրապարակող ընկերությունների, նմանաբնույթ գործունեություն իրականացնող ընկերությունների գործունեության անխոչընդոտ ընթացքը, թույլ չտա, որ ինչ-որ անձինք, պետական մարմիններ, առանց օրինական հիմքերի, ազդեն այդ ընկերությունների գործունեության վրա, պարտադրեն որևէ տեղեկատվության հրապարակում կամ հրապարակման արգելում և այլն:

Տեղեկատվության մատչելիության այս իրավունքները հանդիսանում են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության (որոնք ունեն հանրային բնույթ) վերահսկողության իրականացման հիմք:

Ավելին, քանի որ յուրաքանչյուր զարգացող հասարակության անհրաժեշտ է իր ներսում մշակութաօգնական, բազմակողմանի զարգացած, ազատ կարծիք, միտք և խոսք ունեցող անհատականությունների ձևավորում, որպեսզի ապահովվի իր իսկ ամբողջականությունը և առաջընթացը, պետությունը պարտավորություն է ստանձնել երաշխավորելու տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

Սա նշանակում է, որ պետությունը պարտավորվում է ստեղծել առնվազն մեկ հանրային ռադիո և մեկ հեռուստատեսային ալիք, որոնցով հասարակությանը կտրամադրվի տարաբնույթ հաղորդումներ, որոնք պետք է լինեն թե՛ տեղեկատվական, թե՛ կրթական, թե՛ մշակութային և թե՛ ժամանցային: Մրա նպատակն այն է, որ անձինք, ովքեր կօգտվեն տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքից հնարավորություն ունենան ստանալ ոչ թե միակողմանի կամ նույնաբովանդակ տեղեկատվություն, այլ բազմազանությամբ: Այդ բազմազանության մեջ նրանք իրենք են որոշում, թե ո՞ր հաղորդումը դիտեն, ի՞նչ տեսակ տեղեկատվություն ստանան և այլն:

Սա նաև նշանակում է, որ պետությունը չպետք է ամբողջ տեղեկատվական դաշտը սահմանափակի միակողմանի ուղղություն ունեցող տեղեկատվությամբ. օրինակ՝ ցուցադրի միայն ժամանցային հաղորդումներ, որքան էլ դրանք հաճելի և պահանջված լինեն, քանի որ հանրային շահը պահանջում է, որ հասարակության անդամները հնարավորություն ունենան տիրապետելու առավել ընդարձակ տեղեկատվության, որպեսզի հասարակության ընդհանուր մշակութային զարգացվածության աստիճանն անընդհատ բարձրանա:



Խնդիր 1.

Հանրապետության միակ հանրային հեռուստատեսության նոր նշանակված տնօրենը որոշեց, որ այսուհետ հանրային հեռուստատեսությամբ պետք է ցուցադրվեն միայն հասարակության կողմից պահանջված հաղորդումներ, որպեսզի հնարավորինս մեծ քանակությամբ հեռուստադիտողների ներգրավեն:

Արդյունքում կրճատվեցին դասական երաժշտությանը նվիրված հաղորդումները և նրանց փոխարեն հեռարձակվեցին տնային տնտեսուհիների համար նախատեսված հեռուստասերիալներ:

Եվ քանի որ ժամանցային, երիտասարդական հաղորդումների քանակը մի քանի անգամ գերազանցում էր այլ հաղորդումների հատկացված ժամաքանակը, որոշեց, որ անհրաժեշտ է նվազեցնել դրանց քանակը և համամասնորեն բաժանել ժամաքանակը նաև մանկական և լրատվական հաղորդումների վրա, որպեսզի ապահովվի համամասնությունը:

- *Որո՞նք են պետության պարտավորությունները հանրային հեռուստատեսության բնագավառում:*
- *Նոր տնօրենի ո՞ր որոշումն է բխում այս բնագավառում պետության պարտավորությունից և ո՞րն է խախտում այն: Հիմնավորե՛ք:*

3.10. Կրթության իրավունք

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է կրթության իրավունքը (հոդված 39), մասնավորապես սահմանելով, որ.

- յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք,
- հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ,
- միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է,
- յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Ժամանակակից աշխարհում գիտելիքը շարունակում է մնալ ամենից կարևոր կապիտալը, ավելին՝ դրա կարևորությունը հասարակությունում գնալով աճում է, քանի որ մարդկային հարաբերությունները խորանում, բազմաբևեռ և համալիր են դառնում: Գիտելիքի ձեռքբերման ամենից արդյունավետ և կազմակերպված եղանակը կրթությունն է, որի տրամադրումը մարդկության պատմության ընթացքում կազմակերպվել է տարբեր կերպ: Կրթությունն անձի, հասարակության, պետության շահերից բխող գիտելիքի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որի նպատակը գիտելիքի պահպանումն է և նոր սերնդին փոխանցելը:

Առանց կրթության մարդիկ դժվարությամբ կարող են մասնակցել հասարակական և քաղաքական գործունեությանը, քանի այդ գործընթացներում մասնակցելու, հասարակական որոշակի դիրքի հասնելու և նվաճելու համար կրթությունը խաղում է որոշիչ դեր:

Ելնելով կրթության կարևոր առաքելությունից՝ ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, այսինքն՝ յուրաքանչյուր մարդ, անկախ նրանից՝ Հայաստանի

Հանրապետության քաղաքացի է, թե՛ ոչ, ունի կրթության իրավունք, որն ամրագրված է նաև մարդու հիմնարար իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրերում և այլ փաստաթղթերում:

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

Մարդու սահմանադրական այս իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ապահովելու կրթության իրավունքի կենսագործման համար համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգեր, որոնք էլ ամբողջանում են կրթության համակարգում: Ժամանակակից հասարակությունում կրթության կազմակերպման համար պետությունը սահմանում է որոշակի կառուցակարգեր, որոնք նպաստում են առավել արդյունավետ եղանակով և միջոցներով գիտելիքի կազմակերպված տրամադրմանը:


Հայաստանի Հանրապետությունում կրթության լեզուն հայերենն է, դրա կազմակերպումը հիմնվում է մի քանի սկզբունքների վրա.

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.
- սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.
- ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.
- ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.
- պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

- ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5):



Հարցեր

- *Ի՞նչ է կրթությունը:*
- *Ի՞նչ դեր և նշանակություն ունի կրթությունը հասարակությունում:*
- *Ո՞վ ունի կրթության իրավունք:*
- *Ո՞վ է պարտավոր ապահովել կրթության իրավունքի կենսագործումը:*
- *Որո՞նք են կրթության կազմակերպման բնագավառում ՀՀ որդեգրած սկզբունքները:*

3.10.1 Ե՞րբ է կրթությունը պարտադիր

Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդված 26) սահմանում է, որ տարրական կրթությունը պարտադիր է, իսկ տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլորի համար:

Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կրթության սահմանները ավելի ընդարձակ են: Հայաստանում պարտադիր է համարվում հիմնական ընդհանուր կրթությունը:

Հիմնական ընդհանուր կրթությունը, ըստ էության, կենսագործվում է հանրակրթության միջոցով, որի նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:

Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը:

Հանրակրթությունն իրականացվում է հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).
- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).
- ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված

18):

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրերով կարող է իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում:

Այս կրթությունը համարվում է միջնակարգ, որի առաջին երկու աստիճանները՝ տարրական և միջին դպրոցները, կազմում են հիմնական դպրոցը, ինչն էլ պարտադիր է բոլորի համար:

Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումն ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը կարող է չտարածվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա:



Խնդիր 1.

11-րդ դասարանի աշակերտ տասնյոթամյա Մհերը, ով սովորում էր ավագ դպրոցում, որոշել էր թողնել դպրոցը և անցնել աշխատանքի: Նա իր որոշումը համաձայնեցրել էր իր ծնողների հետ, ովքեր դեմ չէին: Երբ նա այդ մասին հայտնեց իր դպրոցի տնօրենին, վերջինս հանդիմանեց և նշեց, որ նա իրավունք չունի լքել դպրոցը, քանի որ հանրակրթությունը պարտադիր է, և պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը խախտելը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին: Ուստի Մհերը պետք է ավարտի նաև ավագ դպրոցը:

- *Ե՞րբ Մհերն իրավունք ունի լքելու դպրոցը:*
- *Ո՞ր դեպքում Մհերն իրավունք չունի լքելու դպրոցը:*
- *Որո՞նք են հանրակրթական դպրոցի աստիճանները:*
- *Հանրակրթական դպրոցի ո՞ր աստիճաններն են կազմում հիմնական դպրոցը:*

3.10.2 Մասնագիտական կրթական ծրագրերը

Մասնագիտական կրթությունն իրականացվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների միջոցով, որոնք էլ այդ կրթությունը կազմակերպում են կրթական տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրերին համապատասխան, որոնք են՝

- նախնական (արհեստագործական),
- միջին,
- բարձրագույն մասնագիտական:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, որտեղ սովորողները ուսանում են տարաբնույթ արհեստներ և նմանաբնույթ այլ մասնագիտություններ (օրինակ՝ փականագործներ, զոդողներ, մեքենավարներ և այլն): Այստեղ սովորողները ձեռք են բերում մի շարք ճանաչողական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են հիմնական մեթոդների, միջոցների և գործիքների, նյութերի ու տեղեկությունների կիրառման միջոցով առաջադրանքներ կատարելու և խնդիրներ լուծելու համար:

Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր: Այստեղ սովորողները ուսանելիս շեշտը դնում են մասնագիտական որոշակի ուղղության վրա, որն էլ հանդիսանում է տվյալ քոլեջի կամ ուսումնարանի հիմնական մասնագիտական ուղղությունը:

Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը: Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:


Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

- Բակլավալր, ով տիրապետում է մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող մասնագիտական, տեսական և գործնական խոր գիտելիքների, որոնք անհրաժեշտ են տեսությունների ու սկզբունքների համընդգրկուն ըմբռնման, դրանց քննադատական գնահատման ու կատարելագործման, տվյալ մասնագիտական ոլորտում առկա դպրոցների, ուսմունքների, գիտաճյուղերի և ուղղությունների մասին իրազեկվածության, դրանց համեմատության և գործնական կիրառության համար.

- ղիպլոմավորված մասնագետ, ով տիրապետում է աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող համակողմանի, մասնագիտացված, փաստական և տեսական գիտելիքների, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում առաջադրված բարդ, ոչ շաբլոնային խնդիրները լուծելու, իսկ որոշ դեպքերում՝ ընտրված լուծումները հիմնավորելու համար.

- մագիստրոս, ով տիրապետում է մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող նեղ մասնագիտացված, արդիական, գործնական և տեսական գիտելիքների, որոնք անհրաժեշտ են այդ մասնագիտական ոլորտում նոր հայեցակարգերի և սկզբունքների մշակման, ինչպես նաև տվյալ ոլորտի շրջանակում կամ միջառարկայական տիրույթում առանցքային նշանակություն ունեցող գիտելիքների մասին տվյալների ու տեղեկությունների հավաքման համար:

Հայաստանի Հանրապետությունում կա նաև հետբուհական մասնագիտական կրթություն, որի նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է: Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով:



Խնդիր

Գերմանիայում, ավագ դպրոցն ավարտելուց հետո, Շաքեն որոշեց կրթությունը շարունակել Հայաստանի Հանրապետությունում և ավելի խորությամբ ուսումնասիրել արտասահմանյան և հայ բանասիրությունը: Չկողմնորոշվելով, թե ինչպես է դա անելու, և թե որոնք են Հայաստանում ընդունված մասնագիտական կրթական ծրագրերը՝ նա դիմեց Ձեզ՝ որպես իր մտերիմ ընկերոջ, և խնդրեց ներկայացնել մասնագիտական կրթական ծրագրերը, հաստատությունները և դրանց տարբերությունները՝ տալով այդ բնագավառից հարցեր:

- Որո՞նք են Հայաստանի Հանրապետությունում ընդունված կրթական ծրագրերը:
- Ո՞ր կրթական ծրագիրը ո՞ր հաստատությունում է կազմակերպվում:
- Կարո՞ղ է արդյոք որոշակի կրթական ծրագիր իրականացնող կրթական հաստատություն իրականացնել նաև մեկ այլ կրթական ծրագիր: Եթե այո, ապա որո՞նք են դրանք և ի՞նչ կրթական ծրագիր կարող է իրականացնել:
- Որո՞նք են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանները:

3.10.3 Անվճար կրթություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ Հայաստանում միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Սա նշանակում է, որ պետությունն ապահովում է մարդկանց կրթական իրավունքի

կենսագործումը միջնակարգ կրթություն տրամադրող պետական ուսումնական հաստատություններում անվճար, և միաժամանակ նշանակում է, որ պետությունն այդ իրավունքի անվճար կենսագործումը ապահովում է միայն պետական ուսումնական հաստատություններում (դպրոցներում): Կարող են լինել մասնավոր դպրոցներ, ուսումնական հաստատություններ, որոնք պատկանում են մասնավոր անձանց, որտեղ կրթության տրամադրումը կարող է կազմակերպվել վճարովի հիմունքներով: Ավելին, պետական հանրակրթական դպրոցների առաջինից երրորդ դասարանների աշակերտներին պետությունը, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով, բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

Հայաստանի Հանրապետությունն իր քաղաքացիների համար նաև երաշխավորում է անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, սակայն մրցութային կարգով: Սա նշանակում է, որ հնարավոր է նաև անվճար կրթություն ստանալ նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական հաստատություններում, եթե դիմորդը բավարարի մրցութի պայմաններին և հաղթի հայտարարված մրցություն: Ավելին, դա հնարավոր է նաև մասնավոր, ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այսպես, ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն այն քաղաքացիներին, ովքեր հաշվառված են և վերջին ութ տարում մշտապես բնակվում են սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերում: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցութից առանձնացված կարգով, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը միայն սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների, սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերի: Բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն հատկացված ընդունելության ընդհանուր տեղերի շրջանակում կարող է ձևավորել ուսանողական համակազմի անվճար և վճարովի չափաքանակներ՝ յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի սահմաններում (օրինակ՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետ ընդունվող 100 ուսանողներից 15-ը պետք է ստանան անվճար սովորելու հնարավորություն):

Բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին փոխհատուցում է ուսման տարեկան վարձը՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը: Սա էլ նշանակում է, որ ուսանողը, ով նախապես ընդունվել է վճարովի համակարգով, հնարավորություն ունի բարձր առաջադիմություն ցուցաբերելու միջոցով անցնել անվճար համակարգ:



Խնդիր

Վճարովի մասնավոր դպրոցն ավարտելուց հետո Միերը որոշեց ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ անվճար հիմունքներով ընդունվելու համար անհրաժեշտ էր լինել տասը լավագույն դիմորդներից մեկը՝ մրցույթում հաղթող ճանաչվելու համար: 60 հնարավոր միավորից հավաքելով 57-ը՝ նա մրցույթում չկարողացավ հաղթել, քանի որ հավաքած բարձր միավորների աղյուսակում 13-րդն էր:

Հիասթափվելով արդյունքից՝ նա որոշեց այդ միավորներով դիմել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, քանի որ լսել էր, որ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումն անվճար է:

• Միջնակարգ կրթությունը Հայաստանի Հանրապետությունում կարո՞ղ է լինել վճարովի: Եթե այո, ապա ո՞ր դեպքում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

• Ո՞ր դեպքում է հնարավոր ստանալ անվճար հիմունքներով բարձրագույն կրթություն պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

• Ի՞նչ խորհուրդ կտաք անել Միերին, որպեսզի նա կարողանա անվճար հիմունքներով կրթություն ստանալ:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԻԺ

4.1. Հանցագործության հասկացությունը

ՀՀ քրեական օրենսգիրքը, ի տարբերություն արտասահմանյան մի շարք երկրների օրենսգրքերի, տալիս է հանցագործության հասկացությունը: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 18-ի 2-րդ մասի՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով:

ՀՀ քրեական օրենսգիրքը հանցագործության հասկացությունը տալիս է նրա հատկանիշների միջոցով: ՀՀ քրեական օրենսգրքում տրված հասկացությունից երևում է, որ հանցագործության հատկանիշները չորսն են՝

- հանցագործությունը արարք է,
- հանցագործությունը հանրության համար վտանգավոր արարք է,
- հանցագործությունը քրեական օրենքով արգելված արարք է,
- հանցագործությունը մեղավորությամբ կատարված արարք է:

Հանցագործությունը արարք է

Անձը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, երբ նրա մտադրությունները, գաղափարները դրսևորվել են կոնկրետ արարքի կատարման մեջ, առարկայացել են այդ արարքում: ՀՀ քրեական իրավունքը, հանցավոր արարք ասելով, հասկանում է մարդու հանրորեն վտանգավոր և հակաիրավական գործողությունը կամ անգործությունը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ը քրեական պատասխանատվության միակ հիմք սահմանում է արարք կատարելը, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Արարքը միշտ որոշակի է, կատարվում է կոնկրետ անձի կողմից, որոշակի պայմաններում, տեղում և ժամանակում:

Արարքի հանրային վտանգավորությունը

Հանցագործության նյութական հատկանիշը արարքի հանրային վտանգավորությունն է: Այն արարքի հատկությունն է՝ վնաս հասցնելու քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին, այսինքն՝ հանցագործության օբյեկտին: Օրենսդիր մարմինը հասարակության մեջ կատարվող բազմաբնույթ արարքներից որոշներն առանձնացնում է որպես հանցագործություն: Միայն հանցագործություններն են, որ օժտված են հանրային վտանգավորությամբ:

Քրեական օրենսգրքում հանցագործությունները տեղաբաշխված են ոչ թե կամայականորեն, այլ ըստ այն հասարակական հարաբերությունների կարևորության, որոնց դեմ դրանք ուղղված են: Միևնույն օբյեկտի դեմ ուղղված հանցագործությունները հանրային վտանգավորության համանման բնույթ ունեն: Օրինակ՝ մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններն իրենց հանրային վտանգավորության բնույթով նույնն են և տարբերվում են, ասենք, սեփականության դեմ ուղղված հանցագործություններից:

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք ավարտվել է հանցագործությունը, հասել է հանցավորն իր նպատակներին, թե՛ ոչ: Որպես կանոն, ավարտված հանցագործությունը բնութագրվում է առավել մեծ վտանգավորության աստիճանով, քան անավարտ հանցագործությունը:

Դիտավորությամբ կատարվող հանցագործություններն առավել մեծ վտանգավորություն են ներկայացնում, քան անզուգուշությամբ կատարվողները:

Հանցագործության վտանգավորության աստիճանը որոշվում է նաև հանցագործության շարժառիթով և նպատակով: Օրինակ՝ հանցագործությունը շահադիտական կամ խուլիգանական դրդումներով կատարելը բնութագրվում է առավել մեծ վտանգավորությամբ, քան հանցագործության կատարումը, ասենք, կարեկցանքի շարժառիթով կամ սպառնալիքի ազդեցության տակ:

Հանրային վտանգավորության մասին խոսելիս հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Հանրային վտանգավորությունը երբեք չի հասկացվում որպես վտանգավորություն բացառապես հասարակության համար: Հանրային վտանգավորությունը նշանակում է վտանգավորություն պետության, հասարակության, անձի համար:

Յուրաքանչյուր հանցագործություն օբյեկտիվորեն հանրորեն վտանգավոր է: Այդ վտանգավորությունը կայանում է նրանում, որ հանցագործությամբ վնաս է հասցվում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին, դրանց զարգացման նորմալ ընթացքին: Հանրային վտանգավորության աստիճանը որոշվում է պատճառված վնասի մեծությամբ և այն օբյեկտի արժեքավորությամբ, որին վնաս է հասցվել կամ կարող է հասցվել: Արարքները հայտարարվում են հակաօրինական և պատժելի, որովհետև հանրորեն վտանգավոր են, այլ ոչ թե դառնում են հանրորեն վտանգավոր, երբ հայտարարվում են հակաիրավական և պատժելի:

Արարքի քրեական հակաիրավականությունը

Քրեական հակաիրավականությունը նշանակում է, որ արարքը (ինչքան էլ այն վտանգավոր լինի) չի կարող հանցագործություն համարվել, եթե նախատեսված չէ քրեական օրենսգրքում: Եթե հանրային վտանգավորությունը համարվում է հանցագործության նյութական հատկանիշ, ապա հակաիրավականությունը համարվում է հանցագործության ձևական հատկանիշ:

Այս սկզբունքը հիմնարար նշանակություն ունի: Քրեական հակաիրավականությունը հանցագործության հատկանիշ համարելը բացառում է անալոգիայի կիրառումը: Այսինքն, արարքը չի կարող համարվել հանցագործություն, եթե նույնիսկ այն իր հատկանիշներով նման է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշներին:

հանցագործություն համարվելու համար անհրաժեշտ է բոլոր հատկանիշների առկայություն կատարված արարքում:

Քրեական հակաիրավականությունը, որպես հանցագործության ձևական հատկանիշ, սերտորեն կապված է դրա նյութական հատկանիշի՝ հանրային վտանգավորության հետ:

Քրեական օրենքով (օրենսգրքով) կարող են արգելված (նախատեսված) լինել միայն հանրային վտանգավորության որոշակի բնույթ և աստիճան ունեցող արարքները: Միննույն ժամանակ հանցագործություն կարող են համարվել միայն այն վտանգավոր արարքները, որոնք արգելված (նախատեսված) են քրեական օրենսգրքով: Հանցագործության այս երկու հատկանիշները փոխկապակցված են:

Ի՞նչ է մեղավորությունը

Հանցագործության չորրորդ հատկանիշը մեղավորությամբ կատարված լինելն է: Սակայն մեղքը չի կարող հանցագործության ինքնուրույն հատկանիշ լինել: Այն արարքի քրեական հակաիրավականության բաղկացուցիչ մասն է:

Առանց մեղքի չկա ո՛չ հանցագործություն, ո՛չ էլ քրեական պատասխանատվություն:

Մեղքը, որը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կատարած արարքի (նաև դրա հետևանքների) նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով, արարքի այն ներքին էությունն ու բովանդակությունն է, որը դրա արտաքին դրսևորման հետ միասնության մեջ տալիս է հանցագործություն: Ուստի արարքի թե՛ արտաքին, թե՛ ներքին դրսևորման բացակայությունը նշանակում է հանցագործության բացակայություն:

Տարբերվում են մեղքի երկու ձև.

- **դիտավորություն,**
- **անզգուշություն:**

Դիտավորությամբ կատարված հանցանքն իր հերթին կարող է դրսևորվել երկու ձևով.

- **ուղղակի դիտավորությամբ,**
- **անուղղակի դիտավորությամբ:**

Ուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է իր արարքի՝ հանրային վտանգավորությունը, նախատեսում է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացումը, ցանկացել է դրանց վրա հասնելը:

Օրինակ՝ երկար տարիներ Նարեկը թշնամաբար էր տրամադրված Նահապետի հանդեպ, և առիթը բաց չէր թողնում նրան վիրավորելու ու նսեմացնելու: Թշնամական վերաբերմունքը տարիների ընթացքում խորացավ և Նարեկը որոշեց ազատվել Նահապետից: Նա տարված էր բժշկությամբ և մարդու անատոմիական կառուցվածքի վերաբերյալ բավականին խորը գիտելիքներ ուներ: Մի գիշեր նա խաբեությամբ Նահապետին բերեց մեկուսի մի տարածք և այնտեղ դանակահարեց վերջինիս: Արնաքամ լինելով՝ Նահապետը մահացավ: Համոզվելով, որ մահացել է, Նարեկը հեռացավ և հանգիստ քնեց մինչև լույս: Այստեղ արարքը պետք է որակել ուղղակի դիտավորությամբ կատարված սպանություն, քանի որ Նարեկը գիտակցել է իր արարքի հանրորեն վտանգավոր բնույթը, կանխատեսել է վտանգավոր հետևանքների առաջացումը և ցանկացել է, որ դրանք վրա հասնեն:

Հանցանքը համարվում է **անուղղակի դիտավորությամբ** կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք:

Օրինակ՝ Նարեկը, Մհերը և Նահապետը սկսեցին վիճել: Վեճը վերածվեց կռվի, և Նարեկն ու Մհերը դաժանաբար ծեծեցին Նահապետին: Տեսնելով, որ նա ուշագնաց է եղել, նրանք հեռացան: Նրանց գնալուց մի քանի ժամ հետո նահապետը մահացավ: Նարեկը և Մհերը ենթակա են քրեական պատասխանատվության անուղղակի դիտավորությամբ

սպանություն կատարելու համար, քանի որ Նահապետին ծեծի ենթարկելով, նրանք գիտակցում էին իրենց արարքի հանրորեն վտանգավոր բնույթը, նախատեսում էին, թե ինչ հետևանք կարող է առաջանալ, չեն ցանկացել հետևանքների վրա հասնելը, սակայն գիտակցաբար թույլ են տվել նման հետևանքների առաջացումը, քանի որ թողնելով նրան անգիտակից վիճակում՝ հեռացել են, առանց օգնություն ցուցաբերելու:

Անզգուշությամբ կատարված հանցանքն իր հերթին կարող է դրսևորվել երկու ձևով.

- *ինքնավստահությամբ* կամ
- *անփութությամբ*:

Հանցանքը համարվում է *ինքնավստահությամբ* կատարված, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

Օրինակ՝ տաքսու վարորդ Նահապետը մեքենան վարում էր ճանապարհային երթևեկության կանոններին համապատասխան: Հանկարծ մեքենայից մոտավորապես 50 մետր հեռավորության վրա նա նկատեց փողոցն անցնող փոքրահասակ մի երեխայի: Համոզված լինելով, որ երեխան կհասցնի անցնել փողոցը, չդանդաղեցրեց մեքենայի ընթացքը: Սակայն երեխան չհասցրեց անցնել փողոցը և բախվեց մեքենային: Մի քանի օր անց երեխան մահացավ: Նահապետը ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ մահ պատճառելու համար, ընդ որում անզգուշությունը դրսևորվել է ինքնավստահության ձևով, քանի որ գիտակցելով իր արարքի պոտենցիալ հանրային վտանգավորությունը, կանխատեսել է վտանգավոր հետևանքների առաջացման վերացական հնարավորությունը, առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

Հանցանքը համարվում է *անփութությամբ* կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք:

Օրինակ՝ ցանկանալով կատակել՝ Մհերը այլուրի դատարկ տոպրակը հազցրեց ընկերոջ՝ Շաքեի գլխին: Այլուրի պարկի մեջ մնացած փոշին լցվեց Շաքեի աչքերի մեջ, և նա կուրացավ: Մհերը ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ /անփութության ձևով/ առողջությանը ծանր վնաս հասցնելու համար, քանի որ նա չէր նախատեսել իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ պարագայում կարող էր և պարտավոր էր նախատեսել դրանք:



Հարցեր

- Ի՞նչ է հանցագործությունը:
- Որո՞նք են հանցագործության հատկանիշները:
- Ո՞րն է քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը:
- Ի՞նչ դեր է խաղում արարքի հանրային վտանգավորության որոշումը:
- Ինչպե՞ս են կապակցված քրեական հակաիրավականությունը և հանրային

վտանգավորությունը:

- Ինչպե՞ս է արտահայտված մեղքը՝ որպես հանցագործության հատկանիշ:

Խնդիր 1

Մի անգամ, երբ հարևաններով հավաքվել էին նշելու Անահիտի ծննդյան տարեդարձը, Նարեկը հայտարարեց, որ ատում է Նահապետին և պատրաստ է սպանել նրան:

Արդյո՞ք Նարեկի արարքը հանցագործություն է:

Խնդիր 2

Ըստ հանրային վտանգավորության բնույթի՝ տեղաբաշխեք հետևյալ հանցագործությունները՝ լրտեսություն, խուլիգանություն, ջրերն աղտոտելը, գողություն, ահաբեկչություն, պետական դավաճանություն, սպանություն, քաղաքացու կողմից հարկ վճարելուց խուսափելը, խոշտանգում, դասալքություն:

4.2. Հանցագործության տեսակները

Ո՞րն է հանցագործությունների դասակարգման հիմքը, դրա նշանակությունը.

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 19-ի համաձայն՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են.

- ոչ մեծ ծանրության,
- միջին ծանրության,
- ծանր և
- առանձնապես ծանր հանցագործությունների:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 19-ի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ չնայած հանցագործությունների դասակարգման հիմքում որպես չափանիշ դրված է արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, այնուամենայնիվ, դասակարգումն իրականացվում է ըստ հանցագործության համար օրենքով սահմանված պատժի խստության:

Միակ «տեսանելի», ցայտուն չափանիշը, որը քիչ թե շատ արտացոլում է հանցագործության վտանգավորության աստիճանը և որը հնարավոր է օրենսդրորեն ձևակերպել, պատիժն է:

Այս կամ այն հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի մասին կարելի է պատկերացում կազմել ելնելով դրա համար օրենքով նախատեսված պատժի տեսակից և չափից: Այլ հարց է, որ որոշ դեպքերում պատժի տեսակի և չափի ընտրության հարցում օրենսդիրը, իրոք, կարող է սխալվել, ճիշտ չընկալել արարքի վտանգավորությունը:

Հանցագործությունների դասակարգումն ունի կարևոր իրավական նշանակություն:

Կապված այն հանգամանքի հետ, թե այս կամ այն հանցագործությունը ո՞ր խմբին է դասվում, տարբերակվում են ոչ միայն այդ հանցագործության համար նախատեսվող պատժի տեսակն ու չափը, այլև մյուս իրավական հետևանքները: ՀՀ քրեական օրենսգրքի վերլուծությունից բխում է, որ՝

- հանցագործությունների տեսակները հաշվի են առնվում ռեցիդիվի տեսակը գնահատելիս,
- քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները տարբերակվում են ըստ հանցագործությունների տեսակների,
- ըստ հանցագործությունների տեսակների տարբերակվում են դատվածության մարման ժամկետները,
- հանցագործության տեսակի հետ են կապվում ազատազրկման ձևով պատիժը կրելու առանձնահատկությունները, մասնավորապես, ուղղիչ հիմնարկի տեսակը,
- քրեական պատասխանատվությունից ու պատժից, որպես կանոն, կարող է ազատվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը,
- հանցագործության տեսակի հետ է կապվում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու, ինչպես նաև պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու համար սահմանված պատժի պարտադիր կրման ժամկետը,
- հանցագործությունների տեսակների հետ է կապվում հանցագործությունների համակցության դեպքում պատժի վերջնական չափը որոշելիս գումարման կամ կլանման կանոնի կիրառումը,
- հանցագործություն չի համարվում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը:

Որո՞նք են ոչ մեծ ծանրության հանցագործությունները

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 19-ի երկրորդ մասի համաձայն ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

Որո՞նք են միջին ծանրության հանցագործությունները

Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

Որո՞նք են ծանր հանցագործությունները.

Ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

Որո՞նք են առանձնապես ծանր հանցագործությունները.

Առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժը ազատազրկման ձևով տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:



Հարցեր

- Հանցագործության ինչպիսի՞ տեսակներ կան:
- Ի՞նչ քրեաիրավական նշանակություն ունի հանցագործությունների դասակարգումը:
- Արդյո՞ք էական նշանակություն ունի հանցավորի դիտավորությունը հանցագործությունների դասակարգման ընթացքում:
- Ի՞նչ տեսակների կարող են լինել անզգույշ հանցագործությունները:
- Ո՞րն է դասակարգման հիմքը:

Խնդիր

Միերը, ով 17 տարեկան էր, կատարեց ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 104-ի երկրորդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանք (սպանություն առանձին դաժանությամբ), որի համար քրեական օրենսգրքով նախատեսված է ազատազրկում՝ տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Դատարանը Միերին դատապարտեց տասը տարի ժամկետով ազատազրկման, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 89-ի 3-րդ մասի համաձայն՝ տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար ազատազրկումը կարող է նշանակվել առավելագույնը տասը տարի ժամկետով:

Հանցագործությունների դասակարգման ո՞ր խմբին է պատկանում Միերի կատարած հանցանքը:

4.3. Անհրաժեշտ պաշտպանություն և ծայրահեղ անհրաժեշտություն

4.3.1. Ի՞նչ է նշանակում անհրաժեշտ պաշտպանություն

Առօրյա կյանքում հաճախ են լինում այնպիսի դեպքեր, երբ արտաքինապես հանցագործությանը նման գործողությունը կամ անգործությունը կոնկրետ իրավիճակում այլ բովանդակություն է ձեռք բերում: Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներն այն պայմաններն են, որոնց առկայությունն արտաքինապես հանցագործությանը նման արարքները վեր են ածում իրավաչափ, նույնիսկ օգտակար արարքների:

ՀՀ Սահմանադրության հոդված 18-ի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 42-ի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանությունը հանրորեն վտանգավոր ոտնձգությունից ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով իրավաչափ պաշտպանությունն է:

Անհրաժեշտ պաշտպանությունը արարքի հանցավորությունը բացառող հանգամանք է, հետևաբար, անհրաժեշտ պաշտպանության վիճակում ոտնձգողին վնաս պատճառելու համար անձը պատասխանատվություն չի կրում, քանի որ նրա գործողությունները ուղղված են հանրորեն վտանգավոր ոտնձգության կանխմանը կամ դադարեցմանը և հանրորեն օգտակար են:

Անհրաժեշտ պաշտպանության նպատակը հանդիսանում է օրենքով պաշտպանվող շահերի պաշտպանությունը, իսկ վնաս պատճառելը պետք է կրի հարկադրված բնույթ՝ պայմանավորված կատարվող ոտնձգությամբ:

Անհրաժեշտ պաշտպանությունը իրավաչափ է համարվում միայն այն դեպքում, երբ ճշտությամբ պահպանվում են թե՛ ոտնձգությանը, թե՛ պաշտպանությանը վերաբերող իրավաչափության բոլոր պայմանները:

Անհրաժեշտ պաշտպանությունը իրավունք է, թե՛ պարտականություն

Անհրաժեշտ պաշտպանության իրականացումը պաշտպանվողի համար մեծ ռիսկի հետ է կապված, ուստի օրենսդիրը քաղաքացիների վրա դրա իրականացման պարտականություն չի դնում:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 42-ի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից:

Սակայն անհրաժեշտ պաշտպանությունը ոչ միայն բարոյական, այլև իրավական պարտականություն է որոշ սուբյեկտների համար, որոնց վրա օրենքով, հրամանով կամ ծառայողական ուժով հատուկ պարտականություն է դրված պաշտպանելու օրենքով պաշտպանվող շահերը: Այս սուբյեկտների թվին են դասվում ոստիկանության, ներքին գործերի այլ ստորաբաժանումների աշխատակիցները, զինծառայողները, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները, պահակային ծառայողները և այլն:

Որո՞նք են անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները

Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներից յուրաքանչյուրին բնորոշ են իրավաչափության որոշակի պայմաններ, որոնց հետևելու դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Անհրաժեշտ պաշտպանությանը վերաբերող իրավաչափության պայմանները բաժանվում են երկու խմբի.

- անհրաժեշտ պաշտպանության ժամանակ ոտնձգությանը վերաբերող իրավաչափության պայմաններ,
- անհրաժեշտ պաշտպանության ժամանակ պաշտպանությանը վերաբերող իրավաչափության պայմաններ:

Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները վերաբերում են ոտնձգությանը. այն արարքի հանրային վտանգավորությունն է, առկայությունը և իրական լինելը:

Իսկ անհրաժեշտ պաշտպանության ժամանակ պաշտպանությանը վերաբերող իրավաչափության պայմաններն են.

- վնաս հասցնելը թույլատրելի է ամեն դեպքում, երբ վտանգ է սպառնում անձի, հասարակության, պետության շահերին,
- վնասը պետք է հասցվի միայն ոտնձգողին,
- չպետք է թույլ տրվի անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը: Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև ապօրինաբար և

բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից :



Հարցեր

- Անհրաժեշտ պաշտպանությունը իրավունք է, թե՛ պարտականություն:
- Ո՞ր դեպքերում կարող ենք փաստել, որ անձը գտնվում է անհրաժեշտ պաշտպանության վիճակում:
- Ինչպիսի՞ պահանջներ են ներկայացվում հասցված վնասին:
- Որո՞նք են անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները:
- Ե՞րբ կարելի է արձանագրել անհրաժեշտ պաշտպանության սահմանագանցում:

Խնդիր 1.

Նահապետը քնած էր իր տանը: Նրա տան բակ մտավ Նարեկը, սկսեց թակել Նահապետի դուռը, հայհոյել նրան և պահանջել, որ նա դուրս գա: Նահապետը դուրս եկավ տնից, փորձեց հանգստացնել Նարեկին, բայց՝ ապարդյուն: Նարեկը սկսեց բռունցքներով հարվածել Նահապետին և հայհոյել: Հետո հանեց դանակը, որ հարվածի Նահապետին: Այդ պահին Նահապետին հաջողվեց խլել Նարեկի ձեռքի դանակը և խնդրեց հեռանալ: Բայց նա շարունակում էր հարվածել ու հայհոյել: Այդ ժամանակ Նահապետը դանակով հարվածեց Նարեկին՝ առողջությանը պատճառելով ծանր վնաս:

Ինչպե՞ս պետք է գնահատել Նահապետի արարքը:

Խնդիր 2.

Նարեկը նստած էր ուեստորանում, երբ նրա վրա հարձակվեցին երկու հոգի: Լինելով մարզված և ամրակազմ երիտասարդ՝ Նարեկը երկուսին էլ կարճ ժամանակահատվածում գետնին տապալեց: Նրանցից մեկը կորցրեց գիտակցությունը, իսկ մյուսը փախավ: Հասնելով նրա հետևից՝ Նարեկը իր մոտ եղած դանակով բազմաթիվ հարվածներ հասցրեց նրան: Ստացած վերքերից նա մահացավ:

Ինչպե՞ս պետք է գնահատել Նարեկի արարքը:

Խնդիր 3.

Անահիտը նստած էր իր տանը, երբ բակից աղմուկ լսեց: Դուրս գալով բակ՝ նա տեսավ, որ իր շունը հարձակվել է ցանկապատից բակ մտած անձանոթի վրա: Նա հանգիստ կանգնած նայում էր, թե ինչպես է իր շունը մահացու վերքեր հասցնում անձանոթին: Այնուհետև շտապօգնություն զանգահարեց: Հիվանդանոցի ճանապարհին անձանոթը մահացավ:

Ինչպիսի՞ քրեաիրավական գնահատական պետք է տրվի Անահիտի արարքին:

4.3.2. Ի՞նչ է նշանակում ծայրահեղ անհրաժեշտություն.

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 44-ի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում:

Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վնասը պատճառվում է մի երրորդ անձի, այլ ոչ թե անմիջապես ոտնձգողին, ինչպես դա տեղի է ունենում անհրաժեշտ պաշտպանության ժամանակ:

Սպառնացող վտանգի աղբյուրները, որոնցից խուսափելու համար անձը ստիպված վնաս է հասցնում մի երրորդ անձի, բազմազան են: Դրանք կարող են լինել բնության երևույթները, կենդանիների հարձակումները, մարդու գործողությունները և այլն:

Որո՞նք են ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները

Ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները բաժանվում են երկու խմբի՝ սպառնացող վտանգին վերաբերող իրավաչափության պայմաններ ու սպառնացող վտանգը կանխելուն ուղղված իրավաչափության պայմաններ:

Սպառնացող վտանգին վերաբերող իրավաչափության պայմաններն են.

- վտանգը պետք է սպառնա անձի կյանքին, առողջությանը, իրավունքներին և ազատություններին, հասարակության կամ պետության շահերին,
- վտանգը պետք է իրական լինի: Այսինքն՝ վտանգը պետք է գոյություն ունենա իրականության և ոչ թե անձի երևակայության մեջ,
- վտանգը պետք է առկա լինի: Այսինքն՝ չսկսված կամ ավարտված վտանգը չի կարող ծայրահեղ անհրաժեշտության վիճակ առաջացնել: Ծայրահեղ անհրաժեշտության վիճակ կարող է ստեղծվել նաև, երբ վտանգը սկսվելու իրական, անմիջական սպառնալիք կա:

Սպառնացող վտանգը կանխելուն ուղղված գործողություններին վերաբերող իրավաչափության պայմաններն են.

- ծայրահեղ անհրաժեշտությունը հանցավորությունը բացառող հանգամանք է համարվում այն դեպքում, երբ սպառնացող վտանգը տվյալ պայմաններում այլ միջոցներով հնարավոր չէր վերացնել, այսինքն, եթե հնարավոր է խուսափել վտանգից՝ առանց որևէ վնաս պատճառելու, բայց այն պատճառվում է, ապա բացառվում է ծայրահեղ անհրաժեշտությունը,
- վնասը պետք է հասցվի երրորդ անձանց շահերին, և ոչ թե վտանգի աղբյուրին: Որպես երրորդ անձ՝ կարող են հանդես գալ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք,
- վտանգը կանխելու համար հասցվող վնասը պետք է ավելի փոքր լինի, քան սպառնացող վտանգը: Այլապես թույլ կտրվի անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության հարաբերակցությունը


Ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանների քննարկումը թույլ է տալիս որոշակի զուգահեռներ անցկացնել դրա և անհրաժեշտ պաշտպանության միջև, բացահայտել այս երկու ինստիտուտների նմանություններն ու տարբերությունները:

Նրանց ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ ուղղված են օրենքով պաշտպանվող շահերի պաշտպանությանը: Դրանով այս երկու ինստիտուտների միջև նմանությունը սահմանափակվում է: Նշված ինստիտուտների տարբերությունը հանգում է հետևյալին.

- անհրաժեշտ պաշտպանության ժամանակ վտանգի աղբյուր են հանդիսանում ոտնձգողի արարքները, և սպառնացող վտանգից պաշտպանությունն իրականացվում է ոտնձգողին վնաս հասցնելու միջոցով, մինչդեռ ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ վտանգի աղբյուր են հանդիսանում ամենատարբեր երևույթներ, և վտանգը կանխելու համար վնասը պատճառվում է ոչ թե վտանգի աղբյուրին, այլ՝ երրորդ անձանց շահերին:
- անհրաժեշտ պաշտպանությունն իրավաչափ է համարվում նույնիսկ այն դեպքում, երբ առկա են ոտնձգությունից պաշտպանվելու այլ միջոցներ, որոնք կապված չեն

նունձգողին վնաս հասցնելու հետ, մինչդեռ ծայրահեղ անհրաժեշտությունը իրավաչափ է համարվում միայն այն դեպքում, երբ վտանգը կանխելու այլ միջոցներ չկան, և միակ միջոցը երրորդ անձանց շահերին վնաս պատճառելն է,

- անհրաժեշտ պաշտպանությունն իրավաչափ է համարվում նույնիսկ այն դեպքում, երբ նունձգողին ավելի մեծ վնաս է հասցվում, քան այն վնասը, որը սպառնում էր, մինչդեռ ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ հասցված վնասը կանխվածի համեմատ պետք է ավելի փոքր լինի:



Հարցեր

- Ինչպե՞ս կարելի է տարբերակել անհրաժեշտ պաշտպանությունը ծայրահեղ անհրաժեշտությունից:
- Ինչպիսի՞ պահանջներ են ներկայացվում ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասին:
- Որո՞նք են ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները:

- Ե՞րբ կարելի է արձանագրել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Խնդիր 1.

Նահապետը մեքենայի առջև հանկարծակի հայտնված Նարեի վրա վրաերթը կանխելու համար կտրուկ թեքեց մեքենայի դեկը և անզգուշությամբ վրաերթի ենթարկեց Շաքեին, ում առողջությանը ծանր վնաս հասցվեց:

Արդյո՞ք Նահապետը կենթարկվի քրեական պատասխանատվության, և եթե այո, ապա ինչի՞ համար:

Խնդիր 2.

Պահեստում մեծ հրդեհ էր բռնկվել: Մինչ հրշեջները մարում էին պահեստի այն մասի կրակը, որտեղ թանկարժեք սպասքեղենն էր գտնվում, Նարեկը նկատեց, որ աշխատակիցներից մեկը մնացել է պահեստի մյուս մասում: Նա հրշեջներին առաջնորդեց այրվող պահեստի այն մասը, որտեղ գտնվում էր աշխատակցուհին: Հրշեջներին հաջողվեց մարել կրակը և փրկել աշխատակցուհուն: Իսկ ահա սպասքը փրկել չհաջողվեց:

Գնահատե՛ք Նարեկի արարքը:

Խնդիր 3.

Նարեկը, Մհերը և Նահապետը աշխատում էին Ավստրալիա թռչող ինքնաթիռի անձնակազմում: Օրերից մի օր, երբ կատարում էին հերթական թռիչքը, տեղի ունեցավ դժբախտ պատահար, որի արդյունքում նրանք երեքով հայտնվեցին անմարդաբնակ կղզում: Չունենալով ուտելու ոչ մի բան և գիտակցելով, որ օգնությունը միայն մի քանի ամիս անց է հասնելու՝ նրանք որոշեցին վիճակահանության միջոցով ուտել իրենցից մեկին: Արդյունքում, Նահապետը և Նարեկը կերան Մհերին: Տասն օր անց նրանց օգնության հասան փրկարարները:

Ինչպե՞ս պետք է որակել Նահապետի և Նարեկի արարքները:

Կփոխվե՞ր արդյոք իրավիճակը, եթե օգնությունը հասներ երկու օր անց:

4.4. Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածի էությունը

Անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության հոդված 21-ում, համաձայն որի՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են իսկապես մեղադրյալի:

Սահմանադրության այս դրույթները խարսխված են մարդու իրավունքների ոլորտի միջազգային պայմանագրերի դրույթների վրա: Անմեղության կանխավարկածը համարվում է քրեադատավարական սկզբունք և գործում է վերջինիս բոլոր փուլերում՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կոչված է կանխելու մարդու նկատմամբ՝ որպես հանցագործի, ժամանակից շուտ և անհիմն բացասական վերաբերմունքը: Ուստի այն անհատի իրավունքների ու ազատությունների պահպանման ու պաշտպանության գործուն միջոց է: Անմեղության կանխավարկածի դեպքում քաղաքացու բարեպաշտությունը նախապես համարվում է հավաստի, այսինքն՝ քաղաքացին կանխավ ենթադրվում է անմեղ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Բանավոր ու գրավոր հայտարարությունները, ՁԼՄ-ներում արված հրապարակումները, չեն կարող համարվել մարդու մեղավորության հիմք: Դրանք հակասում են օրենքին: Ապակոդիֆիկացիայի հասարակական կարծիքը, երբեմն անհիմն մեղադրելով մարդկանց՝ դրանք կարող են բացասաբար ազդել դատարանի վրա: Մարդուն հանցագործության մեջ մեղավոր կարող է ճանաչել միայն դատարանը՝ կայացնելով մեղադրական դատավճիռ, որը պետք է մտնի օրինական ուժի մեջ:

Որո՞նք են անմեղության կանխավարկածի երաշխիքները

Անմեղության կանխավարկածի կյանքի կոչման համար սահմանվել են մի շարք երաշխիքներ.

- կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Ազատվելով ապացուցման պարտականությունից՝ մեղադրյալն իրավունք ունի մասնակցելու ապացուցմանը՝ օրենքով սահմանված միջոցներով, ձևերով ու կարգով:
- հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Անձը չի կարող մեղավոր ճանաչվել ենթադրությունների ու չփարատված կասկածների հիման վրա. դրանք մեկնաբանվում են իսկապես մեղադրյալի:
- կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

Անմեղության կանխավարկածի կյանքի կոչումը ողջ քրեական դատավարության ընթացքում կարևոր նշանակություն ունի ոչ միայն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից, այլև ամբողջությամբ վերցրած օրինականության ապահովման դիրքերից:



- Ո՞րն է անմեղության կանխավարկածի դերն ու նշանակությունը:
- Ներկայացրե՛ք անմեղության կանխավարկածի բովանդակությունը: Արդյո՞ք առկա են երաշխիքներ անմեղության կանխավարկածի ապահովման համար:

Խնդիր

Մինչ դատական քննությունը սկսելը՝ դատավորը հայտարարեց, որ իր անմեղությունն ապացուցելու պարտականությունը դրված է ամբաստանյալ Նահապետի վրա: Նահապետը, ի վիճակի չլինելով ներկայացնել համապատասխան ապացույցներ, դատարանի կողմից ճանաչվեց մեղավոր և ենթարկվեց քրեական պատասխանատվության:

Արդյո՞ք իրավացի էր դատավորը: Ինչպե՞ս կվարվեիք Դուք՝ դատավորի փոխարեն:

4.5. Ձերբակալում

Ի՞նչ է ձերբակալումը

Դատավարական հարկադրանքի միջոցներից ձերբակալումը գործի քննության ընթացքում կատարվող անհետաձգելի գործողություններից է: Ձերբակալման էությունը նրանում է, որ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը օրենքով սահմանված կարճ ժամկետով զրկվում է ազատությունից՝ անձը պարզելու, հանցագործության կատարմանը նրա առնչությունը ճշտելու, ինչպես նաև հետագայում նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու նպատակահարմարության հարցը լուծելու համար:

Այն ունի կոնկրետ նպատակ, այն է՝ կանխել անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը: Անձի ձերբակալումն իրենից ներկայացնում է միմյանց հաջորդող հետևյալ գործողությունների համակցություն.

- անձին արգելանքի վերցնելը, այսինքն՝ նրան ազատությունից փաստացի հարկադրական զրկելը,
- նրան հետաքննության մարմին կամ վարույթն իրականացնող մարմին բերելը,
- ձերբակալման արձանագրություն կազմելը,
- կազմված արձանագրության մասին ձերբակալված անձին հայտարարելը:

Ձերբակալման պահից անձը ստանում է կասկածյալի կարգավիճակ, դառնում քրեական դատավարության սուբյեկտ և օժտվում է համապատասխան իրավունքներով և պարտականություններով:

Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը տրվում է ձերբակալված անձին:

Անձը կարող է ձերբակալված մնալ առավելագույնը 72 ժամ, որից հետո ենթակա է անհապաղ ազատ արձակման, եթե չի կալանավորվում:

Ո՞րոնք են ձերբակալման տեսակները

Օրենքով նախատեսված է ձերբակալման երկու տեսակ՝

- ձերբակալում հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա,
- ձերբակալում քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:

Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը կարող է ձերբակալվել հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կողմից միայն այդ կասկածանքը հաստատող հիմքերի

առկայության դեպքում: Այդ հիմքերը ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 129-ի 1-ին մասով, այն է՝


1. նա բռնվել է քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո,

2. ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին՝ որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի,

3. տվյալ անձի կամ նրա հագուստի վրա, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր,

4. կան այլ հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, որը դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում, կամ որի անձնավորությունը պարզված չէ:

Հանցագործության մեջ կասկածվող անձից բացի ձերբակալումը կարող է կիրառվել նաև մեղադրյալի նկատմամբ, որի համար հիմք է մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելը: Պրակտիկայում, սովորաբար, ձերբակալումն ուղեկցվում է ձերբակալվածի անձնական խուզարկությամբ: Այն դեպքում, երբ չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մասին կասկածը, բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը կամ լրացել է ձերբակալման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել, ապա անձը ազատ է արձակվում:



Հարցեր

- Թվարկել ձերբակալման բովանդակությունը կազմող գործողությունները:
- Որո՞նք են ձերբակալման նպատակները:
- Նշել ձերբակալման տեսակները, ներկայացնել դրանց էությունը:

Խնդիր

Գողության կատարման պահին ոստիկանության աշխատակիցները ձերբակալեցին 17-ամյա Մհերին: Ձերբակալությունից 3 օր անց Մհերին ազատ չարձակեցին՝ պատճառաբանելով, որ այդ երեք օրերից երկուսը եղել են ոչ աշխատանքային, և քրեական հետապնդման մարմիններն ի վիճակի չեն եղել զբաղվելու Մհերի գործով:

Առկա է արդյոք օրենքի խախտում Մհերի ձերբակալման գործընթացում:

4.6. Կալանավորում

Ի՞նչ է կալանավորումը

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 137-ի 1-ին մասի՝ կալանավորումը օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն է: Կալանավորում (կալանք) խափանման միջոցը անհրաժեշտ է տարբերել կալանք պատժատեսակից: Կալանք պատժատեսակը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով և հանդիսանում է պատիժների համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ կալանք խափանման միջոցը հանդիսանում է ամենախիստ միջոցը, որն առավելագույն չափով սահմանափակում է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները և նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Քանի որ այն սահմանափակում է այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են՝ ազատությունը և անձեռնմխելիությունը, ուստի ընտրվում է միայն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված մյուս խափանման միջոցները չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը՝ միաժամանակ հասարակության համար մեծ վտանգավորություն ներկայացնող անձանց կողմից նոր հանցագործությունների կատարումը կամ քրեական գործի քննությանը խոչընդոտելը կանխելը:

Անձի կալանավորումը կրում է նախնական բնույթ, քանի որ կիրառվում է հանցագործության կատարման մեջ մեղադրվող, այլ ոչ թե դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր ճանաչված ու դատապարտված անձի նկատմամբ: Դրա հետևանքով անձը ժամանակավորապես զրկվում է ազատությունից, սակայն նրա վերաբերյալ առկա քրեական գործը կարող է կարճվել, նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, դատարանը կարող է կայացնել արդարացման դատավճիռ:

Որո՞նք են կալանքի դատավարական երաշխիքները

Կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ստուգելու նպատակով օրենքով սահմանված են մի շարք երաշխիքներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման.

- անձը կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով,
- կալանավորումը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ,
- կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել քրեական գործի քննությանը:

Կալանավորման կիրառման կարգը

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար՝ քննիչը կամ դատախազը միջնորդություն են ներկայացնում դատարան, որում նշում են այն շարժառիթներն ու հիմքերը, որոնց հիման վրա անհրաժեշտ է կալանավորել մեղադրյալին:

Միջնորդության քննության արդյունքում դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Ընդհանուր կանոնի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող 2 ամսից ավելի լինել, սակայն առկա է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման հնարավորություն, այսպիսով, այն դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև 6 ամիս ժամկետով, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս:

Առանձին կատեգորիայի անձանց կալանավորման առանձնահատկությունները

Պատգամավորին չի կարելի կալանավորել առանց Ազգային ժողովի համաձայնության: Դատավորը և Սահմանադրական դատարանի անդամը կարող են կալանավորվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնության: Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք չեն կարող կալանավորվել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է նրանց նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարման համար: Անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը, որպես խափանման միջոց, թույլատրվում է կիրառել միայն այն

դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարում:

Ե՞րբ է անձը ազատվում կալանավորումից

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 142-ի 1-ին մասի՝ մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝

- կարճվել է համապատասխան քրեական գործի վարույթը կամ նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը,
- դատարանը դատապարտյալին նշանակել է պատիժ, որը կապված չէ ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ կալանքի հետ,
- քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզել է անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայությունը,
- լրացել և չի երկարացվել կալանավորման մասին որոշում կայացնելիս կալանքի տակ պահելու՝ դատարանի կողմից սահմանված ժամկետը,
- լրացել է անձին կալանքի տակ պահելու սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը,
- մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը:



Հարցեր

- Տվե՛ք կալանավորման հասկացությունը:
- Ի՞նչ նպատակ է հետապնդում կալանքը:
- Ընդգծե՛լ կալանք պատժատեսակի և կալանք խափանման միջոցի տարբերակիչ հատկանիշները:
- Ինչպիսի՞ դատավարական երաշխիքներ են սահմանվել կալանքի կիրառման ընթացքում:
- Հնարավո՞ր է արդյոք անձին չազատել կալանքից դրա ժամկետի լրանալու դեպքում, եթե վերջինս կատարել է առանձնապես ծանր հանցագործություն:

Խնդիր

Նարեկը կատարել էր սպանություն 2013թ. փետրվարին: Մեկ ամիս անց նա կալանավորվեց և տեղափոխվեց կալանավայր: Քրեական գործի նախաքննությունը տևեց մոտ մեկուկես տարի, որի ողջ ընթացքում Նարեկը գտնվում էր կալանավայրում: Նարեկը հավատացած էր, որ ամեն ինչ օրինական է, քանի որ ի վերջո այդ ժամանակահատվածը հանվելու է իր նկատմամբ նշանակվելիք ազատագրկման ձևով պատժատեսակի ժամկետից:

Արդյո՞ք իրավացի էր Նարեկը իր մտորումներում:

4.7. Գրավ

Ի՞նչ է գրավը

Խափանման միջոցներից իր նշանակությամբ առանձնանում է գրավը: Դրա էությունը կայանում է նրանում, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով մեկ կամ մի քանի անձինք դրամի, արժեթղթերի կամ այլ արժեքների ձևով ներդրում են կատարում դատարանի դեպոզիտ: Այս խափանման միջոցը կարող է կիրառվել միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած մեղադրյալի նկատմամբ, այն էլ կալանավորման փոխարեն:

Գրավը մուծված լինելու մասին տեղեկատվություն ստանալուց անմիջապես հետո միջոցներ են ձեռք առնվում մեղադրյալին կալանքից ազատելու համար:

Որոշ դեպքերում դատարանը կարող է մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի: Օրինակ, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, չունի մշտական բնակության վայր և այլն:

Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց համապատասխան թույլտվության մեկնել է այլ վայր, դատախազը գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ դիմում է դատարան:

Մեղադրյալի կողմի իր վրա դրված պարտականություններն ու նախատեսված սահմանափակումները խախտելու դեպքում գրավը կարող է փոխարինվել կալանավորմամբ:

Բոլոր դեպքերում գրավը վերադարձվում է գրավատուին, եթե կալանքից գրավով ազատված մեղադրյալը բարեխղճորեն կատարել է օրենքով իր վրա դրված պարտականությունները, ինչպես նաև, երբ գրավը որպես խափանման միջոց փոխվում կամ վերացվում է:

Ովքե՞ր կարող են հանդիսանալ գրավատու և ո՞րքան է գրավի չափը

Որպես գրավատու կարող են հանդես գալ ինչպես մեղադրյալը, այնպես էլ նրա մերձավորները կամ այլ անձինք: Բացի պետական կազմակերպություններից՝ գրավատու կարող է լինել նաև ցանկացած կազմակերպություն: Դատարանի թույլտվությամբ, որպես գրավ, կարող է ընդունվել նաև անշարժ գույքը: Բոլոր դեպքերում գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն:

Գրավի կիրառման հարցը լուծելիս դատարանը որոշում է նաև գրավի չափը: Ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի համար այն չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից, իսկ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվողի համար՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից: Առավելագույն չափ սահմանված չէ: Գրավատուի նյութական վիճակը, գործով ներկայացված քաղաքացիական հայցի չափը, հանցագործության բնույթը, մեղադրյալի անձը և այլ հանգամանքներ հաշվի առնելով՝ կոնկրետ մեղադրյալի նկատմամբ նշանակվում է կոնկրետ գրավի չափ:



Հարցեր

- Ինչպիսի՞ խափանման միջոց է հանդիսանում գրավը:
- Կարո՞ղ է արդյոք դատարանը արգելել գրավի կիրառությունը, եթե այո, ապա ի՞նչ հիմնավորմամբ:
- Որո՞նք են գրավի կիրառման պայմանների խախտման հետևանքները:
- Ովքե՞ր կարող են լինել գրավատուներ:

- Ինչպե՞ս է հարաբերակցվում հանցագործության ծանրության աստիճանը գրավի չափի հետ:

Խնդիր

Գողություն կատարելու հիմքով մեղադրանք առաջադրված Նարեկի նկատմամբ դատարանը որոշեց կիրառել կալանք խափանման միջոցը, որը փոխարինվեց գրավով: Դատարանը սահմանեց նաև վճարվելիք գրավի չափը՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

Գնահատեք դատարանի գործողությունները:

4.8. Խուզարկություն

Ի՞նչ է խուզարկությունը և որո՞նք են դրա տեսակները

Խուզարկությունն իրենից ներկայացնում է գործի համար նշանակություն ունեցող առարկաների ու փաստաթղթերի որոնման և դրանք վերցնելու քննչական գործողություն: Քննիչը խուզարկություն է կատարում, երբ բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ ու փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար: Խուզարկությունը հետապնդում է նշված առարկաները ու փաստաթղթերը հայտնաբերելու և վերցնելու նպատակ:

Խուզարկությունը լինում է՝

- շենքի կամ այլ տեղի,
- բնակարանի,
- անձնական
- բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

Որո՞նք են խուզարկության կատարման պայմանները

Խուզարկության կատարման ընդհանուր պայմաններն են՝ ինչպես քրեական գործի հարուցման փաստը, այնպես էլ գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվող բավարար հիմքերը քննիչի, իսկ բնակարանի խուզարկության դեպքում՝ նաև դատարանի որոշման առկայությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 227-ի 1-ին մասի՝ խուզարկությունը կատարվում է ընթերակաների պարտադիր մասնակցությամբ: Ընթերակաների թիվը չի կարող պակաս լինել երկուսից, որոնց ներկայությամբ պետք է կատարվեն բոլոր որոնումները: Այն, ինչը հայտնաբերվել է առանց ընթերակաների մասնակցության, չի ընկալվել նրանց կողմից հայտնաբերման պահին, չի կարող ծառայել ապացույց, քանի որ կարող է վիճարկվել, ուստի քննիչը պարտավոր է ապահովել ընթերակաների ներկայությունը: Խուզարկություն կատարելիս պետք է ապահովվի նաև այն անձի կամ նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, ում շենքում կամ բնակարանում կատարվում է խուզարկությունը: Նշյալ հանգամանքի ապահովման անհնարինության դեպքում հրավիրվում է բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը: Քննիչն իրավունք ունի խուզարկության կատարմանը ներգրավել հետաքննության մարմինների և ոստիկանության ներկայացուցիչներին, երբ հնարավոր է դիմադրություն, կարիք կա խուզարկության կատարման վայրում պահպանելու կարգ ու կանոն և այլ դեպքերում:

Մինչև խուզարկության կատարման սկսվելը քննիչը պարտավոր է ծանոթացնել խուզարկություն կատարելու որոշմանը այն անձանց, ում մոտ այն պետք է կատարվի, ինչպես նաև առաջարկում է հանձնել որոնվող առարկաները ու փաստաթղթերը կամ թաքնված անձին:


Որոնման ուղղությունը, դրա մեթոդները որոշում է քննիչը, քանի որ դրանք վերաբերում են կրիմինալիստական տակտիկային և կարգավորված չեն օրենքով: Քննիչը նույնիսկ իրավունք ունի բացելու փակված շինություններն ու պահեստարանները, եթե դրանց տերը հրաժարվում է կամովին բացել, սակայն պետք է յուրաքանչյուր դեպքում խուսափել փականքներ, դռներ և այլ առարկաներ առանց անհրաժեշտության վնասելուց:

Խուզարկության արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ քննիչը իրավունք ունի արգելել խուզարկության վայրում գտնվող անձանց հեռանալու

այդտեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը:

Խուզարկության ընթացքում հայտնաբերված բոլոր որոնվող առարկաները ու փաստաթղթերը ենթակա են վերցման:

Անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունից ելնելով՝ բնակարանի խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ: Այդպիսի որոշում անհրաժեշտ է նաև բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար կատարվող խուզարկության դեպքում: Քննիչը խուզարկությունը ավարտելիս կազմում է արձանագրություն:



Հ ա ռ ց ե թ

- Ո՞րն է խուզարկության էությունը:
- Ո՞ր դեպքերում է թույլատրվում կատարել խուզարկություն:
- Խուզարկության ինչպիսի տեսակներ են առկա:
- Ինչպիսի դերակատարում ունեն ընթերակաները խուզարկության ժամանակ:

- Ինչպիսի իրավունքներով է օժտված քննիչը խուզարկության ժամանակ:

Խնդիր

Խուզարկություն կատարելու նպատակով՝ Նահապետի տուն էին եկել քրեական հետապնդման մարմնի աշխատակիցները: Նահապետին չգտնելով տանը՝ ձեռնունայն հետ վերադարձան:

Արդյո՞ք հնարավոր է խուզարկել անձի բնակարանը՝ առանց վերջինիս ներկայության:

4.9. Առգրավում

Ի՞նչ է առգրավումը

Առգրավումը քննիչը կատարում է գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում, երբ ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում: Առգրավման՝ որպես քննչական գործողության, օրենսդրական բնորոշումից բխում է, որ այն խուզարկությունից տարբերվում է նրանով, որ այստեղ չկա ենթադրությունը և, հետևաբար, բացակայում է որոնումը: Գործում արդեն առկա հանգամանքներից և ապացուցողական տվյալներից քննիչը նախ գիտի, թե որ առարկան կամ փաստաթուղթն է ենթակա վերցման, և երկրորդ՝ որտեղ է այն գտնվում: Չնայած օրենքում ուղղակիորեն նշված չէ, սակայն ենթադրվում է, որ առգրավման կատարման իրավական հիմքը քննիչի կողմից կայացված պատշաճ որոշումն է, որում պետք է նշվեն առգրավման կատարման փաստական հիմքերը:

Որո՞նք են առգրավման կատարման պայմանները

Առգրավման՝ որպես քննչական գործողության կատարման ընդհանուր պայմաններից են քրեական գործի հարուցման փաստը, գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված բավարար փաստական հիմքերը, քննիչի որոշման առկայությունը: Ինչպես խուզարկությունը, առգրավումը ևս կատարվում է ընթերակաների ներկայությամբ:

Առգրավում կատարելիս պետք է ապահովվի այն անձի կամ նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, ում շենքում կամ բնակարանում կատարվում է առգրավումը:

Առգրավում կատարելուց առաջ քննիչը ծանոթացնում է այն կատարելու որոշման հետ նրանց, ում մոտ կատարվում է առգրավումը: Այդ մասին քննիչը նրանցից վերցնում է ստորագրություն: Առգրավման ընթացքում վերցված բոլոր առարկաներն ու փաստաթղթերը ներկայացվում են քննչական գործողության մասնակիցներին, մանրամասն նկարագրվում են արձանագրության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կնքվում քննիչի կնիքով:

Առգրավման ավարտին կազմվում է արձանագրություն, որպեսզի բացառվեն առգրավման կատարման ընթացքում առգրավման ենթակա առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելու կամ թաքցնելու փորձերը:

Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավումը կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով:



Հարցեր

- Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի առգրավումը:
- Ներկայացնել առգրավման ընթացքը:
- Ովքե՞ր պետք է ներկա գտնվեն բնակարանում առգրավման ժամանակ:

Խնդիր

Առգրավում կատարելու ժամանակ քննիչը, հաշվի առնելով ժամանակի սղությունը և չցանկանալով անհանգստություն պատճառել Նահապետին և նրա ընտանիքի անդամներին, որոշեց առգրավված իրերի կապակցությամբ արձանագրություն չկազմել, քանի որ այն լրացուցիչ ժամանակ կիսլեր: Այնուհետև, իր առանձնասենյակ գալով, կազմեց արձանագրությունը, հրավիրեց նաև մի քանի անձանց, ովքեր ստորագրեցին՝ որպես ընթերականեր:

Նշել, թե ինչպիսի՞ դատավարական սխալներ են թույլ տրվել քննիչի կողմից:

4.10. Քրեական գործերի քննությունը դատարանում

Քրեական գործերի քննության գործընթացի կենտրոնական փուլը դատական քննությունն է, որի ընթացքում դատարանն, ըստ էության, քննում և լուծում է քրեական գործը: Դատական քննության պետք է նշանակվեն այն գործերը, որոնցով առկա են բավարար ապացույցներ, և որոնց քննության ընթացքում պահպանվել են օրենքի բոլոր նորմերը: Դատական քննությունը չպետք է ձգձգվի, վերածվի քաշքշուկի, մարդիկ անհիմն մեղադրանքով չպետք է նստեն ամբաստանյալի աթոռին: Եթե դատական քննության են նշանակվում գործեր, որոնցով նախաքննությունը կատարված է ոչ լրիվ, մեղադրանքը հիմնավոր չէ, ապա դա կհանգեցնի գործի քննության հետաձգման, գործի անարդարացի լուծման:

Դատական քննության ձախողումներն ու ձգձգումները անթույլատրելի են, քանի որ դրանք նսեմացնում են դատական իշխանության հեղինակությունը: Արդարադատություն իրականացնելիս գործի քննության օրենքով սահմանված ժամկետների խախտումը և ձգձգումը, դատական քաշքշուկներն առաջ են բերում մի շարք բարդություններ, կորչում են ապացույցները, տարբեր պատճառներով փոխվում են վկաների և տուժողների ցուցմունքները, նշանակալիորեն թուլանում է դատական վարույթի և դատավճռի կանխիչ ազդեցությունը, խախտվում է բանական, օրենքով սահմանված ժամկետներում գործի քննության մեղադրյալի իրավունքը, հատկապես այն մեղադրյալի, ով գտնվում է կալանքի տակ:

Քրեական գործի դատական քննության փուլերը

Քրեադատավարական օրենսդրությունն առանձնացնում է քրեական գործի դատական քննության հետևյալ փուլերը.

- դատական նիստի նախապատրաստական մաս,
- դատաքննություն,
- դատական վիճաբանություններ,
- ամբաստանյալի վերջին խոսք,
- դատավճիռ կայացնելը:

Դատական քննության նախապատրաստական մասի խնդիրներն են ստուգել դատական նիստ անցկացնելու համար անհրաժեշտ նախադրյալների և պայմանների առկայությունը, որոշել նիստի մասնակիցների շրջանակը, ապահովել բոլոր անհրաժեշտ ապացույցների հետազոտման հնարավորությունը դատարանում և ձեռնարկել միջոցներ դատական նիստի կազմակերպման ապահովման համար:

Դատաքննության ընթացքում դատարանը, կողմերի մասնակցությամբ քրեական դատավարության սկզբունքների առավել լրիվ իրականացման պայմաններում, ուսումնասիրում է բոլոր առկա ապացույցները հանցագործության փաստական հանգամանքները պարզելու համար:

Դատական վիճաբանությունների ժամանակ ելույթ են ունենում դատավարության մասնակիցները, որոնք իրենց դիրքերից ամփոփում են դատաքննության արդյունքները:

Մեղադրական ճառում մեղադրողն արտահայտում է իր մոտեցումն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ, որի հիմնավորվածությունն արդեն ստուգվել է դատաքննության ընթացքում, իսկ պաշտպանն իր ճառը կառուցում է պաշտպանության դիրքերից ելնելով:

Դատավճիռն ներկայացվող պահանջները

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս: Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

- դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա,
- այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար,
- դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:



Հարցեր

- Ինչպե՞ս է կատարվում քրեական գործերի քննությունը դատարանում:
- Ինչպիսի՞ փուլեր են առկա մինչև դատարանի կողմից դատավճռի կայացումը:
- Տվե՛ք դատական քննության փուլերի հակիրճ նկարագիրը:
- Արդյո՞ք դատարանը սահմանափակված է որոշակի պահանջներով դատավճիռ կայացնելիս:

Խնդիր

Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Շաքեի՝ իգական սեռի ներկայացուցիչ լինելը, ինչպես նաև ցանկանալով ապահովել վերջինիս շահերի պաշտպանությունը, առանց որևէ դատական նիստ անելու դատապարտեց նրան մեկ տարվա ազատազրկման՝ հիմք ընդունելով նախաքննության ընթացքում ձեռք բերված և հետազոտված ապացույցները:

Արդյո՞ք օրինական են դատարանի գործողությունները և արդյո՞ք դրանք բխել են Շաքեի շահերից:

4.11. Անչափահասների մասնակցությամբ արդարադատության առանձնահատկությունները

Արդարադատության իրականացումը անչափահասների նկատմամբ օժտված է մի շարք առանձնահատկություններով: Այդպիսի առանձնահատկությունները ամրագրվել են պայմանավորված հանցագործության այս խումբ սուբյեկտների հոգեֆիզիոլոգիական վիճակով: Ի տարբերություն չափահասների՝ անչափահասները դեռևս չունեն կայուն ձևավորված աշխարհայացք, տեսակետ, անհամեմատ ավելի դյուրին է իրականացնել պատժի նպատակները՝ ուղղել անչափահաս տարիքում հանցանք կատարած անձին: Բացի այդ, ամբողջությամբ չեն ձևավորվել նաև ֆիզիկապես, ուստի չափահասների հետ համահավասար պատիժների նշանակումը, արդարադատության իրականացումը մեծապես կվնասի նրանց, կխոչընդոտի նրանց մտավոր և հոգեֆիզիոլոգիական զարգացումը, որը կհանգեցնի անառողջ սերնդի ձևավորման:

Անչափահասների գործերով վարույթի հատուկ կարգ սահմանելով՝ օրենսդիրը ելնում է անչափահաս կասկածյալների ու մեղադրյալների տարիքային, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններից, որոնք պահանջում են նրանց իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքներ:

4.11.1. Ինչպիսի՞ պատիժներ կարող են նշանակվել անչափահասների նկատմամբ

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 85-ի համաձայն՝

«Հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ կամ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ»:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 86-ի համաձայն՝

«Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներն են տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը, որոշակի ժամկետով ազատազրկումը»:

Պետք է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 49-ով նախատեսված պատժի տեսակներից, հանցանք կատարած անչափահասների նկատմամբ չեն կարող կիրառվել

որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, գույքի բռնագրավումը, ցմահ ազատազրկումը: Անչափահասները չեն կարող ենթարկվել նաև մի շարք այնպիսի պատիժների, որոնք նշանակվում են զինծառայողների նկատմամբ (հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, կարգապահական գումարտակում պահելը):

Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն տուգանք և հանրային աշխատանքներ պատժատեսակները

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 87-ի առաջին մասի՝ տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի սեփական գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Տուգանքն անչափահասի նկատմամբ նշանակվում է պատիժը նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած առավելագույն երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Հանրային աշխատանքներ չեն կարող նշանակվել դատավճռի կայացման պահին 16 տարին չլրացած անձանց նկատմամբ՝ ելնելով մարդասիրության սկզբունքից: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ի 2-րդ մասի համաձայն՝ այս պատժատեսակը նշանակվում է 270-ից 2200 ժամ ժամկետով: Այսպիսով, հանրային աշխատանքներ պատժատեսակի դեպքում որևէ առանձնահատկություն նախատեսված չէ անչափահասների նկատմամբ կիրառելիս:

Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն կալանք և որոշակի ժամկետով ազատազրկում պատժատեսակները

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 88-ի՝ այն կարող է նշանակվել դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրացած անչափահասի նկատմամբ՝ 15 օրից մինչև 2 ամիս ժամկետով: Ընդհանուր առմամբ այս պատժատեսակը հանցագործի նկատմամբ բարոյապես ներգործելու միջոց է, հատկապես եթե նա առաջին անգամ է հայտնվել մեղադրյալի աթոռին: Կալանքի դատապարտված անչափահասներին, ի տարբերություն չափահասների, թույլատրվում է ամսվա մեջ մեկ անգամ չորս ժամ տևողությամբ տեսակցություն ունենալ ծնողների հետ, ինչպես նաև օգտվել օրեկան երկու ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:

Անչափահասների պարագայում պետք է առավելագույնս խուսափել ազատազրկման ձևով պատիժ նշանակելուց: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 89-ի 2-րդ մասի համաձայն՝ ազատազրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

1. ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, իսկ միջին ծանրության համար՝ առավելագույնը 3 տարի ժամկետով

2. մինչև 16 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 7 տարի ժամկետով

3. 16 մինչև 18 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 10 տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ի 2-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 7 տարին, իսկ 16-ից մինչև 18 տարին լրացածներինը՝ 10 տարին: Դատավճիռների համակցության դեպքում պատիժը չի կարող գերազանցել 12 տարին:

Ինչպիսի՞ հանգամանքներ են հաշվի առնվում պատիժ նշանակելիս

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ի՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի

գարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը:

4.11.2. Անչափահասների մասնակցությամբ գործերի դատական քննության առանձնահատկությունները

Անչափահասների գործերով նախնական քննությունն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընդհանուր կանոններով: Եթե անչափահասը հանցանք է գործել չափահաս անձանց հետ համատեղ, ապա, ելնելով նրա գործի քննության արագության և անչափահասի վրա հանցակիցների բացասական ազդեցության վտանգը նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունից, քրեական գործը անչափահասի մասով օրենքով սահմանված կարգով պետք է անջատվի: Անչափահաս կասկածյալը կամ մեղադրյալը, որպես կանոն, քննիչի մոտ են կանչվում իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: Այս խումբ անձանց պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման առանցքային երաշխիքներից է պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Ի դեպ, պաշտպանի պարտադիր մասնակցության համար նշանակություն չունի, թե անչափահասը գործի քննության պահին 18 տարեկան դարձել է, թե ոչ: Կարևորագույն երաշխիքներից է նաև անչափահասների օրինական ներկայացուցիչների մասնակցությունը գործի քննությանը:

Երաշխիքներ ամրագրվել են նաև խափանման միջոցներ կիրառելիս: Անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարում: Գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի հետազոտության, ինչպես նաև անչափահաս ամբաստանյալի անձը և վարքագիծը, կյանքի և դաստիարակության պայմանները բնութագրող տվյալների առավել լրիվ բացահայտման նպատակով դատարանը կարող է դատական քննությանը մասնակից դարձնել անչափահասների գործերով տեսչության կամ հանձնաժողովի ներկայացուցչին կամ այն կազմակերպությունների ներկայացուցիչներին, որտեղ սովորում կամ աշխատում է անչափահաս ամբաստանյալը:

Եթե դատավճիռ կայացնելիս դատարանը գալիս է այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:



Հարցեր

- Ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված անչափահասների արդարադատության տարբերակումը:
- Ինչպիսի՞ պատժատեսակներ չեն կարող նշանակվել անչափահասների նկատմամբ:
- Ի՞նչ ժամկետներով կարող է նշանակվել կալանք պատժատեսակը:
- Ե՞րբ կարող է անչափահասի նկատմամբ նշանակվել տուգանք պատժատեսակը:
- Ինչպիսի՞ առանձնահատկություններ կան հանրային աշխատանքներ պատժատեսակի կիրառման ընթացքում:
- Ինչո՞վ է պայմանավորված պաշտպանի պարտադիր մասնակցությունը անչափահասների գործերով քննությանը:
- Ինչպիսի՞ իրավունքներով են օժտված օրինական ներկայացուցիչները:

Խնդիր

17-ամյա Միերին մեղադրանք էր առաջադրվել ավագակություն կատարելու համար: Վերջինիս ծնողները իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով դիմեցին փաստաբանի: Փաստաբանը նշեց, որ անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը էականորեն տարբերվում է ընդհանուր կանոնից:

Նշել, թե ինչպիսի՞ առանձնահատկություններ են առկա անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգում:

ԳԼՈՒԽ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

5.1. Ընտանիք և ամուսնություն

Մեզանից յուրաքանչյուրն ընտանիքի անդամ է և գտնվում է ընտանեկան իրավունքի ազդեցության դաշտում: Մենք ընտանիքի անդամ ենք դառնում ծննդյան պահից, ամուսնության միջոցով, որդեգրման և խնամակալության դեպքերում:

Նախքան ընտանեկան իրավունքի ուսումնասիրումն անհրաժեշտ է հասկանալ «ընտանիք» հասկացության նշանակությունը: Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Այն հիմնված է փոխադարձ սիրո ու հարգանքի վրա, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու անհրաժեշտության վրա: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածն ամրագրում է ամուսնական տարիքի հասած կնոջ և տղամարդու՝ ազատ կամահայտնությամբ ընտանիք կազմելու իրավունքը:

Ընտանիքի դասական մոդելը ներկայումս որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես՝ կան ընտանիքներ, որոնք ձևավորվում են ոչ թե օրենքով սահմանված կարգով գրանցման միջոցով, այլ Հայ Առաքելական եկեղեցու արարողակարգի հիման վրա: Այսպիսի ամուսնությունը չի համարվում օրինական ամուսնություն և չի առաջացնում իրավական հետևանքներ:

Որդեգրված երեխաներն իրավական առումով հավասարեցված են հարազատ երեխաների կարգավիճակին: Խնամակալության դեպքում երեխաները դաստիարակվում են խնամատար ընտանիքում, սակայն իրավական առումով չեն համարվում խնամակալ ծնողների հարազատ երեխաներ:

Ամուսնությունը ամուսնական տարիքի հասած կնոջ և տղամարդու միջև կնքվող պայմանագիր է, որը ստանում է պետական գրանցում քաղաքացիական կացության **ակտերի** գրանցման պետական մարմիններում: Միայն այստեղ գրանցված ամուսնությունն է օրենքը ճանաչում որպես այդպիսին: Ամուսիններն ունեն հավասար իրավունքներ ինչպես ամուսնանալիս, այնպես էլ ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս:

Ամուսնությունն ունի մի շարք կողմեր՝ անձնական, սոցիալական, տնտեսական և իրավական: Այս բաժնում աշակերտները կծանոթանան ամուսնանալու համար սահմանված իրավական պայմաններին և կարգին:



Հարցեր

- Արդյո՞ք հնարավոր է տալ «ընտանիք» հասկացության սահմանումը: Եթե այո, ապա ո՞րն է այն:
- Ինչպիսի՞ փոփոխություններ է կրել «ընտանիք» հասկացությունը ժամանակակից աշխարհում:

- Արդյո՞ք կա «իդեալական» ընտանիք: Եթե այո, ապա ինչպե՞ս կարող եք այն նկարագրել: Որքանո՞վ են կարևոր հետևյալ գործոնները ամուսնություն կնքելու համար՝ երջանկություն, երեխաներ, գումար, սեռական հարաբերություններ, կրոնական հայացքներ, ընդհանուր հետաքրքրություններ, տարիքային տարբերություններ և այլ գործոններ: Համարակալե՞ք դրանք ըստ կարևորության՝ նշելով 1 թիվը ամենակարևոր գործոնի դիմաց:

- Կազմե՛ք այն հարցերի ցանկը, որոնք դուք կտաք ինքներդ ձեզ ամուսնություն կնքելու վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ:

- Անցկացրե՛ք դերախաղ ամուսնանալ պատրաստվող զույգի միջև՝ փոխադարձ սպասումների ու ակնկալիքների մասին երկխոսության վերաբերյալ:

5.1.1. Ո՞վ կարող է ամուսնանալ, ամուսնության իրականացման կարգը

Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև կնքված պայմանագիր է, որով նրանք համաձայնվում են ապրել միասին որպես ամուսիններ: Ինչպես և մյուս պայմանագրերը, ամուսնության պայմանագիրը ևս առաջացնում է որոշակի իրավունքներ և պարտականություններ այն կնքողների համար: Ամուսնանալու ցանկություն ունեցող յուրաքանչյուր ոք պետք է բավարարի օրենքով սահմանված որոշակի պայմաններ: Օրինակ՝ արդեն իսկ ամուսնացած անձը չի կարող կրկին ամուսնանալ, եթե առաջին ամուսնությունը չի դադարեցվել քաղաքացիական կացության գրանցման մարմնի կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ կամ դատարանի կողմից: Մա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է մենամուսնության սկզբունքը, այսինքն՝ անձը կարող է միաժամանակ ամուսնացած լինել միայն մեկ անձի հետ:

Ամուսնանալու ամենակարևոր նախապայմանը կնոջ և տղամարդու ազատ, կամավոր համաձայնությունն է: Հարկադրանքի միջոցով ամուսնություն չի կարող կնքվել:

Օրենքն արգելում է նաև ամուսնությունը մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև, որդեգրողների և որդեգրվածների միջև, այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

Ամուսնություն կնքելու մյուս կարևոր պայմանը տարիքն է, ինչը նշանակում է, որ օրենքը սահմանում է ամուսնանալու նվազագույն տարիք՝ տասնութ տարեկան: Մակայն, այս կանոնից առկա են բացառություններ: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Երբ գույզն ամուսնանում է առանց պահպանելու օրենքով սահմանված պահանջները, ապա այդպիսի ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել: Սա նշանակում է, որ կնքված ամուսնությունը դադարեցվում է և համարվում է ուժը կորցրած: Ամուսնությունն անվավեր է ճանաչում դատարանը: Դատարանի կողմից ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել հետևյալ դեպքերում.

- երբ ամուսնացած անձանցից մեկը չի հասել օրենքով սահմանված ամուսնական տարիքի,
- երբ ամուսիններից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ,
- երբ ամուսնացած անձինք մերձավոր ազգականներ են,
- երբ ամուսնությունը կնքվել է որդեգրողի և որդեգրվածի միջև,
- երբ ամուսնացողներից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ,
- երբ կողմերից մեկն ամուսնացել է իր կամքին հակառակ (այսինքն՝ չի եղել նրա համաձայնությունը),
- եթե ամուսնացած անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնության պետական գրանցման պահին իր մոտ սեռավարակի (ընդ որում՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի), ինչպես նաև հոգեկան հիվանդության և թմրամոլության, թունամոլության առկայության փաստը,
- երբ ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության (կեղծ ամուսնություն):

Ամուսնության պետական գրանցման համար հիմք է համարվում ամուսնացող անձանց համատեղ դիմումը: Ամուսնության պետական գրանցումը կատարում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին (ՔԿԱԳ): Ամուսնության մասին համատեղ դիմում տալու հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել՝

ա) ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերը.

բ) եթե անձը նախկինում գտնվել է ամուսնության մեջ, նաև նախորդ ամուսնության դադարման մասին փաստաթուղթը.

գ) եթե ամուսնացող անձը 16 կամ 17 տարեկան է, ապա ամուսնացող անձի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ նոտարական կարգով հաստատված կամ ՔԿԱԳ մարմնում տրված գրավոր համաձայնությունը:

Քանի որ ամուսնությունը երկու անձանց ապագայի վերաբերյալ լուրջ քայլ է, այն պահանջում է լավ կշռադատված որոշում: Այդ իսկ պատճառով էլ օրենսդիրը որոշակի ժամկետ է նախատեսել ամուսնության գրանցման մասին դիմումը տալու և փաստացի գրանցում իրականացնելու միջև, որպեսզի ապագա ամուսիններին ժամանակ տրվի մեկ անգամ ևս խորհելու իրենց որոշման և իրենց ցանկությունների շուրջ: Այս նկատառումներից ելնելով է, որ ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ոչ շուտ, քան դիմումը ՔԿԱԳ ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը: Սակայն ապագա ամուսինները կարող են համատեղ դիմումում նշել ամուսնության այլ օր, սակայն և ոչ ուշ, քան 10-րդ օրը:

Առանձին հարգելի պատճառների առկայության դեպքում ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել (օրինակ՝ ամուսնացող անձանց համատեղ երեխա(ներ) ունենալը, ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական), ամուսնացող անձի գորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության և այլն):



Հարցեր

- Ո՞ր մերձավոր ազգականների ամուսնությունն է արգելված:
- Մեկը 17 տարեկան է, իսկ Շաքեն՝ 16: Արդյո՞ք նրանք կարող են ամուսնանալ:

- Ինչո՞ւ է անհրաժեշտ ամուսնական նվազագույն տարիքի սահմանումը:

Խնդիր

Քննարկեք՝ արդյո՞ք ստորև բերված օրինակներում ամուսնությունները վավեր են: Հիմնավորեք ձեր պատասխանը:

- 1) 18 տարեկան Մեկը ամուսնացել է 16 տարեկան Շաքեի հետ՝ վերջինիս ծնողների համաձայնությամբ:
- 2) 20 տարեկան Մեկը ամուսնացել է 18 տարեկան Շաքեի հետ, առանց նրա ծնողների համաձայնության:
- 3) 23 տարեկան Մեկը ամուսնացել է իր զարմուհու հետ, որը 22 տարեկան է:
- 4) 20 տարեկան Մեկը ամուսնացել է 19 տարեկան Շաքեի հետ՝ նրա ծնողների համաձայնությամբ: Շաքեն չէր ցանկանում ամուսնանալ Մեկի հետ, սակայն նրա ծնողների կողմից ճնշումներ գործադրելուց հետո նա սվեց իր համաձայնությունը:
- 5) 25 տարեկան Շաքեն ամուսնացել է 30 տարեկան Մեկի հետ, թեև նա արդեն իսկ ամուսնացած էր Նարեկի հետ:
- 6) 28 տարեկան Մեկը ամուսնացել է 26 տարեկան Շաքեի հետ, թաքցնելով նրանից իր՝ թմրամոլ լինելու փաստը:

5.1.2. Ամուսինների անձնական իրավունքները և պարտականությունները

Ամուսնությունը փոխադարձաբար առաջացնում է որոշակի իրավունքներ և պարտականություններ ամուսինների համար: Իրավունքները ամուսինների ունեցած սպասելիքներն են միմյանց նկատմամբ որոշակի գործողություններ կատարելու առումով, իսկ պարտականությունները՝ նրանց կողմից միմյանց նկատմամբ պարտադիր կատարման ենթակա գործողությունները:

Ամուսնացած անձինք իրավական պարտավորություն են ստանձնում ապրել համատեղ և որպես ամուսիններ աջակցել միմյանց: Ամուսնության ընթացքում ամուսինները պետք է հնարավորինս աջակցեն համատեղ տնտեսության ստեղծմանը: Այդ աջակցությունը վերաբերում է ոչ միայն գումարին, այլև պարտավոր են սիրել, ապրումակցել, հարգել միմյանց և պահպանել ներդաշնակ հարաբերություններ:

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են իրավահավասարության սկզբունքի վրա: Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից: Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:

Ամուսնանալիս ամուսինները, ըստ իրենց ցանկության, կարող են ամուսիններից մեկի ազգանունն ընտրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական

ազգանունը: Ամուսինների ընդհանուր ազգանունը կարող է լինել ամուսիններից մեկի ազգանունը կամ այնպիսի ազգանուն, որը ներառում է ամուսինների ազգանունները միաժամանակ: Ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի: Ամուսիններից մեկի ազգանվան փոփոխությունը մյուս ամուսնու ազգանվան փոփոխություն չի առաջացնում: Ամուսնալուծվելիս ամուսիններն իրավունք ունեն պահպանելու ընդհանուր ազգանունը կամ վերականգնելու իրենց մինչամուսնական ազգանունը:



Հարց

- *Ինչպիսի՞ն պետք է լինի ամուսիններից յուրաքանչյուրի դերն ընտանիքում:*

Խնդիր

Քննարկե՛ք ստորև ներկայացված մտքերից յուրաքանչյուրը և հայտնեք դրանց հետ Ձեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Հիմնավորեք Ձեր պատասխանը:

- 1) Կինը պետք է հոգ տանի երեխաների և տան նկատմամբ, իսկ ամուսինը պետք է ապահովի ընտանիքի եկամուտը:
- 2) Երբ կինը ամուսնանում է, նա պետք է պահպանի իր ազգանունը և չփոխի այն ամուսնու ազգանվամբ:
- 3) Ամուսնացած կանայք պետք է աշխատեն միայն այն դեպքում, երբ նրանք չունեն փոքրահասակ երեխաներ:
- 4) Որպես ընտանիքի ղեկավար, միայն հայրն իրավունք ունի որոշում կայացնել, թե որտեղ պետք է բնակվի իր ընտանիքը:
- 5) Ամուսինները պետք է հավասարապես կիսեն բոլոր ծախսերը՝ անկախ այն հանգամանքից, թե ով է աշխատում:

5.1.3. Ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները

Ամուսիններից յուրաքանչյուրը կարող է ունենալ անձնական սեփականություն և ընդհանուր համատեղ սեփականություն:

Անձնական սեփականության իրավունքով ամուսիններից յուրաքանչյուրին պատկանող գույքը միայն իրենն է և ամուսնալուծվելիս ենթակա չէ բաժանման: Անձնական սեփականություն է համարվում՝

- մինչև ամուսնությունը ամուսիններից յուրաքանչյուրին պատկանող գույքը,
- ամուսնության ընթացքում որպես նվեր կամ ժառանգություն ստացած գույքը,
- անհատական օգտագործման գույքը (հագուստ, կոշիկ), նույնիսկ եթե այն ձեռք է բերվել ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին: Անհատական օգտագործման գույքից անձնական սեփականություն չեն համարվում թանկարժեք իրերը և պերճանքի առարկաները:

Ընդհանուր համատեղ սեփականությունը նշանակում է, որ գույքը հավասար բաժիններով պատկանում է ամուսիններին և ամուսնալուծության ժամանակ ենթակա է բաժանման: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է:

Սակայն ամուսինները կարող են կնքել նաև ամուսնական պայմանագիր՝ համաձայնեցնելով ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի և գույքային իրավունքների ու պարտականությունների բաշխման այլ կարգ, որի հիման վրա ամուսնալուծվելու դեպքում

կիրականացվի գույքի բաժանումը: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

Ամուսիններն ունեն հավասար իրավունքներ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված որոշումներ կայացնելիս: Եթե ամուսիններից մեկը ցանկանում է որևէ գործարք կատարել այդ գույքի հետ կապված, ապա պահանջվում է մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:



Խնդիր 1.

Շաքեն և Մհերն ամուսնացել են առանց ամուսնական պայմանագիր կնքելու, հետևաբար ամուսնության գրանցումից հետո ձեռք բերված գույքը համարվում է նրանց համատեղ սեփականությունը: Պատասխանեք հետևյալ հարցերին.

Ա. Շաքեն նոր աշխատանքի առաջարկ է ստացել և պետք է աշխատանքային պայմանագիր կնքի իր ապագա գործատուի հետ: Կարո՞ղ է արդյոք նա կնքել այդ պայմանագիրը առանց Մհերի համաձայնության:

Բ. Շաքեն ցանկանում է վաճառել տան կահույքի մի մասը: Արդյո՞ք այն վաճառելու համար նա պետք է ստանա ամուսնու համաձայնությունը:

Գ. Մհերը ցանկանում է վաճառել ընդհանուր համատեղ սեփականություն համարվող իրենց բնակարանը: Արդյո՞ք դրա համար նա պետք է ստանա կնոջ համաձայնությունը: Եթե այո, ապա ի՞նչ տեսքով:

Խնդիր 2.

Մհերն ու Շաքեն ամուսնացել են 2012 թվականին Հայ Առաքելական եկեղեցական արարողակարգի հիման վրա: Ամուսնանալուց հետո նրանք բնակվել են Մհերի հայրական տանը: Համատեղ կյանքի ընթացքում նրանք ունեցել են մեկ երեխա: Որոշակի տարաձայնությունների պատճառով նրանք որոշել են ամուսնալուծվել: Նրանք համատեղ կյանքի ընթացքում ձեռք են բերել ավտոմեքենա և 200 ք.մ. հողատարածք:

Ա. Իրականացրեք դերախաղ Մհերի ու Շաքեի միջև այն մասին, թե ինչպե՞ս է բաժանվելու գույքը ամուսնալուծության արդյունքում:

Բ. Արդյո՞ք ամուսնության կապակցությամբ Մհերի հարազատների կողմից Շաքեին նվիրած ոսկյա զարդերը Շաքեի անձնական սեփականությունն են, թե ենթակա են բաժանման:

Գ. Արդյո՞ք բնակարանը համարվում է Մհերի և Շաքեի համատեղ սեփականությունը:

Խնդիր 3.

Մհերը ցանկանում է ամուսնանալ Շաքեի հետ: Նա ունի իր պապիկի մահից հետո ժառանգություն ստացած բնակարան, հորեղբոր կողմից նվիրված հողամաս և առաջիկայում պլանավորում է ձեռք բերել ավտոմեքենա: Նա մտավախություն ունի, որ եթե ամուսնության ընթացքում խնդիրներ ծագեն, ապա ամուսնալուծության դեպքում նա կարող է զրկվել իր գույքի մի մասից:

Ի՞նչ խորհուրդ կտաք Մհերին:

5.2. Ծնողների և զավակների միջև փոխհարաբերությունները

Ծնող դառնալիս մարդիկ սկսում են կրել որոշակի իրավական պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ: Ծնողները պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների մասին, տրամադրել նրանց բնակատեղի, սնունդ, հագուստ, ապահովել բժշկական ծառայություններից օգտվելու և կրթություն ստանալու նրանց իրավունքը:

Ծնողների՝ երեխաների մասին հոգ տանելու պարտականությունը ենթադրում է երեխաների պարտականությունը՝ ենթարկվել ծնողների ողջամիտ պահանջներին: Իսկ ո՞րն է ծնողի ողջամիտ պահանջը: Երեխաները պարտավոր չեն ենթարկվել ծնողների պահանջներին, եթե դրանք ոչ իրավական գործողություններ (օրինակ՝ գողություն) կատարելուն են վերաբերում: Երեխան կարող է չենթարկվել ծնողի այնպիսի պահանջին, որը նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը լուրջ վնաս է պատճառում, օրինակ՝ առանց սննդի մեկ շաբաթ մնալ կողպված սենյակում: Ծնողներն իրավունք ունեն պահանջել երեխաներից օգնել իրենց՝ տանը կամ այգում կատարվող աշխատանքներում:

Օրենքը ծնողներին լայն իրավունքներ է տալիս իրենց անչափահաս երեխաների նկատմամբ: Օրինակ՝ ծնողները կարող են՝

- իրականացնել երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
- ընտրել կրթական հաստատություն և երեխաների ուսուցման ձևը՝ մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը՝ երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ,
- ընտրել երեխայի բնակության վայրը:

Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:

5.3. Խնամակալություն

Խնամակալություն նշանակվում է 14 տարեկանը չլրացած անչափահասների նկատմամբ՝ նրանց իրավունքների և շահերի պաշտպանության համար, ինչպես նաև նրանց դաստիարակելու նպատակով:

Անչափահասների նկատմամբ խնամակալություն նշանակվում է այն դեպքում, երբ՝

- նրանք չունեն ծնողներ, որդեգրողներ,
- դատարանը զրկել է նրանց ծնողներին իրենց ծնողական իրավունքներից,
- անչափահասներն այլ պատճառներով մնացել են առանց ծնողական խնամքի, մասնավորապես՝ երբ ծնողները խուսափել են նրանց դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից:

Խնամակալը պարտավոր է հոգալ իր խնամարկյալը հանդիսացող անչափահասի ապրուստը, ապահովել նրա խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրա իրավունքներն ու շահերը:

5.4. Հոգաբարձություն

Հոգաբարձությունը սահմանվում է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների նկատմամբ՝ նրանց իրավունքների և շահերի պաշտպանության համար, ինչպես նաև նրանց դաստիարակելու նպատակով:

Անչափահասների նկատմամբ հոգաբարձություն նշանակվում է այն դեպքում, երբ՝

- նրանք չունեն ծնողներ, որդեգրողներ,
- դատարանը գրկել է նրանց ծնողներին իրենց ծնողական իրավունքներից,
- անչափահասներն այլ պատճառներով մնացել են առանց ծնողական խնամքի, մասնավորապես՝ երբ ծնողները խուսափել են նրանց դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից:

Հոգաբարձուները համաձայնություն են տալիս այնպիսի գործարքներ կնքելու համար, որոնք հոգաբարձության ներքո գտնվող անձինք իրավունք չունեն ինքնուրույն կնքել: Հոգաբարձուներն աջակցում են հոգաբարձության ներքո գտնվող անչափահասներին՝ իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս, ինչպես նաև պաշտպանում են նրանց երրորդ անձանց չարաշահումներից:



Խնդիր 1.

18 տարեկան Շաքեն ունեցել է երեխա: Նա պնդում է, որ իր երեխայի հայրը 19-ամյա Մհերն է: Վերջինս ժխտում է այդ փաստը և հրաժարվում ամուսնանալ Շաքեի հետ կամ հոգ տանել երեխայի մասին:

*Արդյո՞ք Մհերը պարտավոր է ամուսնանալ Շաքեի հետ, եթե նա է երեխայի հայրը:
Արդյո՞ք օրենքը պարտադրում է Մհերին հոգ տանել երեխայի մասին:*

Հիմնավորեք Ձեր պատասխանը:

Խնդիր 2.

Ստորև ներկայացվող խնդիրներում որոշեք, թե արդյոք հետևյալ իրավիճակներում ծնողներն իրավունք ունեն կայացնել որոշումներ: Ձեր կարծիքով ի՞նչ իրավունքներ ունեն երեխաները յուրաքանչյուր իրավիճակում: Բերեք փաստարկներ հոգուտ՝ ա) ծնողների, բ) երեխաների.

- 1) 43-ամյա Նարեկը չի ընդունում իր 19-ամյա որդու՝ Մհերի վարքագիծը: Վերջինս սովորում է համալսարանում և ապրում է նույն համալսարանի հանրակացարանային սենյակներից մեկում: Մհերը, սակայն, ցանկանում է տեղափոխվել իր համալսարանական ընկերներից մի քանիսի կողմից վարձակալած բնակարան, իսկ նրա հայրը սպառնում է չվճարել նրա ուսման վարձը և գումար չորամադրել նրա կեցության, սննդի և հագուստի հետ կապված ծախսերի համար:

Անցկացրե՛ք դերախաղ Մհերի և նրա հոր միջև խոսակցության վերաբերյալ:

- 2) 16 տարեկան Շաքեն ցանկանում է ամուսնանալ 26 տարեկան Մհերի հետ, ով աշխատում է որպես տնտեսագետ: Շաքեի ծնողները չեն ցանկանում տալ իրենց համաձայնությունը դատեր ամուսնության համար:

Անցկացրե՛ք դերախաղ Մհերի, Շաքեի և նրա ծնողների միջև խոսակցության վերաբերյալ:

- 3) Մհերի ընտանիքը որոշել է բնակություն հաստատել մեկ այլ քաղաքում: 20 տարեկան Մհերը չի ցանկանում տեղափոխվել այլ քաղաք, քանի որ ցանկանում է ավարտել

համալսարանը, որտեղ նա սովորում է: Նրա քույրն ու եղբայրը, ի տարբերություն Միերի, ցանկանում են տեղափոխվել այլ քաղաք:

Անցկացրե՛ք Դերախաղ Միերի և նրա ծնողների միջև խոսակցության վերաբերյալ:

5.5. Ծնողների պատասխանատվությունը երեխաների կողմից պատճառված վնասի համար

Ընդհանուր կանոնի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Այնուամենայնիվ, օրենքը նախատեսում է այնպիսի գործարքներ, որոնք փոքրահասակները կարող են կնքել ինքնուրույն: Մասնավորապես՝ վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել՝

- մանր կենցաղային գործարքներ,
- նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ,
- օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:

Մինչև 14 տարեկան անչափահասի ծնողները, որդեգրողները կամ խնամակալը գույքային պատասխանատվություն են կրում նրա կողմից կնքված գործարքներից առաջացած պարտավորությունների համար, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Մինչև 14 տարեկան անչափահասի ծնողները, որդեգրողները կամ խնամակալը պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի կողմից պատճառված վնասի համար:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն՝

- 1) տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները,
- 2) իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ,
- 3) օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք,
- 4) կնքել կենցաղային մանր գործարքներ,
- 5) կնքել նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ,
- 6) կնքել օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:

Վերոնշյալ գործարքներից բացի, տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են կնքել նաև այլ գործարքներ իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում իրենց կողմից կնքված գործարքներից ծագած

պարտավորությունների համար: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:



Խնդիր

Որոշե՛ք, թե արդյոք հետևյալ իրավիճակներում ծնողներն իրավական առումով պատասխանատու են իրենց երեխաների կողմից պատճառված վնասի համար թե ոչ: Հիմնավորեք Ձեր պատասխանը.

1) Նարեկն անուշադրության է մատնել բակում խաղացող երեք տարեկան իր որդուն՝ Տիգրանին, ով, վազելով գնդակի հետևից, հայտնվել է փողոցի երթևեկելի մասում: Միերն այդ պահին իր ավտոմեքենայով անցնում էր փողոցի այդ մասով: Նա, նկատելով երեխային, շրջում է դեկը և հարվածում մեքենան հանդիպակաց պատին: Բարեբախտաբար, Միերն ու Տիգրանը որևէ վնաս չեն կրում, սակայն Միերի մեքենան նշանակալի վնաս է կրում:

Պատասխանատու է արդյո՞ք Նարեկը Միերի մեքենային պատճառված վնասի համար: Ինչո՞ւ՝ այո և ինչո՞ւ՝ ոչ:

Դերախաղ Նարեկի և Միերի միջև:

2) Նարեն խնդրում է իր տասնհինգամյա դստերը՝ Անիին խանութից գնել մի շաքր մթերքներ: Անին որոշում է հեծանիվով հասնել խանութ այդ գնումները կատարելու համար: Ճանապարհին հեծանիվն արագ վարելու պատճառով նա վնասում է վաթսունամյա Անահիտ տատիկի ոտքը, որին տեղափոխում են հիվանդանոց:

Արդյո՞ք Նարեն պատասխանատու է Անիի կողմից պատճառված վնասի համար: Ինչո՞ւ՝ այո և ինչո՞ւ՝ ոչ:

Դերախաղ Նարեի և Անահիտ տատիկի միջև:

3) Տասնամյա Տիգրանն իր ընկերների հետ գնդակ էր խաղում բակում: Գոռը հարվածում է գնդակին, որը հայտնվելով Նարեի պատշգամբում, կոտրում է նրա տան պատուհանի ապակին:

Արդյո՞ք Տիգրանի ծնողները պատասխանատու են կոտրված պատուհանի համար: Ինչո՞ւ՝ այո և ինչո՞ւ՝ ոչ:

Դերախաղ Նարեի և Տիգրանի հայրիկի միջև:

5.6. Հոգ տանելու պարտականությունը

Ե՞րբ են ծնողները պարտավոր հոգ տանել իրենց երեխաների մասին

Ծնողներն իրավական պարտավորություն ունեն հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության և զարգացման համար, ապահովել նրանց կացարանով, հետևել նրանց առողջությանը և ապահովել նրանց կրթություն ստանալը: Այնուամենայնիվ, այս պարտականության կատարումը կախված է յուրաքանչյուր ընտանիքի ֆինանսական վիճակից: Ծնողները պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններին պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

Ե՞րբ են երեխաները պարտավոր հոգ տանել իրենց ծնողների մասին

Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին: Նրանք պարտավոր են ֆինանսապես օգնել իրենց ծնողներին: Եթե աշխատունակ չափահաս երեխան ֆինանսական օգնություն ցույց չի տալիս իր ծնողին, ապա օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց չափահաս աշխատունակ զավակներից բռնագանձվում է ալիմենտ՝ դատական կարգով:

Զավակներից յուրաքանչյուրից բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

Զավակները կարող են ազատվել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց: Զավակներն ազատվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողներին ալիմենտ վճարելու պարտականությունից:



Խնդիր

40 տարեկան Նարեկը զբաղվում է գործարարությամբ: Նա ամուսնացած է, ունի 3 երեխա: Նրա մայրը 63 տարեկան է, կենսաթոշակառու, ապրում է առանձին և ստանում է 25.000 դրամ կենսաթոշակ, որը հազիվ բավարարում է նվազագույն պահանջունքները բավարարելու համար: Նա երբեմն ճաշում է ծեփերի համար նախատեսված բարեգործական ճաշարանում:

Արդյո՞ք Նարեկն իրավական տեսանկյունից պարտավոր է ֆինանսապես աջակցել իր մորը: Բնչո՞ւ:

Դերախաղ Նարեկի և նրա մոր միջև:

5.7. Երեխայից առանձին ապրող ծնողի և այլ ազգականների իրավունքները

Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

Երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ: Մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին՝ չխանգարելու այդ շփմանը:

Եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:



Խնդիր

11 տարեկան Անին ապրում է իր մոր՝ Նարեի հետ, իր մայրական տատիկի տանը: Նրա ծնողներն ամուսնալուծվել են 3 տարի առաջ: Հայրը շաբաթական երկու անգամ այցելում է Անիին և տեսակցում նրան: Վերջին շրջանում Նարեն տարբեր պատճառաբանություններով հետաձգում է հոր հետ երեխայի տեսակցությունները:

- *Ի՞նչ կարգով պետք է լուծվի այս հարցը:*
- *Արդյո՞ք երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է:*
- *Ի՞նչ որոշում կկայացնի դատարանը:*

5.8. Ծնողական իրավունքներից զրկելը

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝ ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց.

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից,

գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,

դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը,

ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ.

զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատարանի որոշման հիման վրա: Ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ գործերը քննվում են ծնողներից մեկի (օրինական ներկայացուցչի), ինչպես նաև այն մարմինների ու կազմակերպությունների (խնամակալության և հոգաբարձության մարմինների, որք երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված կազմակերպությունների և այլնի) դիմումի հիման վրա, որոնց վրա դրված են երեխաների իրավունքների պաշտպանության պարտականությունները:



Խնդիր. Օճծի ենթարկված երեխան

Պատկերացրեք, դուք տեսնում եք Ձեր տան պատուհանից, որ Ձեր հարևան Նարեկը ծեծում է իր տասը տարեկան տղային՝ Տիգրանին: Տղան գոռում է ցավից և նրա քիթն արյունահոսում է: Ի՞նչ կանեք դուք:

- *Կզանգահարե՞ք ոստիկանություն: Ինչո՞ւ՝ այո և ինչո՞ւ՝ ոչ:*
- *Ի՞նչ պետք է անի ոստիկանությունը:*
- *Եթե Նարեկի գործը քննի դատարանը, ի՞նչ որոշում կարող է կայացնել այն:*
- *Ասում են՝ բռնության ենթարկվող երեխան լինում է ագրեսիվ և հակված է բռնություն կիրառելու: Համաձայն եք արդյոք այս մտքի հետ: Հիմնավորեք ձեր պատասխանը:*

5.9. Որդեգրում (դատերագրում)

Որդեգրումն իրավական գործընթաց է, որի արդյունքում որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

Որդեգրում թույլատրվում է միայն մինչև 18 տարեկան անձանց նկատմամբ և ելնելով նրանց շահերից՝ հաշվի առնելով նրա էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության գործում հաջորդականությունն ապահովելու հնարավորությունները, ինչպես նաև հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները:

Չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որդեգրումը ելնում է երեխաների շահերից:

Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումի հիման վրա:

Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ՝

ա) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց,

բ) ամուսինների, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձանց,

դ) օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձանց,

ե) նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով,

զ) այն անձանց, որոնք առողջական վիճակով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ,

է) այն անձանց, որոնք որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները,

ը) այն անձանց, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին,

թ) որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձանց:

Ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային:

Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս:

Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը:

Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ՝

ա) նրանք անհայտ են կամ դատարանը ճանաչել է անհայտ բացակայող.

բ) դատարանը նրանց ճանաչել է անգործունակ,

գ) դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից,

դ) նրանք դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

Խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաներին որդեգրելու համար անհրաժեշտ է նրանց խնամակալների (հոգաբարձուների) գրավոր համաձայնությունը:

Տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

Որդեգրված երեխաներն ու նրանց սերունդը որդեգրողների և նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները որդեգրված երեխաների ու նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին:

Որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ կորցնում են անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները և ազատվում են պարտականություններից:

Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող պետական մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը:

Երեխայի որդեգրումը վերացվում է դատարանի կողմից: Երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեն նրա ծնողները, երեխայի որդեգրողները, խնամակալության և հոգաբարձության մարմինը, ինչպես նաև տասնութ տարին լրացած որդեգրվածը՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

- Երբ որդեգրողները խուսափում են իրենց վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց,
- Երբ որդեգրողները չարաշահում են ծնողական իրավունքները,
- Երբ որդեգրողները դաժանաբար են վարվում որդեգրված երեխայի հետ,
- Երբ որդեգրողները համարվում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ տառապող հիվանդներ,
- Երբ ներկայացել է դատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ծնողը, դատարանի համապատասխան վճռի վերանայման, անգործունակ ճանաչված ծնողի գործունակության վերականգնման դեպքերում՝ այդ ծնողների պահանջով:

Դատարանը կարող է վերացնել երեխայի որդեգրումը նաև այլ հիմքերով՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:



Խնդիր 1.

Հնդկաստանի քաղաքացի հանդիսացող հնդիկ գույզը աշխատում է Հայաստանում Հնդկաստանի դեսպանատանը և ապրում է Հայաստանում: Ձույզը ցանկանում է որդեգրել հայ երեխա: Արդյո՞ք Դուք կթույլատրեի՞ք նրանց կողմից հայ երեխայի որդեգրումը: Հիմնավորե՞ք պատասխանը:

Խնդիր 2. Մտափոխված մայրը

30-ամյա Նարեն, արտաամուսնական կապի մեջ է գտնվել 40-ամյա Նարեկի հետ: Այդ արտաամուսնական կապից ծնված երեխային՝ Անիին, որոշում է որդեգրման տալ մի երիտասարդ գույզի, քանի որ չի ցանկանում, որ այդ մասին իմանան իր հարազատներն ու բարեկամները: Հոգեկան ծանր ապրումների մեջ լինելով՝ նա տալիս է իր գրավոր համաձայնությունը երեխային որդեգրելու համար:

Երեք ամիս անց Նարեն գղջում է իր արարքի համար և ցանկանում է հետ բերել իր երեխային: Նա դիմում է դատարան:

- *Եթե Դուք լինեի՞ք Նարեի փաստաբանը, ի՞նչ փաստարկներ կբերեի՞ք:*
- *Եթե Դուք լինեի՞ք որդեգրող գույզի փաստաբանը, ի՞նչ փաստարկներ կբերեի՞ք:*
- *Եթե Դուք լինեի՞ք գործը քննող դատավորը, ի՞նչ որոշում կկայացնեի՞ք:*

5.10. Ամուսնալուծություն և ալիմենտային պարտավորություններ

Բազմաթիվ մարդիկ ունեն երջանիկ ընտանիքներ, սակայն, երբեմն, ընտանիքում ծագում են խնդիրներ: Այդ խնդիրները կարող են լուծվել գույզի կողմից համատեղ: Այնուամենայնիվ, երբեմն այդ խնդիրները հանգեցնում են ամուսնության դադարեցման: Ամուսնալուծությունը լուրջ քայլ է, որը կարող է հետագա բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամուսինների, այնպես էլ երեխաների վրա: Այն կարող է առաջացնել սոցիալական, հոգեկան, ինչպես նաև նյութական խնդիրներ: Դրանք կարող են վերաբերել ամուսինների գույքի բաժանմանը, միմյանց և երեխաների նկատմամբ ալիմենտային պարտավորությունների ծագմանը և այլն:

Մի շարք սոցիալական հարցումների տվյալներով ամուսնալուծության պատճառ կարող է հանդիսանալ.

- դավաճանությունը,
- ակտիվ ամուսնալուծությունը, թմրամոլությունը կամ խաղամոլությունը,
- նյութական խնդիրները,
- ընտանեկան բռնությունը և այլն:

Ամուսնալուծությունը կատարվում է երկու կարգով՝

- քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող պետական մարմիններում կամ
- դատական կարգով:

Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող պետական մարմիններում

Եթե ամուսինների միջև առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության, նրանց ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության

ակտերի գրանցում իրականացնող պետական մարմիններում՝ ամուսինների համատեղ դիմումի հիման վրա:

Ամուսիններից միայն մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող պետական մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

- ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող,
- բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ,
- գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Եթե ամուսինների միջև առկա է վեճ ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ, երեխաների խնամքի և այլ հարցերի շուրջ, վեճերը քննարկվում են դատական կարգով:

Ամուսնալուծությունը դատական կարգով

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,
բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող պետական մարմիններում կատարելուց.

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանն իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև եռամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար: Եթե ամուսինները համաձայն են ամուսնալուծվել, ապա դատարանը լուծում է ամուսնությունը՝ ամուսինների դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:



Արդյո՞ք պետությունը պետք է ավելի դժվար ընթացակարգ սահմանի ամուսնալուծվելու համար: Հիմնավորեք պատասխանը:

Խնդիր 1.

Եթե Ղուք հանդես գայիք դատավորի դերում, հետևյալ դեպքերում կկայացնե՞իք արդյոք ամուսնալուծության վերաբերյալ վճիռ: Հիմնավորեք Ձեր պատասխանը.

- 1) Շաքեն և Մհերն ամուսնացել են 18 տարեկանում: Մեկ տարի հետո Շաքեն դիմում է դատարան՝ ամուսնալուծվելու համար, պատճառաբանելով, որ Մհերը մասնակցում է երեկոյթների և սիրահետում այլ աղջիկների: Ըստ նրա՝ Մհերի հետ ապրելը դարձել է անհնարին և նա ցանկանում է վերադառնալ իր ծնողների տուն: Մհերը, սակայն, չի ցանկանում ամուսնալուծվել և դատարանից ժամանակ է խնդրում՝ Շաքեից առանձին մնալու և ստեղծված իրավիճակի մասին մտածելու համար: Նա նշում է, որ այլ աղջիկների հետ նա որևէ լուրջ հարաբերություններ չունի:
- 2) Նարեկն ամեն երեկո աշխատանքից տուն է վերադառնում հարբած վիճակում: Հաճախ նա սպառնում է ծեծի ենթարկել կնոջն ու որդուն: Մթափ վիճակում նա շատ բարի է և անվնաս, սակայն նրա կինը՝ Նարեն այլևս չկարողանալով հանդուրժել նրա շարունակական հարբեցողությունը և բռնությունը, ցանկանում է ամուսնալուծվել:

5.10.1. Երեխայի խնամքը և երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը

Ամուսնալուծության դեպքում երեխայի՝ ծնողներից որևէ մեկի հետ ապրելու հարցը որոշելիս դատարանը հաշվի է առնում երեխայի շահերի առավել ապահովման անհրաժեշտությունը: Պրակտիկայում դատարանները հիմնականում փոքրահասակ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հանձնում են մորը: Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե որ ծնողի հետ է ապրում երեխան, նրա խնամքը ծնողները պարտավոր են իրականացնել հավասար: Ամուսնալուծությունը չի դադարեցնում իրենց երեխաների մասին հոգ տանելու ծնողների պարտականությունը:

Եթե ծնողների միջև առկա չէ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն, ապա ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

- ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը,
- բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը,
- գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Այս ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

Օրենքով նախատեսված բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Դատական կարգով բռնագանձվող ալիմենտի վճարումը դադարում է, երբ երեխան դառնում է չափահաս կամ եթե երեխան մինչև չափահասության հասնելը ձեռք է բերել լրիվ գործունակություն:



Խնդիր 1. Վատ մայրը

Նարեկը և Նարեն ցանկանում են ամուսնալուծվել: Նրանցից յուրաքանչյուրը դատարանից պահանջում է լուծել 7-ամյա որդու և 14-ամյա դստեր խնամքի հարցը: Նարեն նախկինում անտարբերության է մատնել երեխաներին՝ հեռանալով տանից: Նա մեկ տարի ապրել է մեկ այլ տղամարդու հետ և այդ ընթացքում չի այցելել իր երեխաներին:

- *Եթե Դուք լինեիք դատավոր, արդյո՞ք կհարցնեիք երեխաների կարծիքը նրանց խնամքի մասին որոշում կայացնելուց առաջ: Արդյո՞ք երեխաների տարիքն այստեղ նշանակություն ունի:*
- *Եթե Դուք լինեիք դատավոր, ու՞մ կհանձնեիք երեխաների խնամքը:*

Խնդիր 2.

Նարեկն ու Նարեն ամուսնալուծվել են և դատարանը Նարեին է հանձնել նրանց 3-ամյա որդու խնամքը: Նարեն պահանջում է դատարանից սահմանել երեխայի համար ալիմենտի բռնագանձում: Նարեկը դատարանին ներկայացրել է տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից այն մասին, որ չի աշխատում և հաշվառված է որպես գործազուրկ:

Եթե Դուք լինեիք դատավոր, որքա՞ն կսահմանեիք բռնագանձվող ալիմենտի չափը:

ԳԼՈՒԽ 6. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժառանգությունն անձի մահից հետո նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի անցումն է նրա ժառանգ համարվող անձանց: Ժառանգությունը կատարվում է 2 ձևով՝

- ըստ կտակի և
- ըստ օրենքի:

Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

Ժառանգության հետ կապված հարցերը ծագում են քաղաքացու մահից հետո, որը կոչվում է *Ժառանգության բացում*: *Ժառանգության բացման ժամանակը* քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է: Եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը:

Ժառանգատու կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ: Կազմակերպությունները չեն կարող լինել ժառանգատու: *Ժառանգներ* կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

6.1. Ժառանգություն ըստ կտակի

Կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Եթե առկա է կտակ, անձի մահից հետո նրա գույքը կարող է տնօրինվել միայն համաձայն կտակի: Կտակ կարող է անել գործունակ քաղաքացին: Կտակը պետք է արվի անձամբ: Ներկայացուցչի միջոցով կտակ անել չի թույլատրվում:

Քաղաքացին իրավունք ունի իր գույքը կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգների բաժինները, կտակում ներառել ժառանգության մասին կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Քաղաքացին պարտավոր չէ որևէ մեկին տեղեկացնել կտակ անելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին:

Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով: Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Վերջիններս ժառանգում են այն բաժնի կեսը, որը նրան կհասներ, եթե չլիներ կտակ:

Կտակը պետք է կազմվի գրավոր: Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով, նոտարի ներկայությամբ, կտակը կարող է ստորագրվել այլ քաղաքացու կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ ստորագրել կտակը:

Կտակը կտակարարի ցանկությամբ կարող է լինել փակ, որի դեպքում նոտարը կտակը վավերացնում է առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու: Փակ կտակը պետք է գրի և ստորագրի անձամբ կտակարարը:

Նոտարը, կտակը վավերացնող այլ անձը, վկաները, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացին իրավունք չունեն մինչև ժառանգության բացումը տեղեկություններ հրապարակել կտակի բովանդակության, այն կազմելու, վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին:



Խնդիր 1.

Նահապետ պապը անկողնային հիվանդ է: Նա իր մահվանից առաջ որոշում է իր բնակարանը կտակել իր թոռանը՝ Մհերին: Նա գրում է կտակը, ստորագրում և դնում է փակ ծրարի մեջ: Նա հանձնում է իր կտակը Մհերին իր մահվանից մի քանի օր առաջ:

Արդյո՞ք Նահապետ պապի կտակը կարող է իրավական հետևանքներ առաջացնել:

Խնդիր 2.

2012թ. հուլիսի 1-ին Նարեկը մահանում է ավտովթարից: Նարեկն ամուսնացած էր և ուներ 3 երեխա՝ 2 որդի և մեկ դուստր: Նրանք սպասում էին 4-րդ երեխային: Անին ծնվում է հոր մահից հետո, հոկտեմբերի 1-ին:

Արդյո՞ք նորածին երեխան համարվում է ժառանգ: Հիմնավորեք պատասխանը:

6.2. Ժառանգությունը ըստ օրենքի

Ըստ օրենքի՝ ժառանգները ժառանգման են հրավիրվում օրենքով սահմանված հերթականությամբ:

Առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Երրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը:

Չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգության իրավունք են ձեռք բերում նախորդ հերթի ժառանգների բացակայության, նրանց ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքերում: Նույն հերթի ժառանգները ժառանգում են հավասար բաժիններով:

Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում, որդեգրվածն ու նրա երեխաները մի կողմից, և որդեգրողն ու նրա ազգականները մյուս կողմից, հավասարեցվում են՝ ըստ ծագման ազգականների (արյունակից ազգականներին):



Խնդիր

Նարեկը հաջողակ գործարար էր և հիմնել էր զինիների արտադրություն: Նա ուներ բնակարան, 2 ավտոմեքենա և 250քմ հողատարածք: Նա ամուսնացած էր, ուներ երկու երեխա, ապրում էր ծնողների հետ: Նրա մոտ քաղցկեղ են հայտնաբերում և նա վաղաժամ մահանում է:

• *Ովքե՞ր են համարվում Նարեկի ժառանգներ:*

• *Ինչպե՞ս է բաժանվելու ժառանգների միջև ժառանգվող գույքը:*

• *Որքա՞ն է կնոջ բաժինը, եթե՝*

ա) նա իր սեփականությունը ձեռք է բերել ամուսնությունից հետո,

բ) նա իր սեփականությունը ձեռք է բերել ամուսնությունից առաջ:

6.3. Ժառանգությունն ընդունելն ու դրանից հրաժարվելը

Ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգությունը պայմանով կամ վերապահումներով ընդունել չի թույլատրվում: Գոյություն ունի ժառանգությունը ընդունելու երկու եղանակ.

- ժառանգությունն ընդունելու ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով,
- ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով:

Ժառանգներից յուրաքանչյուրը ժառանգությունը պետք է ընդունի առանձին-առանձին:

Ժառանգի կողմից գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով ժառանգությունը ընդունված է համարվում, օրինակ, երբ ժառանգը՝

- 1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար,
- 2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր,
- 3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով: Ժառանգությունից հրաժարվելը չի կարող վերացվել կամ հետ կանչվել:

Ժառանգությունից հրաժարվելու դեպքում ժառանգն իրավունք ունի նշել, որ նա դրանից հրաժարվում է հոգուտ՝ ըստ կտակի կամ ըստ օրենքի՝ ցանկացած հերթի ժառանգների:



Խնդիր 1.

Միերի հայրը մահանում է սրտի կաթվածից: Նա շարունակում է ապրել իր հորական տանը, սակայն ժառանգության ընդունման մասին դիմում չի ներկայացնում նոտար:

Արդյո՞ք դա հիմք է նրան ժառանգությունից զրկելու համար:

Խնդիր 2.

Նարեկը մահանում է՝ առանց կտակ գրելու: Նրա միակ հարազատներն էին 2 եղբայրները՝ Տիգրանը և Միերը, և խորթ քույրը՝ Նարեն: Նրա սեփականությունը գնահատվել է 20.000.000 ՀՀ դրամ:

Ո՞վ և ի՞նչ չափով է ժառանգելու նրա սեփականությունը:

6.4. Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելը

Ըստ կտակի և ըստ օրենքի՝ ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ:

Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում ժառանգությունից մեկուսացվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողները, որոնց ծնողական իրավունքները չեն վերականգնվել ժառանգությունը բացվելու ժամանակ:

Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռը: Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեն այն անձինք, որոնց համար նման մեկուսացումն առաջացնում է ժառանգության հետ կապված գույքային հետևանքներ:

ԳԼՈՒԽ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

7.1. Աշխատանքի դիմելու և ընդունվելու կարգը

Աշխատանքը կարևոր դեր է խաղում մարդու զարգացման գործում: Այն հանդիսանում է մարդու բավարար կենսամակարդակի ապահովման միջոց:

Աշխատանքային պայմանագիրը գործարք է, որտեղ մեկ անձը (աշխատող) իր գիտելիքները, ունակությունները «վաճառում է» մեկ այլ անձի կամ կազմակերպության (գործատու), որի դիմաց վերջինից ստանում է որոշակի գումար՝ աշխատավարձ:

Կարևոր է, որպեսզի գործատուների կողմից արված աշխատանքի ընդունելության հայտարարությունները լինեն ոչ խտրական և հավասար հնարավորություն ստեղծեն հետաքրքրված բոլոր անձանց համար:

Մարդու աշխատանքի իրավունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որի 32-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածը աշխատանքային օրենսդրության կարևոր սկզբունքներից է համարում աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն

ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը :

Աշխատանքի ընդունելիս արգելվում է իրավունքի սահմանափակումներ կամ առավելություններ սահմանել՝ ելնելով սեռից, ռասայից, ազգային պատկանելությունից և կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից:



Խնդիր

Քննարկե՛լ, թե արդյոք ներքոնշյալ աշխատանքի ընդունելության հայտարարությունները խտրական են, թե՛ ոչ : Եթե այո, տալ հիմնավորում:

- 1) Պահանջվում է 25-35 տարեկան բարետես աղջիկներ մատուցողուհի աշխատելու համար:
- 2) Կազմակերպությանը պահանջվում է ինժեներ 5 տարվա աշխատանքային փորձով:
- 3) Կազմակերպությանը պահանջվում է մենեջեր: Միայն ռուսերեն իմացող անձինք կարող են դիմել:

7.2. Հարցազրույց

Հարցազրույցին պետք է պատրաստված ներկայանալ : Դա իր մեջ ներառում է ոչ միայն մասնագիտական պատրաստվածությունը, այլ նաև անհրաժեշտ է ներկայանալ պատշաճ տեսքով: Բացի այդ հարցազրույցի ընթացքում հնարավորություն ունեք ավելի մանրամասն ծանոթանալ աշխատանքի բնույթին և հասկանալ արդյո՞ք Դուք ցանկանում եք աշխատել այդ միջավայրում:

Հարցազրույցի ընթացքում գործատուն Ձեզ կարող է բազմաբնույթ հարցեր տալ, որպեսզի տեղեկատվություն ստանա Ձեր մասին և հասկանա՝ արդյո՞ք Դուք համապատասխանում եք պահանջվող պաշտոնին :

Հարցերը, որոնք վերաբերում են անձի ազգությանը, լեզվին, դավանանքին, ամուսնական վիճակին, կարող է դիտվել որպես խտրական: Օրինակ, եթե ինչ-որ մեկին աշխատանքի չընդունեն միայն այն պատճառով, որ նա «Z» կրոնական ուղղության է հարում, ապա դա կարող է դիտվել խտրական և անձը կարող է դիմել դատարան իր իրավունքների պաշտպանության համար: Սակայն այս դեպքում անհրաժեշտ է ապացուցել, որ մերժումը հիմնված էր հենց այդ հանգամանքի վրա :



Խնդիր

Շաբէն դիմում է «Իքս» ընկերություն հաճախորդների սպասարկման բաժնում աշխատելու համար: Հարցազրույցի ժամանակ նրան տալիս են ստորև ներկայացված հարցերը: Քննարկել, թե որոնք են պատշաճ և որոնք են ոչ պատշաճ հարցերը և տալ հիմնավորումներ:

• Ձեր անուն-ազգանուն:

- Քանի՞ տարեկան եք:
- Ամուսնացա՞ծ եք:
- Երեխաներ ունե՞ք:
- Պլանավորո՞ւմ եք մոտ շրջանում երեխաներ ունենալ:
- Ազգությամբ հա՞յ եք:
- Երբևիցե ձերբակալված եղե՞լ եք:
- Ձեր կրոնական ուղղվածությունը ո՞րն է:
- Ձեր ֆինանսական դրությունը:
- Ձեր առողջական վիճակը:

Կազմակերպել՝ հարցազրույցի դերախաղ և որոշել, թե ինչպես պետք է պատասխանի հարցերին Շաբէն: Որ հարցերն էին ոչ տեղին և ինչպես պետք է դրանց պատասխանել:

7.3. Աշխատանքային պայմանագիր

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածը աշխատանքային պայմանագիրը սահմանում է հետևյալ կերպ. աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կոդմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Առանց աշխատանքային պայմանագրի կատարված աշխատանքը համարվում է անօրինական: Առանց աշխատանքային պայմանագրի աշխատանք կատարելու թույլտվություն տված և (կամ) աշխատանքի հարկադրող գործատուները կամ նրանց ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, երկու օրինակից: Աշխատանքային պայմանագիրը կնքելիս քաղաքացին պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ գործատուն չի կարող աշխատանքային պայմանագիրը կնքել ավելի վատ պայմաններով, քան նախատեսված է աշխատանքային օրենսդրությամբ: Պայմանագրի այդպիսի պայմաններն անվավեր են: Օրինակ՝ եթե պայմանագրում կա դրույթ այն մասին, որ աշխատողն արձակուրդի իրավունք չունի, ապա տվյալ պայմանն անվավեր է: Եթե գործատուն հրաժարվի պայմանագրի այդ դրույթը փոխելուց կամ արձակուրդ տրամադրելուց, ապա քաղաքացին կարող է դիմել դատարան:

Ուլքե՞ր կարող են հանդես գալ որպես պայմանագրի կողմ՝ որպես գործատու կամ որպես աշխատող:

Աշխատանքային պայմանագրի կողմերն են գործատուն և աշխատողը: Որպես գործատու կարող են հանդես գալ սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձը, ինչպես նաև ֆիզիկական անձը: Որպես աշխատող կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը, եթե հասել է օրենքով սահմանված տարիքի:

Աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունք օրենքը տալիս է նաև 14-16 տարեկան անձանց: Միայն թե այս դեպքում աշխատանքային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է վերջիններիս ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը: Բացի այդ՝ 14-16 տարեկանները կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում, այսինքն՝ նրանց հետ կնքվում է միայն ժամանակավոր աշխատանքային պայմանագիր (ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է):

Աշխատանքային պայմանագրում նշվում են՝

- աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,
- կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,
- կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում),
- աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները,
- աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը,
- աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և այլն,
- աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում),
- կողմերի համաձայնությամբ՝ փորձաշրջանի տևողությունը,
- աշխատաժամանակը՝ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքային ռեժիմ սահմանելու դեպքում:

7.4. Աշխատողի սոցիալական երաշխիքները, աշխատաժամանակ, հանգստի իրավունք

7.4.1. Աշխատողի սոցիալական երաշխիքները

Աշխատողը աշխատանքային հարաբերություններում ներգրավվելուց հետո օգտվում է մի շարք սոցիալական երաշխիքներից: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Նվազագույն ամսական աշխատավարձը Հայաստանի Հանրապետությունում սահմանված է 50 000 ՀՀ դրամ:

Գործատուն պարտավոր է յուրաքանչյուր աշխատողի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն աշխատողի կողմից իր պարտականությունների պատշաճ իրականացմանը: Օրինակ՝ ապահովել մեխանիզմների, սարքավորումների սարքին վիճակը, էլեկտրաէներգիայի առկայությունը, բավականաչափ լուսավորություն, ջեռուցում, օդափոխություն և այլն:

Բացի այդ գործատուն պարտավոր է յուրաքանչյուր նոր ընդունվող աշխատողի հետ իրականացնել անվտանգության ապահովման և առողջության պահպանման ուսուցում և հրահանգավորում:

Աշխատողն էլ իր հերթին պարտավոր է պահպանել անվտանգության ապահովման և առողջության պահպանման իրավական ակտերով նախատեսված պահանջները, հակառակ դեպքում դա կհամարվի կարգապահական կանոնների խախտում աշխատողների կողմից:

7.4.2. Աշխատաժամանակ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Ամենօրյա աշխատանքային տևողությունը չի կարող անցնել օրական 8 աշխատանքային ժամից: Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ արտաժամյա աշխատանքը չի կարող անցնել օրական 12 ժամից, իսկ շաբաթական 48 ժամը:

Որոշակի կատեգորիայի աշխատողների (օրինակ՝ առողջապահական կազմակերպություններում, գազամատակարարման, կապի և այլն) աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Սակայն շաբաթվա մեջ աշխատաժամանակի միջին տևողությունը չի կարող անցնել 48 ժամը, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող 24 ժամից պակաս լինել:

7.4.3. Հանգստի իրավունք

Աշխատողներն օգտվում են հանգստի իրավունքից: Հանգստյան տեսակներն են հանգստանալու և սնվելու համար նախատեսված ընդմիջումը, հերթափոխի ընթացքում հանգստանալու համար լրացուցիչ և հատուկ ընդմիջումները, հերթափոխի միջև ընկած անընդմեջ հանգիստը, ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը, ամենամյա հանգիստը, որն իր մեջ ներառում է տոնական ու հիշատակի օրերը և արձակուրդը:

Հանգստանալու և սնվելու համար նախատեսված ընդմիջումը չի կարող 2 ժամից ավելի լինել և կես ժամից պակաս: Սովորաբար ընդմիջումը սահմանվում է մեկ ժամ, ժամը 13:00-ից մինչև 14:00, որի ընթացքում աշխատողներն այն կարող են օգտագործել իրենց հայեցողությամբ ընդհուպ մինչև աշխատավայրից բացակայել:

Աշխատողներն օգտվում են ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքից, որի նվազագույն տևողությունը հնգօրյա աշխատանքային օրվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24: Ամեն պարագայում գործատուն իր ներքին իրավական ակտերով կարող է սահմանել ավելի երկար տևողությամբ արձակուրդ:

Բացի ամենամյա վճարովի արձակուրդից աշխատողներն օգտվում են երկարացված և լրացուցիչ արձակուրդից, ինչպես նաև հղիության և ծննդաբերության արձակուրդից, մինչև երեխայի 3 տարեկանը լրանալը խնամքի համար տրամադրվող արձակուրդից, ուսումնական արձակուրդից, ինչպես նաև այլ չվճարվող արձակուրդից:

Հանրակրթական, միջին-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝ ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր քննության համար՝ երեք աշխատանքային օր, ստուգաքննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգաքննության համար՝ երկու աշխատանքային օր, լաբորատոր աշխատանքների

կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով, դիպլոմային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ երեսուն աշխատանքային օր, պետական (ավարտական) յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար՝ վեց աշխատանքային օր:



Խնդիր 1 .

Շաքեն, ով սովորում է Երևանի պետական համալսարանում հեռակա ուսուցման բաժնում աշխատանքի է ընդունվում «Արարատ» ընկերությունում: Շաքեի աշխատանքային պայմանագրում աշխատավարձի չափը սահմանվել է 35 000 դրամ, որը կավելանա, երբ Շաքեն ավարտի համալսարանը:

Շաքեին չեն տրամադրում ոչ աշխատասեղան, ոչ անհրաժեշտ պարագաներ՝ պատճառաբանելով, որ նա դեռ պետք է սովորի, որից հետո նրան կտրամադրեն անհրաժեշտ պարագաներ:

Ինչպե՞ս պետք է վարվի Շաքեն: Ու՞մ կարող է դիմել և ինչպիսի՞ պահանջով: Հիմնավորել պատասխանը:

Խնդիր 2.

«Իքս» ընկերության նոր աշխատակից Նարեկը 6 ամիս աշխատելուց հետո դիմում է ընկերության կադրային վարչություն հերթական արձակուրդ ստանալու համար: Նարեկին հայտնում են, որ իր կողմից ստորագրված աշխատանքային պայմանագրով ամենամյա արձակուրդ սահմանվում է 15 օր, որից նա կարող է օգտվել 2 տարի աշխատելուց հետո:

Արդյո՞ք հիմնավոր է ընկերության պատասխանը: Ինչպե՞ս պետք է վարվի Նարեկը: Տալ հիմնավորում:

7.5. Կարգապահական կանոններ

7.5.1. Կարգապահական նորմեր սահմանելու նպատակը

Կազմակերպությունների, հատկապես մեծ կազմակերպությունների կողմից իրենց առևտրային գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որպեսզի աշխատողները հետևեն ընկերության կողմից սահմանված կարգ ու կանոնին և չխախտեն դրանք: Այս նպատակով հաճախ կազմակերպությունները իրենց ներքին իրավական ակտերով սահմանում են կարգապահական կանոններ, որոնցով կանոնակարգվում են աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքի ռեժիմը, կարգապահական պատասխանատվության միջոցները:

Կարգապահական կանոններ նախատեսելը նպատակ է հետապնդում սահմանել աշխատողների վարքագծի կանոններ, որպեսզի վերջիններս հետևեն դրանց և հասկանան, թե ի՞նչ իրավական հետևանքներ կառաջանան այս կամ այն կանոնը խախտելու համար:

Կարգապահական կանոնները տարբեր կազմակերպություններում տարբեր դրսևորում կարող են ունենալ: Օրինակ՝ բանկերում պարտադիր է հետևել հատուկ սահմանված հագուկապին:

Ամեն պարագայում կարգապահական կանոնները տարբեր կազմակերպություններում տարբեր կարող են լինել և դրանց խախտումը կարող է հանգեցնել տարբեր իրավական հետևանքների՝ նկատողությունից ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում:

Բոլոր աշխատողները պետք է իրազեկված լինեն կարգապահական կանոնների մասին, ուստի այդ ուղղությամբ գործատուն կարող է կարգապահական կանոնները փակցնել բոլորի համար տեսանելի վայրում կամ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով հանձնել յուրաքանչյուր աշխատողի:

7.5.2. Կարգապահական տույժեր

Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար գործատուն կարող է նշանակել հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն, աշխատանքային պայմանագրի լուծում:

Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար գործատուն կարող է նշանակել միայն մեկ կարգապահական տույժ, ընդ որում գործատուն պետք է հաշվի առնի աշխատողի կողմից կատարված խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, խախտման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի:

Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:

Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

Եթե աշխատողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը ոչ իրավաչափ է, կարող է այն բողոքարկել դատական կարգով:



Խնդիր 1

Ընկերության կարգապահական կանոններով աշխատանքային ռեժիմը սահմանված է ժամը 09:00-ից 18:00: Նարեկը մեկ ամիս շարունակ առանց հարգելի պատճառների աշխատանքի է գալիս ժամը 10-ից, ինչի համար վերջինիս տալիս են խիստ նկատողություն առանց բացատրագիր պահանջելու: Նարեկը ցանկանում է բողոքարկել կարգապահական տույժի կիրառումը:

Քննարկել՝ արդյո՞ք իրավաչափ էր Ընկերության կողմից կարգապահական տույժի կիրառումը:

Արդյո՞ք Ընկերությունը տվյալ պարագայում կարող էր կիրառել խիստ նկատողություն: Արդյո՞ք Նարեկը կարող է բողոքարկել կարգապահական տույժի նշանակումը, եթե այո՝ տալ հիմքերը և հիմնավորել:

Խնդիր 2

Նարեն աշխատանքի է անցնում «Իքսբանկ»-ում: Աշխատանքային առաջին շաբաթը Նարեն ներկայանում է ազատ հագուստով՝ չիմանալով, որ Բանկի կարգապահական կանոններով անհրաժեշտ է հետևել հատուկ Բանկի կողմից սահմանված հագուկապին: Նարեն իր բացատրագրում գրում է, որ չի ծանոթացել կարգապահական կանոններին, ինչի արդյունքում չի իմացել դրա մասին: Այդուհանդերձ Բանկը Նարեի նկատմամբ կիրառում է կարգապահական տույժ՝ նկատողություն:

Քննարկել՝ արդյո՞ք իրավաչափ է Նարեի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը: Ի՞նչ կարող է անել Նարեն այս իրավիճակում: Տալ հիմնավորված պատասխան:

7.6. Տեղեկատվության գաղտնիությունը աշխատանքային հարաբերություններում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական և ընտանեկան կյանքը : Առանց վերջինիս համաձայնության չի թույլատրվում հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

Աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերություններում գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են: Բոլոր անձնական տվյալները գործատուն պետք է ստանա աշխատողից: Իսկ եթե աշխատողի անձնական տվյալները հնարավոր է ստանալ միայն երրորդ անձից, ապա աշխատողը պետք է տա իր գրավոր համաձայնությունը: Բացի այդ, գործատուն իրավունք չունի ձեռք բերելու և մշակելու աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ Աշխատանքային հարաբերությունների հետ անմիջականորեն կապված դեպքերում գործատուն իրավունք ունի ձեռք բերելու և մշակելու աշխատողի անձնական կյանքի վերաբերյալ տվյալները՝ միայն նրա գրավոր համաձայնությամբ:

Գործատուի վրա պարտավորություն է դրված՝

- աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար.
- առանց աշխատողի գրավոր համաձայնության՝ առևտրային նպատակներով չհայտնել նրա անձնական տվյալները,
- աշխատողի անձնական տվյալները ստացող անձանց նախազգուշացնել և պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար աշխատողները տեղեկացված են: Աշխատողների անձնական տվյալները ստացող անձինք պարտավոր են պահպանել գաղտնիությունը,
- աշխատողների անձնական տվյալների փոխանցումը կազմակերպության ներսում իրականացնել գործատուի ներքին իրավական ակտերին համապատասխան,
- աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց, ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար,
- չպահանջել աշխատողի առողջության վերաբերյալ տեղեկություններ, բացառությամբ այն տվյալների, որոնք վերաբերում են աշխատողի կողմից աշխատանքային գործառույթ իրականացնելու հնարավորությանը:

Աշխատողներն իրենց հերթին պարտավորվում են չհրապարակել պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել մրցակից կազմակերպությանը:

Որոշ գործատուներ, որոնք անհանգստացած են աշխատավայրում անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, տեսախցիկներ են տեղադրում, ինչպես նաև կարող են ստուգել աշխատողների պայուսակները աշխատավայրը լքելիս : Այս միջոցառումները ընդունելի են, եթե ողջամիտ են:

Հարց է ծագում, թե արդյո՞ք գործատուները կարող են վերահսկել ինտերնետ կայքերի այցելությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև կարողալ աշխատողների նամակագրությունը: Նման սահմանափակումներ հնարավոր են, եթե նախատեսված են ընկերության քաղաքականությամբ, և աշխատողները ծանոթ են դրանց և գիտակցում են դրանք խախտելու հետևանքները: Նման քաղաքականության նպատակը կարող է լինել

կանխարգելել աշխատողների կողմից անձնական օգտագործման հնարավորությունը աշխատանքային ժամերին:



Խնդիր 1.

Քննարկել, թե արդյո՞ք աշխատողների անձնական կյանքի իրավունքը խախտվել է ներքոնշյալ դեպքերում.

1) Նարեն, ով աշխատում էր բանկում, նոր աշխատանքի է անցնում շինարարական ընկերությունում: Շինարարական ընկերության տնօրենը զանգում է բանկի գործադիր տնօրենին՝ Նարեի վերաբերյալ կարծիք ստանալու համար: Բանկի գործադիր տնօրենը ամբողջությամբ կարդում է Նարեի անձնական թերթիկը, ներառյալ առողջության վերաբերյալ տեղեկություններ:

2) Ոսկերչական խանութի տնօրենը խանութից հնարավոր գողությունները կանխարգելելու համար տեղադրում է տեսախցիկներ:

3) Նարեկն ազատվում է աշխատանքից այն հիմքով, որ վերջինս աշխատանքային ժամին օգտվել է սոցիալական կայքերից:

Խնդիր 2.

Նարեկը կաթնամթերքի արտադրությունում աշխատելու տարիներին մի օր զանգ է ստանում իր համակուրսեցուց ով այդ ժամանակ աշխատում էր մրցակից այլ կաթնամթերքի ընկերությունում: Նարեկը իր արտադրության կաթնամթերքը գովաբանելու համար իր համակուրսեցուն հայտնում է կաթնամթերքի բաղադրությունը և պատրաստման եղանակը:

Քննարկել, թե արդյո՞ք աշխատողների կողմից խախտվել է ծառայողական գաղտնիքը: Տալ հիմնավորված պատասխան:

7.7. Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը

Աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է աշխատանքային պայմանագրի լուծման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ինչպես աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը, այնպես էլ այն դեպքերը, երբ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի համաձայնությամբ,
- 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում,
- 3) աշխատողի նախաձեռնությամբ,
- 4) գործատուի նախաձեռնությամբ,
- 5) աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվելու դեպքում,

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը,

7) եթե օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողը զրկվել է որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից,

8) եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ աշխատանքի պետական տեսուչը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում,

9) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում,

10) ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում,

11) աշխատողի մահվան դեպքում,

12) աշխատանքի ընդունվելիս որակավորման կամ կրթության մասին, ինչպես նաև առողջական վիճակի մասին ներկայացրած տեղեկատվությունը կեղծ լինելու դեպքում,

12.1) աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով,

13) աշխատանքի ընդունվելիս որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկված լինելու փաստը աշխատողի թաքցնելու դեպքում:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծվում է հետևյալ հիմքերով.

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) դեպքում,

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում. Այս երկու դեպքերում գործատուն աշխատողին պարտավոր է ծանուցել ոչ ուշ, քանի երկու ամիս առաջ,

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում,

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում,

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում,

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով),

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում,

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում,

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում,

11) աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում, եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով գործատուն կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը միայն այն դեպքում, երբ աշխատողը դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս կամ աշխատողը, ով իրականացնում է ուսումնադաստիարակչական գործառնություններ, թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք, աշխատողը հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

7.7.1. Աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները

Կան դեպքեր, երբ գործատուն ոչ մի պարագայում չի կարող լուծել աշխատանքային պայմանագիր.

- աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում,
- աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում,
- հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը,
- մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում,
- գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով,
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում:



Խնդիր 1

Նարեկը, ով աշխատում է «Իքս» ընկերությունում, ծանուցում է ստանում աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, քանի որ ընկերության համապատասխան ստորաբաժանումը լուծարվել է:

Արդյո՞ք Ընկերությունն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը վերոնշյալ հիմքով: Ի՞նչ խորհուրդ կտաք Արմանին: Տալ հիմնավորված

պատասխան:

Խնդիր 2

Գործատուն աշխատանքից ազատում է Նահապետին այն հիմքով, որ վերջինս 65 տարեկան է: Նահապետը գտնում է, որ դա խտրական վերաբերմունք է, քանի որ իր հետ պայմանագիրը կնքվել է անժամկետ:

Արդյո՞ք ճիշտ է վարվել գործատուն: Հիմնավո՞ր է արդյոք Նահապետի դիրքորոշումը: Տալ հիմնավորված պատասխան:

Խնդիր 3

Նարեն 10 օր բացակայում է աշխատանքից իր հղիության ընթացքում, քանի որ բավականին թույլ է իրեն զգում: Գործատուն ազատում է նրան աշխատանքից:

Արդյո՞ք իրավացի է գործատուն: Ի՞նչ կարող է անել Նարեն:

7.8. Աշխատանքային վեճերը և դրանց լուծման կարգը

Աշխատանքային վեճը աշխատողի և գործատուի միջև տարաձայնություն է, որը կարող է առաջանալ աշխատանքային հարաբերությունների ընթացքում՝ կապված աշխատանքային պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների հետ:

Աշխատանքային վեճերը ենթակա են քննության դատական կարգով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Աշխատանքային վեճերի հայցերով դատարան դիմելիս հայցվորները ազատված են պետական տուրք վճարելուց:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքի պայմանների փոփոխման դեպքում, աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում, աշխատողը համապատասխան ծանուցումը (անհատական իրավական ակտ, փաստաթուղթ) ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ

աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքի, ապա այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ որպես հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Այս դեպքերից բացի հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը 3 տարի է, իսկ աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների դեպքում հայցային վաղեմությունը չի տարածվում, այսինքն՝ աշխատողները դատարան կարող են դիմել ցանկացած ժամանակ :

Դատարանում այս կամ այն փաստի ապացուցման պարտականությունը, որպես ընդհանուր կանոն, կրում է այն կողմը, ով վկայակոչում է այդ փաստը: Աշխատանքային վեճերով դատական պրակտիկան ցույց է տալիս, որ հիմնական բեռը կրում է գործատուն, քանի որ նա է տիրապետում այս կամ այն ապացույցին:



Խնդիր

Շաքեն, ով աշխատում էր որպես օդանավի ուղեկցորդուհի «Իքս» ավիաընկերությունում, իր աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ինքնաթիռի կայանումից անմիջապես հետո, ցանկանալով դուրս գալ ինքնաթիռից, վայր է ընկնում, քանի որ օդանավասանդուղքը սխալ է տեղադրված եղել: Նրան տեղափոխում են հիվանդանոց, որտեղ պարզվում է, որ Շաքեն ստացել է մեջքի կոտրվածք:

Կարո՞ղ է արդյոք Շաքեն դիմել դատարան, եթե այո, ապա ի՞նչ ժամկետներում, ո՞ւմ դեմ և ինչպիսի՞ պահանջով:

ԳԼՈՒԽ 8. ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

8.1. Ովքե՞ր են սպառողները

Մեզնից յուրաքանչյուրն ամեն օր գնում է քաղցրավենիք, պատվիրում սուրճ՝ սրճարանում, օգտվում հասարակական տրանսպորտից կամ գնում կինո նայելու՝ համապատասխանաբար հանդիսանալով քաղցրավենիքի, սուրճի, հասարակական տրանսպորտի սպառող: Սպառողն այն անձն է, ով մեկ այլ անձից գնում է ապրանքներ կամ ծառայություններ՝ իր անձնական կարիքները բավարարելու համար: Այս տեսանկյունից մենք բոլորս էլ սպառողներ ենք, քանի որ ամեն քայլափոխի գնում ենք տարբեր ապրանքներ կամ օգտվում ենք տարբեր ծառայություններից:

Երբ վաճառողը համաձայնում է վաճառել, իսկ գնորդը վճարել ապրանքների կամ ծառայությունների համար, վաճառողն ու գնորդը մտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ: Գնորդը պարտավորվում է վճարել, իսկ վաճառողն էլ իր հերթին պարտավորվում է վաճառել ապրանքը:

Գնորդը միշտ պետք է աչալուրջ լինի, այսինքն՝ պետք է միշտ ուշադիր լինի, թե ինչ է գնում: Հետևաբար, գնորդները պետք է տեղեկացված լինեն ապրանքների և ծառայությունների վերաբերյալ, որոնք գնում են: Բացի այդ նրանք պետք է իմանան իրենց իրավունքների մասին որպես սպառողներ, որպեսզի կարողանան իրենց իրավունքները պաշտպանել:

8.2. Շրջահայաց սպառողի վարքագիծը մրցակցային շուկայում

Սովորաբար նախքան ինչ-որ ապրանք գնելը, անհրաժեշտ է մտածել և ծանրութեթև անել: Հետևյալ խորհուրդները կարող են օգտակար լինել.

- ապրանքի կամ ծառայության մասին անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել՝ համեմատելով տարբեր ապրանքանիշերի ապրանքների հետ տարբեր խանութներում,
- անհրաժեշտ է որոշել՝ արդյո՞ք ապրանքը Ձեզ անհրաժեշտ է: Եթե գնում եք ապրանքը, ըստ անհրաժեշտության՝ համոզվեք, որ այն համապատասխանում է Ձեր պահանջներին,
- կարևոր է իմանալ, թե ինչպե՞ս է աշխատում, ինչքա՞ն ժամանակ է հնարավոր օգտագործել, ինչպե՞ս պետք է խնամել, ի՞նչ երաշխիքներ ունի, արդյոք նորոգման կարիք ունի,
- վաճառողի մասին տեղեկություններ հավաքեք՝ կապված վերջինիս հուսալիության, ազնվության և վարկանիշի հետ: Պարզեք, թե արդյոք վաճառողը հետ ընդունում է անորակ ապրանքները և վերադարձնում արդեն վճարված գումարը,
- համոզվեք, որ մանրամասն ծանոթացել եք վաճառքի պայմաններին: Օրինակ՝ անկանխիկ գնումների դեպքում անհրաժեշտ է իմանալ ապրանքի ամբողջ գինը, չբացահայտված ծախսեր կան, թե ոչ, առաքման պայմանները, երաշխիքի ժամկետը:

Մրցակցային շուկայում, ապրանքի մասին տեղեկացված լինելը լավագույն միջոցն է պաշտպանելու Ձեր սպառողական շահերը: Խելամիտ սպառողները համոզվում են, որ ունեն անհրաժեշտ տեղեկատվություն ապրանքների կամ ծառայությունների մասին, վաճառողների կամ արտադրողների, ինչպես նաև վաճառքի պայմանների վերաբերյալ:

Երբեմն, նույնիսկ ամենաուշադիր գնորդը կարող է խնդիրներ ունենալ իր գնած ապրանքի հետ: Կան տարբեր եղանակներ ծագած խնդիրները լուծելու համար: Ամեն պարագայում գնորդը պետք է պահպանի իր հանգստությունը և լինի հաստատակամ:

- Անմիջապես պետք է կապվել վաճառողի հետ: Վաճառողին պետք է տրամադրել ամբողջ տեղեկատվությունը ինչպես օրինակ գնման օրը, կտրոնը և թերության նկարագրությունը: Փաստաթղթերի բնօրինակները պահեք Ձեզ մոտ, վաճառողին հանձնեք միայն պատճենները,

- Եթե վաճառողը հրաժարվում է օգնել, ապա Ձեր պահանջը ուղղեք խանութի տնօրենին: Ցանկացած թղթային գրագրության դեպքում, պատճենը պահեք Ձեզ մոտ,

- Եթե ամեն պարագայում դժգոհ եք, կարող եք դիմել համապատասխան իրավասու մարմինների՝ օրինակ՝ սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, իրավաբանական կլինիկա և այլն:

Եթե չեք կարողանում ձեր խնդիրները անձամբ կամ համապատասխան կազմակերպությունների միջոցով լուծել, կարող եք դիմել դատարան: Եթե ի վիճակի չեք ինքնուրույն ձեր շահերը պաշտպանել դատարանում և համապատասխան գումար չունեք, կարող եք դիմել օրինակ՝ իրավաբանական կլինիկա կամ սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին («Սպառողների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպությանը): Ամեն դեպքում պետք է ձգտել հարաբերությունները կարգավորել բանակցությունների միջոցով և դատարանը դիտարկել որպես վերջին միջոց:



Խնդիր

Ինչպե՞ս կվարվեիք ներքոնշյալ իրավիճակներում: Ո՞ր կազմակերպություններին կդիմեիք և ինչո՞ւ.

- 1) Դուք գնում եք կաթնամթերք, տանը բացում եք և նկատում եք, որ փչացած է:
- 2) Թունավորվում եք խանութից գնած ձուկը ուտելուց հետո: Տեղեկանում եք, որ մի քանի հոգի ևս թունավորվել են: Դուք բողոք եք ներկայացնում խանութին,

բայց անարդյունք:

- 3) Տուրիստական գործակալության միջոցով Երևան-Մոսկվա ինքնաթիռի տոմս եք գնում: Ժամանելով օդանավակայան, պարզում եք, որ Ձեր տոմսերը ամրագրված չեն եղել: Դուք ցանկանում եք հետ ստանալ Ձեր գումարը:

8.3. Առուվաճառքի պայմանագրով սպառողների շահերի պաշտպանությունը

8.3.1. Պայմանագրի հասկացությունը և կնքման կարգը

Պայմանագիրը համաձայնություն է 2 կամ ավել անձանց միջև: Պայմանագրում մի կողմը սովորաբար առաջարկ է անում, իսկ մյուս կողմը այն ընդունում է: Օրինակ՝ Ա-ն առաջարկում է վաճառել իր մեքենան, իսկ Բ-ն համաձայնում է գնել այն: Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Երբ մենք խանութից գնում ենք շոկոլադ, մենք պայմանագրային հարաբերությունների մեջ ենք մտնում վաճառողի հետ: Եթե կողմերից մեկը չի կատարում իր խոստումը (պարտավորությունը), մյուս կողմը կարող է պահանջ ներկայացնել: Սպառողները պետք է հասկանան, թե ինչ է իրենից ներկայացնում պայմանագիրը և ինչպես այն կարող է անդրադառնալ իրենց իրավունքներին:

Որպեսզի պայմանագիրը պատշաճ համարվի, կողմերը պետք է համաձայնության գան փոխադարձ իրավունքների և պարտականությունների մասին, այսինքն՝ հասկանան, թե

համապատասխան պայմանագրով ով ինչ պարտավորություններ ունի: Առաջարկը (օֆերտան) պետք է լինի հստակ և որոշակի: Այն կարող է արվել ինչպես կոնկրետ անձանց, այնպես էլ անորոշ անձանց: Այն անձը, ով ցանկանում է ընդունել առաջարկը, պետք է այդ մասին հայտնի առաջարկ անողին (ակցեպտ): Առաջարկը կարող է ընդունվել ինչպես գրավոր կամ բանավոր այդ մասին հայտնելով, այնպես էլ այնպիսի գործողությունների կատարմամբ (կոնկյուդենտ գործողություններ), որոնք վկայում են, որ առաջարկն ընդունվել է:

Պայմանագիր կնքելու համար անձը պետք է իրավաբանորեն հնարավորություն ունենա մտնելու պայմանագրային հարաբերությունների մեջ: Օրինակ մինչև 6 տարեկան երեխաները կամ հոգեկան խանգարում ստացած անձինք չեն կարող ինքնուրույն մտնել պայմանագրային հարաբերությունների մեջ: 6-ից 14 տարեկանները (փոքրահասակներ) կարող են կնքել միայն մանր կենցաղային, անհատույց օգուտներ ստանալուն ուղղված և նոտարական վավերացում չպահանջող պայմանագրեր: 14-ից 18 տարեկան անչափահասները ինքնուրույն կարող են տնօրինել իրենց աշխատավարձը, կենսաթոշակը, կրթաթոշակը և այլ եկամուտներ, ավանդներ մուծել վարկային հիմնարկներ և տնօրինել դրանք, կնքել մանր կենցաղային պայմանագրեր:

Երբ Ա-ն ասում է, որ ինքը վաճառում է իր հեռախոսը 50000 ՀՀ դրամով, դա օֆերտա է: Երբ Բ-ն ասում է, որ համաձայն է գնել կամ վճարում է գումարը, դա ակցեպտն է: Այսինքն, նրանք համաձայնության են եկել պայմանագրի էական պայմանների շուրջ:

Գովազդը, սակայն, պայմանագիր կնքելու օֆերտա չէ: Դա ընդամենը օֆերտա անելու հրավեր է, եթե, իհարկե, գովազդում հստակորեն չեն նշված պայմանագրի էական պայմանները:

Սպառողները չպետք է շուտափույթ ձևով պայմանագրեր կնքեն: Նրանք պետք է հասկանան պայմանագրի բոլոր դրույթները մինչև օֆերտան ակցեպտավորելը: Հակառակ պարագայում շատ ուշ կարող է լինել ինչ-որ բան փոխելու:

Պայմանագրերը կարող են կնքվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Բանավոր կարող են կնքվել բոլոր այն պայմանագրեր, որոնց համար գրավոր ձև սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ: Սովորաբար կնքման պահին կատարվող մանր կենցաղային գործարքները կնքվում են բանավոր:

Սակայն կան պայմանագրեր, որոնք անպայմանորեն պետք է կնքվեն գրավոր, իսկ որոշ դեպքերում վավերացվեն նոտարական կարգով, այլապես նման պայմանագրերը կհամարվեն անվավեր: Բացի այդ գրավոր պայմանագրերը ավելի հեշտ է ապացուցել, քանի որ կողմերի կամքը հստակորեն ձևակերպված է թղթի վրա:

Ցանկացած պայմանագիր կնքելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ այն չունենա դատարկ թողած մասեր: Միշտ պետք է վերցնել պայմանագրի մեկ օրինակը: Մինչև պայմանագիր կնքելը ուշադիր կարդացեք բոլոր կետերը, որպեսզի հասկանաք, թե ինչ պայմանագիր եք ստորագրում, որն է պայմանագրի գինը, մնացած պայմանները: Եթե ինչ-որ բան դժվարանում եք հասկանալ, ապա կարող եք դիմել իրավաբանի, քանի որ անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, որոնց տիրապետում են իրավաբանները:



Խնդիր 1.

Քննարկել՝ արդյո՞ք ներքոնշյալ դեպքերում պայմանագիրը կնքվել է, թե՛ ոչ: Հիմնավորել պատասխանը.

- *Շաքեն ասում է իր հարևանին, որ ուզում է վաճառել իր հեծանիվը 10000 դրամով: Հարևանը Շաքեյին տալիս է այդ գումարը:*

- *17 ամյա Միերը տուրիստական գործակալության հետ կնքում է ծառայությունների մատուցման պայմանագիր:*

- *Նարեկը հարևանին ասում է, որ կգնի նրա մեքենան, եթե այն իրեն համապատասխանի: Հարևանը համաձայնվում է:*

Խնդիր 2.

Նահապետը խոստանում է իր բնակարանը վաճառել իր հարևանին 8 000 000 դրամով: Հարևանը Նահապետին օՖերտա է ներկայացնում, բայց Նահապետը գրավոր ձևով այն չի ակցեպտավորում: Դրա փոխարեն Նահապետն իր բնակարանը վաճառում է այլ անձի: Հարևանը շատ բարկացած է Նահապետի վրա:

Արդյո՞ք Նահապետի և հարևանի միջև առկա էր պայմանագիր: Հիմնավորել պատասխանը:

8.3.2. Առուվաճառքի պայմանագիր

Առուվաճառքի պայմանագիրը ամենատարածված պայմանագրերից է, քանի որ քաղաքացիները այդ պայմանագրով բավարարում են իրենց սպառողական պահանջները:

Հիմնականում սպառողները գոհ են լինում իրենց գնած ապրանքներից կամ ստացած ծառայություններից, սակայն լինում են դեպքեր, երբ վաճառողները սխալ ձևով են ներկայացնում իրենց ապրանքների կամ ծառայությունների որակները, ինչի արդյունքում տուժում են սպառողները:

Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքներ են նախատեսված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ վաճառողը գնորդին պետք է վաճառի պատշաճ որակի ապրանք: Ապրանքի որոշ թերությունների առկայության դեպքում վաճառողը պարտավոր է այդ մասին տեղեկացնել գնորդին: Եթե վաճառողը ապրանքի թերությունների մասին չի զգուշացնում գնորդին, ապա գնորդն իրավունք ունի պահանջել՝

- անորակ ապրանքը փոխարինել պատշաճ որակի ապրանքով,
- համամասնորեն իջեցնել ապրանքի գինը,
- անհապաղ և անհատույց վերացնել ապրանքի թերությունները,
- հատուցել ապրանքի թերությունները վերացնելու ծախսերը:

Սպառողներն իրավունք ունեն պահանջելու փոխարինել ոչ միայն անորակ ապրանքը, այլև որակական թերություններ ունեցող ցանկացած ապրանք: Սակայն տեխնիկապես բարդ կամ թանկարժեք ապրանքների դեպքում սպառողները կարող են պահանջել փոխարինել այն, եթե առկա են այդ ապրանքների որակին առաջադրվող պահանջների էական խախտում:

Օրինակ, եթե Ա-ն գնում է ջրակայուն ժամացույց, սակայն այն ջրից չի աշխատում, ապա Ա-ն կարող է վաճառողից պահանջել փոխարինել այդ ապրանքը:

Սպառողը կարող է ապրանքի գինը իջեցնելու պահանջ ներկայացնել բոլոր դեպքերում, երբ գտնում է, որ թերություններով հանդերձ ապրանքը կարող է օգտագործել իր

նպատակային նշանակությանը համապատասխան, սակայն եթե իմանար այդ թերությունների մասին, չէր վճարի վաճառողի առաջարկած գինը: Գինը իջեցնելու դեպքում հաշվի է առնվում ապրանքի գինը իջեցնելու մասին պահանջը ներկայացնելու օրվա գինը, իսկ եթե սպառողի պահանջը կամովին չի բավարարվել՝ դատարանի վճիռը կայացնելու օրվա գինը:

Սպառողը կարող է ապրանքի թերությունները վերացնելու պահանջ ներկայացնել միայն այն դեպքում, երբ ապրանքի հատկությունները թույլ են տալիս դրանք վերացնել: Այն դեպքում, երբ գնորդը նման պահանջ է ներկայացնում, վաճառողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնելու թերությունները, ընդ որում թերությունների վերացման համար անհրաժեշտ ծախսերը պարտավոր է կատարել վաճառողը:

Սպառողն իրավունք ունի վաճառողից պահանջելու ապրանքի թերությունների վերացման համար կատարված ծախսերը, եթե ինքն է վերացնում թերությունները: Սակայն այդ ծախսերը պետք է լինեն համաչափ թերությունների վերացման անհրաժեշտությանը և ապրանքի գնին, հակառակ դեպքում վաճառողը կարող է չհատուցել ավելորդ կատարած ծախսերը:

Ամեն պարագայում սպառողը կարող է հրաժարվել առուվաճառքի պայմանագրից և պահանջել վերադարձնել ապրանքի համար վճարված իր գումարը:

Սպառողն իրավունք ունի մինչև պայմանագիր կնքելը գննել ապրանքը, ստուգել հատկությունները, ցուցադրել դրա օգտագործումը, եթե ապրանքի բնույթը թույլ է տալիս: Եթե գնորդը սպառողին վաճառում է ապրանքը և չի տալիս համապատասխան տեղեկատվություն, ապա սպառողը կարող է պահանջել վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը և հատուցել վնասները:

Առուվաճառքի պայմանագրով գնորդի կողմից պահանջ ներկայացնելու ժամկետները:

Սպառողն իրավունք ունի ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել որոշակի ժամկետում: Եթե ապրանքի նկատմամբ սահմանված չէ երաշխիքային կամ պիտանիության ժամկետ, ապա սպառողը կարող է ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել պայմանով, որ վաճառված ապրանքի թերությունները հայտնաբերված լինեն ապրանքը գնորդին հանձնելուց հետո ողջամիտ ժամկետում՝ ոչ պակաս, քան երկու տարվա ընթացքում, եթե, իհարկե, ավելի երկար ժամկետ սահմանված չէ պայմանագրով կամ օրենքով:

Եթե ապրանքի համար սահմանված է երաշխիքային ժամկետ կամ պիտանիության ժամկետ, ապա սպառողն իրավունք ունի ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե թերությունները հայտնաբերվել են երաշխիքային կամ պիտանիության ժամկետի ընթացքում:

Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը տասնչորս օրվա ընթացքում՝ չհաշված գնման օրը, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել:

Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա տեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված դրամարկղային կտրոնը:

Եթե վաճառողին դիմելու օրը վաճառքում առկա չէ նմանօրինակ ապրանք, ապա սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ լուծելու պայմանագիրը և պահանջելու վերադարձնել գումարը:



Խնդիր

Քննարկել, թե ստորև ներկայացվող յուրաքանչյուր դեպքում ի՞նչ կարող է անել սպառողը և ի՞նչ արդյունքի կհասնի.

- 1) Շաքեն ցանկանում է գնել հեծանիվ, որը, ըստ գովազդի, պետք է ունենար ազդանշանային համակարգ: Առանց ստուգելու գնում է այն: Բերելով տուն՝ պարզվում է, որ այն ոչ մի ազդանշան էլ չի տալիս:
- 2) Միերը խանութից գնում է հագուստ: Բերելով տուն և փորձելով այն՝ Միերը ցանկանում է այն վերադարձնել:
- 3) Անահիտը 50,000 ՀՀ դրամով վաճառում է իր սառնարանը իր հարևանին: Անահիտը տեղյակ է, որ սառնարանը ժամանակ առ ժամանակ չի աշխատում, սակայն այդ մասին չի ասում հարևանին: Վերանորոգման ծախսերը կկազմեն 20000 դրամ: Հարևանը բողոքում է Անահիտին:
- 4) Նարեն խանութի աշխատողին հարցնում է, թե ինչպե՞ս է պետք լվանալ զգեստը, որն ինքը ցանկանում է գնել: Խանութի աշխատակիցը նրան ասում է, որ այդ տիպի կտորները կարելի է լվանալ ցանկացած եղանակով: Նարեն լվանում է իր զգեստը լվացքի մեքենայով, որից հետո զգեստը փոքրանում է: Աննան բողոք է ներկայացնում խանութի աշխատակցին:
- 5) Նարեկը խանութից գնում է հեռուստացույց, որի հետ տրվում է երաշխիքային կտրոն 2 տարի ժամկետով: 2.5 տարի անց հեռուստացույցը փչանում է: Պատճառը արտադրական ոչ բացահայտ թերությունն էր, որն էլ հանդիսացել է փչանալու պատճառը:

8.4. Վարկային հարաբերություններում սպառողների շահերի պաշտպանությունը

8.4.1. Ինչ է վարկը

Կրեդիտ (վարկ) բառը ծագել է լատիներեն *credo* բառից և նշանակում է վստահություն: Այլ խոսքերով, այն ենթադրում է պարտքով գումար վերցնել և այն վերադարձնել ապագայում: Որպես վարկատու Հայաստանի Հանրապետությունում հանդես են գալիս բանկերը, վարկային կազմակերպությունները կամ գրավատները:

Այն անձը, ով գումար է վերցնում, կոչվում է վարկառու: Նախքան վարկով ինչ-որ բան գնելը անհրաժեշտ է որոշել, թե արդյոք անհրաժեշտություն կա նման ապրանք գնելու, քանի որ վարկառուն պարտավոր է ոչ միայն վարկատուին վերադարձնել ստացված գումարը, այլ նաև վճարել հավելյալ տոկոսներ: Այդ իսկ պատճառով նախքան վարկով որևիցե իր գնելը անհրաժեշտ է ծանրութեթև անել բոլոր վարկ վերցնելու օգուտներն ու վնասները:

Սպառողները, նախքան վարկ վերցնելը, պետք է ուսումնասիրեն համապատասխան շուկան և իմանան, թե որ բանկը կամ վարկային կազմակերպությունը կամ գրավատունն է ավելի լավ պայմաններ առաջարկում: Այդ իսկ պատճառով, նախքան վարկ վերցնելը անհրաժեշտ է ուշադիր կարդալ պայմանագիրը:

8.4.2. Վարկավորման պայմանագրի առանձնահատկությունները

Ցանկացած վարկատու նախքան վարկ տրամադրելը պետք է համոզվի, որ այդ գումարը կվերադարձվի: Այդ իսկ պատճառով վարկատուն կպահանջի հետևյալ տեղեկատվությունները.

- արդյո՞ք սպառողը վստահելի անձ է,
- արդյո՞ք սպառողն ունի կայուն եկամուտ,
- արդյո՞ք բավականաչափ գումար աշխատում է, որպեսզի վերադարձնի տրամադրած գումարը և տոկոսները,
- արդյո՞ք սպառողը նախկինում պարտաճանաչ կատարել է իր վճարումները:

Սպառողական վարկի նպատակն է օգնել ֆիզիկական անձ սպառողին ապրանքներ ձեռք բերելու կամ այլ ծախսեր հոգալու համար: Սպառողական վարկերը տրամադրվում են միայն ՀՀ դրամով:

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է, որ կրեդիտավորման պայմանագիրը կնքվում է գրավոր և պետք է նվազագույնը ներառի հետևյալ պայմանները.

- տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշում,
- տարեկան փաստացի տոկոսադրույքը փոխելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ նշում,
- հնարավորության դեպքում կրեդիտը մարելու նպատակով սպառողի կողմից վճարման ենթակա վճարումների, տոկոսների և այլ պարտադիր վճարների գումարի չափի, թվի, հաճախականության կամ ժամկետների, ինչպես նաև այդ վճարումների ամբողջ գումարի չափի վերաբերյալ նշում,
- ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների գնի մասին նշում,
- սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման մասին նշում,
- մտածելու ժամանակի մասին նշում:

Սպառողական վարկի դեպքում սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:

Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Սպառողի կողմից կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը:



Խնդիր 1.

Նարեկը մեկ տարի մարման ժամկետով վարկ է վերցրել «Լոմբարդ» գրավատնից 300.000 ՀՀ դրամի չափով՝ գրավադրելով իր ոսկյա ապարանջանը: Երեք ամիս անց ցանկանալով վաղաժամ մարել վարկը գրավատան աշխատակիցը հայտնում է, որ Նարեկը պետք է կամ մեկ տարի շարունակ հավասարաչափ մարի վարկը և վճարի տոկոսները կամ պետք է վճարի մեկ տարվա տոկոսը քանզի վաղաժամ մարելու իրավունք նախատեսված չէ պայմանագրով:

Արդյո՞ք ճիշտ է պատասխանել գրավատան աշխատակիցը:

Խնդիր 2.

Նահապետը 01.02.2014թ, երկու տարի մարման ժամկետով երկու միլիոն ՀՀ դրամ քարտային հաշվով սպառողական վարկ է վերցրել «ԼՈՒՅՍ» ՍՊԸ քանկից՝ համաձայն քանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմանների: 01.04.2014թ, քանկը որոշում է ընդունում ավելացնելու քարտային հաշվով տրամադրվող վարկերի գումարը՝ դարձնելով 3.000.000 ՀՀ դրամ և փոխելով գանձվող տոկոսագումարի չափը: Նահապետը ստուգելով հաշիվը ուրախանում է և ծախսում գումարը: Մեկ ամիս անց Նահապետը նամակ է ստանում, որ նա պարտավոր է մարելու մեծ գումարի տոկոսներ և ունի վերցրած 5.000.000 ՀՀ դրամի վարկ:

Ի՞նչ պետք է անի Նահապետը: Արդյո՞ք իրավունք ուներ քանկը առանց զգուշացնելու փոփոխել վարկի պայմանները:

8.5. Անբարեխիղճ գովազդ

«Գովազդի մասին» ՀՀ օրենքը գովազդը բնորոշում է որպես իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածում անորոշ թվով անձանց, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը անձանց, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Իր նպատակին ծառայելու համար գովազդը պետք է գրավիչ լինի, որպեսզի կարողանա հետաքրքրություն առաջացնել ապրանքների և/կամ ծառայությունների նկատմամբ և պահպանել այն մարդկանց շրջանում:

«Գովազդի մասին» օրենքն արգելում է հրապարակել անբարեխիղճ գովազդ: Որպեսզի գովազդը անբարեխիղճ ճանաչվի անհրաժեշտ է ցույց տալ մոլորեցման կամ հասարակական վտանգի փաստի առկայությունը:

Մոլորեցումը գովազդի փաստացի ունակությունը ապրանքների հատկությունների, քանակի, որակի, առանձնահատկությունների, գնի և այլ տեղեկությունների, ինչպես նաև դրանց գովազդատուների մասին տեղեկատվության լրիվ կամ մասնակի անարժանահավատության, բացթողումների և աղավաղումների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց ապակողմնորոշումն է:

Հասարակական վտանգ ասելով՝ հասկացվում է գովազդի փաստացի ունակությունը մրցակցին վնաս հասցնելու, բռնության դրդելու, գովազդ սպառողի նախապաշարումներն ու սնահավատությունը, փորձի պակասն օգտագործելու, գովազդ սպառողներին առողջության, սեփականության, ինչպես նաև շրջակա միջավայրի համար վտանգավոր գործողությունների մղելը:

Այս երկու պայմաններից թեկուզ մեկի առկայությունը հիմք է ճանաչելու գովազդը՝ որպես անբարեխիղճ:

Եթե գովազդի մի մասն է միայն մոլորեցնող կամ հասարակայնորեն վտանգավոր, ապա համարվում է, որ գովազդն ամբողջությամբ անբարեխիղճ է:

Գովազդի բառացի ճշմարտացիությունը չի պաշտպանում այն անբարեխիղճ համարվելուց, եթե գովազդի ընդհանուր բովանդակությունից հասկացվում է այլ իմաստ:

Անբարեխիղճ գովազդի փաստի բացահայտման դեպքում գովազդի մասին օրենսդրությունն խախտողը պարտավոր է իր հաշվին հրապարակել հակագովազդ:

Հակագովազդը կարող է իրականացվել նաև այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից, որոնք կամավոր կերպով իրենց վրա կվերցնեն այդ պարտականությունները՝ գովազդային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի կամ դատական մարմինների առաջարկությամբ:

Հակագովազդը կատարվում է գովազդի կատարման նույն միջոցներով՝ տևողության, տարածության, տեղի և նույն պայմանների օգտագործմամբ:

Եթե սպառողի իրավունքները խախտվել են անբարեխիղճ գովազդի հետևանքով, այսինքն, երբ վերջինս մոլորվել է, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու՝


- վնասների հատուցում,
- քաղաքացու կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցում,
- բարոյական վնասի հատուցում,
- գովազդի հրապարակային հերքում:

Անբարեխիղճ գովազդ օգտագործելու և հակագովազդից հրաժարվելու համար պատասխանատվությունը կրում են գովազդատուն, գովազդ արտադրողը և գովազդակիրը:

Գովազդատուն պատասխանատվություն է կրում գովազդային պատվերի օրինականության, այդ պատվերում բերված տվյալների հավաստիության համար, եթե նա չի ապացուցում, որ գովազդային օրենսդրության պահանջների խախտումը տեղի է ունեցել գովազդ արտադրողի կամ գովազդակրի մեղքով:

Գովազդ արտադրողը պատասխանատվություն է կրում գովազդային հաղորդագրության պատշաճության և օրինականության համար:

Գովազդակիրը պատասխանատվություն է կրում գովազդի տեղաբաշխման միջոցների, ժամանակի և տեղի համար:



Խնդիր 1.

Հյուրեր արտադրող ընկերությունը իր գովազդներից մեկում տեղեկացնում է, որ իր հյուրերը պատրաստված են բացառապես բնական հումքից: Սակայն մի քանի ամիս անց ստուգման արդյունքում պարզվում է, որ դա իրականությանը չի համապատասխանում, և բացի բնական հումքից օգտագործվել է նաև արհեստական հումք:

Արդյո՞ք առկա է անբարեխիղճ գովազդ: Արդյո՞ք սպառողների իրավունքները խախտվել են: Եթե այո, ի՞նչ կարող են անել վերջիններս: Հիմնավորել պատասխանը:

Խնդիր 2.

Նարեն գովազդային վահանակի վրա նկատում է կապի ծառայություններ մատուցող օպերատորի գովազդ, որտեղ նշված էր հետևյալը. «Զանգիր Մոսկվա, բոպեն ընդամենը 10 դրամ: Մանրամասն՝ 000000»: Գայթակղվելով՝ Նարեն որոշում է առանց մանրամասները իմանալու զանգել Մոսկվայում բնակվող իր բարեկամին: Հետագայում պարզվում է, որ այդ հատուկ առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ էր հատուկ համարահավաքման կարգ, ինչը Նարեի կողմից չէր պահպանվել:

- Քննարկել՝ արդյո՞ք տվյալ դեպքում գովազդը հրապարակային օֆերտա էր, թե՛ ոչ:
- Արդյո՞ք առկա է անբարեխիղճ գովազդ:
- Արդյո՞ք սպառողների իրավունքները խախտվել են: Եթե այո, ապա ո՞ւմ և ի՞նչ պահանջ կարող են ներկայացնել: Հիմնավորել պատասխանը:

ԳԼՈՒԽ 9. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

9.1. Ժողովրդի իշխանության իրականացման ձևերը

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Այսինքն, ժողովուրդը հանդիսանում է միասնական և անբաժանելի իշխանության միակ սուբյեկտը, աղբյուրը, կրողը: Ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է 2 ձևով՝ անմիջականորեն և միջնորդավորված: Ժողովրդի իշխանության իրականացման անմիջական ձևերն են ազատ ընտրությունները և հանրաքվեն: Իսկ միջնորդավորված ձևեր են հանդիսանում ժողովրդին պատկանող իշխանության իրականացումը Սահմանադրությամբ սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով: Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների միջոցով են ձևավորվում օրենսդիր մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինները, Հանրապետության Նախագահը: Այլ կերպ ասած, ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրականացնում են իրենց կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը՝ որոշում են իրենց ներկայացուցիչներին համապատասխան ընտրովի մարմիններում և օժտում են նրանց ժողովրդին պատկանող իշխանության իրականացման մանդատներով:



Խնդիր 1.

- ՀՀ Նախագահը հրամանագիր է հրապարակում Ազգային ժողովի ձևավորման և Ազգային Ժողովի Նախագահի նշանակման վերաբերյալ:

Իրավաչափ են արդյո՞ք Նախագահի գործողությունները: Հիմնավորեք պատասխանը:

Խնդիր 2.

Ազգային ժողովը որոշում է կայացնում վարչապետին ՀՀ Նախագահ նշանակելու մասին: *Իրավաչափ է արդյո՞ք Ազգային Ժողովի որոշումը: Հիմնավորեք պատասխանը:*

Խնդիր 3.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախարարը ընդունել հրաման Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում քաղաքապետ նշանակելու վերաբերյալ: *Իրավաչափ է արդյո՞ք նախարարի հրամանը՝ հիմնավորել պատասխանը:*

9.2. Ընտրությունների տեսակները և պարբերականությունը

ՀՀ Սահմանադրության և ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրությունները, ըստ մակարդակի, լինում են համապետական և տեղական:

Այսպես, համապետական ընտրություններն են Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունները, իսկ տեղական ընտրություններն են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունները, համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունները:

Ըստ անցկացման ժամկետների՝ ընտրությունները լինում են հերթական և արտահերթ: Հերթական ընտրություններն անցկացվում են այն ժամանակ, երբ լրանում են համապատասխան մարմինների պաշտոնավարման ժամկետները, իսկ արտահերթ ընտրություններն անցկացվում են՝ ըստ անհրաժեշտության:

Ընտրությունները լինում են նաև հիմնական և լրացուցիչ: Հիմնական ընտրությունների միջոցով ձևավորվում է ընտրովի մարմինների ողջ համակարգը, իսկ թափուր տեղերի համալրումը կատարվում է լրացուցիչ ընտրությունների միջոցով:

Ընտրովի մարմինների լիազորությունների արդյունավետ ժամկետի որոշումը գործնական մեծ նշանակություն ունի: Արդյունավետ ժամկետի որոշումը կարևոր է և՛ համապատասխան ընտրովի մարմնի համար, և՛ ընտրողների համար:

Մասնավորապես՝ ընտրովի մարմինը հնարավորություն է ստանում ծրագրեր մշակել և իրականացնել իր լիազորությունների *որոշակի ժամանակահատված* նկատի ունենալով, իսկ ընտրողների համար լիազորությունների որոշակի ժամանակահատվածը կարևոր է ընտրված մարմնի հետ կապ պահպանելու համար: ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում են, որ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Ընդ որում, նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:

Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուտ, քան 40, և ոչ ուշ, քան 30 օր առաջ:

Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրություններ չեն կարող անցկացվել արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:



Խնդիր 1.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հանրային հեռուստատեսությամբ և Հանրային Ռադիոյով հայտարարում է ՀՀ Նախագահի ընտրության անցկացման օրվա մասին: *Ընտրությունների ինչպիսի՞ տեսակների հետ գործ ունենք:*

Խնդիր 2.

Թիվ 35 ընտրատարածքում ընտրված պատգամավոր Ն-ի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են վերջինիս մահվան պատճառով: Ազգային ժողովը պատգամավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ արձանագրություն է կազմում և այն 5-օրյա ժամկետում ուղարկում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Թիվ 35 ընտրատարածքում կազմակերպվում է ընտրություն: *Ընտրությունների ո՞ր տեսակների հետ ենք առնչվում:*

Խնդիր 3.

Հանրապետության Նախագահը պաշտոնավարել է 5 տարի, այդ ընթացքում նա վայելել է մեծ ժողովրդականություն, և ժողովուրդը երկրի ղեկավարի պաշտոնում չի տեսնում որևէ այլ թեկնածուի: Քաղաքացիական ակտիվ ուժերն անցկացրել են հասարակական հարցումներ, հարցումների արդյունքները ցույց են տվել, որ հասարակության ճնշող մեծամասնությունը համաձայն է, որ գործող Նախագահը շարունակի պաշտոնավարել ևս 5 տարի: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական պայմանները և, հատկապես այն, թե պետական բյուջեի վրա որքան ծանր կանդրադառնան նախագահական ընտրությունների կազմակերպումն ու իրականացումը՝ երկրի քաղաքական ուժերը, քաղաքացիների ակտիվ խմբերի հետ համատեղ, որոշում են կայացրել թույլատրել գործող Նախահագին շարունակել պաշտոնավարել ևս 5 տարի:

Իրավաչա՞փ են արդյոք նշված գործողությունները:

9.3. Հանրաքվե

Ժողովրդին պատկանող իշխանության անմիջական իրականացման մյուս ձևը հանրաքվեն է: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրաքվեն անցկացվում է երկրի համար կարևորագույն խնդիրներ լուծելու համար, մասնավորապես՝

ա/ Սահմանադրությունը ընդունել կամ դրանում փոփոխություններ կատարել,


բ/ օրենքներ ընդունել,

գ/ պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը քայքայել:

Հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ: Ընդ որում, եթե նախաձեռնությունը գալիս է Նախագահից, ապա առաջարկված փոփոխությանը պետք է համաձայնություն տա Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ Կառավարության առաջարկով: Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրաքվեի չեն կարող դրվել այն հարցերը, որոնք վերաբերում են ՀՀ Սահմանադրության 1, 2 և 114 հոդվածներում փոփոխություններ կատարելուն, պետական իշխանության գործող մարմինների լիազորությունների ժամկետները կրճատմանը կամ երկարաձգմանը, ուղղակիորեն վերապահված են պետական իշխանության մարմինների իրավասությանը, մարդու իրավունքներին և ազատություններին, դրանց իրականացումն ապահովող երաշխիքներին:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրաքվե չի կարող անցկացվել Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան մեկ երրորդն ընդգրկող տարածքում արտակարգ և ռազմական դրություն հայտարարվելու դեպքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրությունը վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում:



Խնդիր 1.

Անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել ՀՀ Սահմանադրության 99-րդ հոդվածում, ըստ որի՝ սահմանադրական դատարանը կազմված է 9 անդամից:

Ինչպե՞ս պետք է կատարվի այս փոփոխությունը երկրի մայր օրենքում:

Խնդիր 2.

Պարտադիր կենսաթոշակային նոր համակարգը հասարակության մեջ միանշանակ չընդունվեց:

Ի՞նչ մեխանիզմով կարելի է բացահայտել հասարակության մեծամասնության կարծիքը կենսաթոշակային նոր համակարգի վերաբերյալ:

Խնդիր 3.

Հանրաքվեի է դրվել Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու նախագիծ: Նախագիծին կողմ է քվեարկել 260.000 ընտրող: Ընտրական ցուցակներում ընդգրկված են 1.600.000 ընտրող, իսկ քվեարկությանը մասնակցել են 500.000 ընտրող:

Արդյոք հանրաքվեի դրված նախագիծը համարվու մ է ընդունված:

Խնդիր 4.

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Հանրապետությունում աշխատատեղերի բացակայության պատճառով մարդիկ զանգվածաբար մեկնում են արտագնա աշխատանքների, Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորներն առաջարկում են հանրաքվեի միջոցով փոփոխություն կատարել Սահմանադրության 1-ին հոդվածի այն մասում, որը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Նրանք իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ սոցիալական պետության խնդիրն է իր քաղաքացիներին ապահովել աշխատանքով, որպեսզի նրանք կարողանան աշխատել և հոգալ իրենց և իրենց ընտանիքների սոցիալական խնդիրները:

Իրավաչափ են արդյոք պատգամավորների առաջարկությունները:

Խնդիր 5.

Հանրապետության Նախագահը, Հանրապետության վրա զինված հարձակման անմիջական վտանգ կանխատեսելով, հայտարարել է ռազմական դրություն: Դրանից հետո անհապաղ գումարվել է Ազգային ժողովի հատուկ նիստ, և Ազգային ժողովը գտել է, որ Նախագահի կողմից ձեռնարկված միջոցառումները համարժեք չեն ստեղծված իրավիճակին և չեղյալ է հայտարարել դրանք: Դրանից հետո Ազգային ժողովը դիմում է Նախագահին հանրաքվե անցկացնելու առաջարկությամբ:

Իրավաչափ են արդյոք Ազգային ժողովի գործողությունները:

9.4. Ընտրելու իրավունք

Ընտրական իրավունքի միջոցով քաղաքացին մասնակցում է պետության քաղաքական կյանքին և երկրի կառավարմանը: Ընտրական իրավունքի մեջ առանձնացվում են ընտրելու և ընտրվելու իրավունքները կամ ակտիվ և պասիվ ընտրական իրավունքները:

ՀՀ Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն միայն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, բացի ՀՀ քաղաքացիներից, կարող են մասնակցել նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձինք, ովքեր համապատասխան համայնքի բնակչության ռեզիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն:

Սակայն կան անձինք, ովքեր զրկված են ակտիվ և պասիվ ընտրական իրավունքներից: ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

ՀՀ ընտրական օրենսգրքը ակտիվ ընտրական իրավունքի իրականացման որոշակի սահմանափակումներ է նախատեսում պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողների, ձերբակալված կամ կալանավորված անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիների նկատմամբ՝ կապված տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման հետ: Մասնավորապես՝ նշյալ քաղաքացիները տեղական ընտրություններին չեն կարող մասնակցել: Այս սահմանափակումը չի գործում համապետական ընտրությունների անցկացման ժամանակ, և նշված քաղաքացիները համապետական ընտրություններին մասնակցում են ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու միջոցով:

Հետաքրքիր առանձնահատկություններ ունի արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի իրականացումը: Ընտրական օրենսգիրքը համապետական ընտրությունների ժամանակ էլեկտրոնային եղանակով քվեարկելու հնարավորություն է նախատեսել միայն առանձին կատեգորիայի անձանց համար: Դրանք են՝

- ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները,
- Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Այսինքն, արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող համապետական ընտրությունների ժամանակ չի կարող մասնակցել էլեկտրոնային եղանակով արտերկրում քվեարկությանը:



Խնդիր 1.

Նարեկը կալանավորվել է սպանություն կատարելու մեղադրանքով: Նա հաշվառված է և փաստացի բնակվում է Աջափնյակ համայնքում: Այս համայնքում նախապատրաստվում են համայնքի ղեկավարի ընտրություններ: Ընտրողների ցուցակում Նարեկն ընդգրկված չէ:

Իրավաչափ են արդյոք ընտրողների ցուցակները կազմող իրավասու անձանց գործողությունները քաղաքացի Նարեկին ցուցակներում չընդգրկելու վերաբերյալ:

Խնդիր 2.

Նահապետը տառապում է ալկոհոլիզմով: Ալկոհոլի նկատմամբ նրա հակվածության պատճառով շրջապատի մարդիկ խուսափում են նրա հետ շփումներ հաստատելուց, քանի որ ճանաչողները գիտեն ինչպիսի ագրեսիվ վերաբերմունք նա ունի շրջապատի նկատմամբ, երբ գտնվում է հարբած վիճակում: Նախագահական ընտրությունների ժամանակ քաղաքացի Նահապետը պարզում է, որ ինքն ընդգրկված չէ ընտրողների ցուցակում: Այն հարցին, թե ինչու ինքն ընդգրկված չէ ցուցակում, իրավասուները պատասխանում են, որ պատճառը ալկոհոլով նրա տարվածությունն է, քանի որ հնարավոր չէ կանխատեսել նրա վարքագիծը քվեարկության ժամանակ տեղամասային կենտրոնում:

Իրավաչափ են արդյոք վերջինների գործողությունները:

Խնդիր 3.

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետն ավարտելուց հետո քաղաքացի Շաքեն 3 տարի շարունակ իր երկրում չի կարողանում գտնել իր մասնագիտությանը համապատասխան աշխատանք: Երկար փնտրտուքներից հետո նա մեկնում է արտերկիր աշխատանք որոնելու: Նրա որոնումները հաջողությամբ են ավարտվում, և նա գտնում է բարձր վարձատրվող աշխատանք: Եվ քանի որ արտերկրում աշխատելու տարիներին էլ նա ամենայն ուշադրությամբ հետևում էր հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, հերթական նախագահական ընտրությունների մասնակցելու և իր կամքն արտահայտելու մեծ ցանկություն է ունենում:

Արդյո՞ք արտերկրում նա կարող է իրականացնել իր ակտիվ ընտրական իրավունքը:

9.4.1. Ընտրական ցուցակները

Որպեսզի ընտրական իրավունք ունեցող անձը կարողանա իրականացնել իր ակտիվ ընտրական իրավունքը, նա, նախ և առաջ, պետք է ընդգրկված լինի ընտրական ցուցակներում: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է ըստ մարզերի և համայնքների կազմել և վարել Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քվեարկելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձինք Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում ընտրողների ցուցակում ընդգրկված լինելու նրանց իրավունքը: Ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զինվորական մասերի հրամանատարները:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ համայնքի ընտրողների ցուցակում չեն կարող գտնվել այն քաղաքացիները, որոնք այդ համայնքում հաշվառվել են ընտրություններ նշանակվելուց հետո: Համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ լիազոր մարմինն կարող են ներկայացնել դիմում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակներից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն:

Համապետական ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավարը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմին է ներկայացնում ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակը՝ դրանում նշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և հաշվառման վայրի հասցեն:

Համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինձառայողները, ինչպես նաև զորամասերի տեղակայման տարածքում հաշվառված պայմանագրային զինձառայողները և նույն տարածքում հաշվառված ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, վարժական հավաքներ անցնող ընտրողներն ընդգրկվում են զորամասի ընտրողների ցուցակում:

Ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 40 օր առաջ փակցվում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի վայրում: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ ընտրողների ցուցակում տեղ գտած անձշտությունները /այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող/ վերացնելու մասին դիմում ներկայացնելու: ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման մարմին:

Եթե դիմողին չի բավարարում լիազոր մարմնի կատարած փոփոխությունները, ապա ընտրողների ցուցակներում անձշտությունների վերացման և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով: Դատարանը ցուցակներում անձշտությունները վերացնելու վերաբերյալ վճիռը կայացնում է դիմումը ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում:

**Խնդիր 1.**

Առաջիկայում խորհրդարանական ընտրություններն են, և Նարեկը ցանկանում է մասնակցել ընտրություններին: Նա իր անձնագրով շտապում է համապատասխան ոստիկանական բաժանմունք՝ ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար:

Որո՞նք են իրավասու մարմինների հանդիպակաց համապատասխան գործողությունները:

Խնդիր 2.

Ամուսնության կապակցությամբ Շաքեն Ավան համայնքից տեղափոխվում է Քանաքեռ-Զեյթուն համայնք ամուսնու և նրա ծնողների հետ բնակվելու: Նախագահական ընտրությունների նախօրյակին, երբ արդեն տեղամասային կենտրոններում փակցվում են ընտրողների ցուցակները, նա պարզում է, որ ինքն ընդգրկված չէ այդ ցուցակներում:

Ի՞նչ կարգով նա կարող է մասնակցել նախագահական ընտրություններին:

Խնդիր 3.

Միերի հարևանը գտնվում է ժամկետային ծառայության մեջ: Առաջիկայում Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններն են:

Այդ ընտրություններին ի՞նչ կարգով նա պետք է մասնակցի:

Խնդիր 4.

Նարեն ստացիոնար բուժում է անցնում «Ա» բժշկական կենտրոնում: Նա ցանկանում է մասնակցել առաջիկա նախագահական ընտրություններին, սակայն անձամբ զրկված է տեղամասային կենտրոն ներկայանալու և քվեարկություն կատարելու հնարավորությունից:

Կարո՞ղ է նա բժշկական հաստատությունում մասնակցել ընտրությանը:

Խնդիր 5.

Ծանոթանալով տեղամասային կենտրոնում փակցված ընտրողների ցուցակին՝ Շաքեն պարզում է, որ իր մայրն ընդգրկված չէ ցուցակում: Դիմելով իրավասուներին՝ նա խնդրում է իր մորը ևս ներառել ընտրողների ցուցակում: Իրավասու մարմինը մերժում է նրան՝ պատճառաբանելով, որ ընտրական ցուցակների հետ կապված անճշտությունների վերացման կապակցությամբ յուրաքանչյուր ոք պետք է անձամբ դիմում ներկայացնի իր անձի հետ կապված անճշտությունները վերացնելու համար:

Իրավաչա՞փ են արդյոք իրավասու մարմինների գործողությունները:

Խնդիր 6.

Նախագահական ընտրությունների օր է նշանակվել 2014 թվականի փետրվարի 12-ը: Նարեկն ընտրողների ցուցակում չի գտնում անունը: Նա լիազոր մարմիններին դիմում է ներկայացրել քվեարկության նախորդող օրը:

Ի՞նչ ժամկետում նա կարող է դիմել լիազոր մարմին և/կամ դատարան, որպեսզի կատարված ուղղումներից հետո հնարավորություն ստանա մասնակցելու ընտրություններին:

Խնդիր 7.

Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Շաքեն պատահաբար պարզում է, որ իր տատը

ընդգրկված չէ ընտրողների ցուցակում: Հանձնաժողովի նախագահին տեղյակ պահելուց հետո նա ընտրողների ցուցակում ընդգրկում է իր տատիկին:
Գնահատե՛ք Շաքեի գործողությունները:

9.4.2. Քվեարկությունը

Քվեարկությունն անցկացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն: Քվեարկությունն անցկացվում է այդ նպատակով կահավորված սենյակում:

Քվեարկության համար հատկացվում են խցիկներ: Քվեարկության խցիկը պատրաստվում է այնպես, որ ընտրողը կարողանա տեղամասային կենտրոնում գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը, ունենա բավարար լուսավորվածություն, տեղադրված լինի գրիչ: Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ, լիազորված անձի միջոցով քվեարկությունն արգելվում է:

Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:

Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:



Խնդիր 1.

Քվեարկության օրը տեղամասային կենտրոն է գալիս Նարեն՝ իր հետ բերելով ծնողների անձնագրերը և լիազորագրեր նրանց փոխարեն քվեարկելու համար՝ պատճառաբանելով, որ վերջիններս հիվանդ են և չեն կարող ներկայանալ տեղամասային կենտրոն:

Գնահատե՛ք Նարեի գործողությունները:

Խնդիր 2.

Քվեարկության օրը, ընտրողների ցուցակում գրանցվելու ժամանակ, Շաքեն հանկարծակի պարզում է, որ լրացել է իր անձնագրի վավերականության ժամկետը:

Արդյո՞ք նա իրավունք ունի մասնակցելու քվեարկությանը:

Խնդիր 3.

Նահապետը տեսողության հետ կապված որոշակի խնդիրներ ունի: Քվեաթերթիկում նշում կատարելուց հետո արդեն նրան թվում է, թե ինքը սխալ է լրացրել քվեաթերթիկը: Նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով նոր քվեաթերթիկ:

Կարո՞ղ է նա նս մեկ անգամ քվեարկություն կատարել:

Խնդիր 4.

Անահիտը ֆիզիկական խնդիրների պատճառով չի կարող անձամբ քվեարկել: Օգնության համար նա ցանկանում է քվեախցիկ հրավիրել իր որդուն, ով միաժամանակ տեղամասային

ընտրական հանձնաժողովի անդամ է:

Արդյո՞ք քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող անձը կարող է դիմել այլ անձի օգնությանը:

9.5. Ընտրվելու իրավունք

Ընտրվելու կամ պասիվ ընտրական իրավունքը նշանակում է ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը կամ առաջադրվելու համաձայնություն տալու իրավունքը: Որպեսզի անձը կարողանա իրականացնել իր պասիվ ընտրական իրավունքը, նա պետք է բավարարի օրենսդրությամբ նախատեսված որոշակի պահանջների: Այդ պահանջները վերաբերում են, մասնավորապես՝ քաղաքացիությանը, նստակեցությանը, տարիքին, ընտրական գրավին:

Այսպես, ՀՀ Նախագահի կարող է ընտրվել 35 տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Բացի այդ, ՀՀ Նախագահի թեկնածու գրանցվելու համար պահանջվում է ընտրական գրավ՝ նվազագույն աշխատավարձի 8 հազարապատիկի չափով /որպես հաշվարկային հիմք ընդունվում է 1000 դրամ/:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող անձը: Ինչ վերաբերում է ընտրական գրավին, ապա համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու գրանցվելու համար պահանջվում է նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկի չափով ընտրագրավ, իսկ մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու գրանցվելու համար պահանջվում է նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով ընտրագրավ:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուների պասիվ ընտրական իրավունքի իրականացման պայմաններին, ապա համայնքի ղեկավար կարող են ընտրվել 25 տարին լրացած, ընտրություն անցկացնող համայնքի բնակչության ռեզիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վերջին 6 ամիսը հաշվառված, ընտրելու իրավունք ունեցող անձինք: Համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել 21 տարին լրացած, ընտրություն անցկացնող համայնքի բնակչության ռեզիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին 6 ամիսը հաշվառված, ընտրելու իրավունք ունեցող անձինք:



Խնդիր 1.

Նարեկը ցանկանում է ինքնաառաջադրման միջոցով իր թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրությունների ժամանակ: Նա Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում համապատասխան դիմում՝ կից փաստաթղթերով, իրեն՝ որպես Նախագահի թեկնածու գրանցելու համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է Նախագահի թեկնածուի գրանցումը՝ պատճառաբանելով, որ դիմումին կցվել է 6.000.000 դրամ ընտրական գրավի մուծված լինելը հավաստող անդորրագիր: *Իրավաչափ են արդյոք կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողությունները:*

Խնդիր 2.

Կուսակցությունը որոշում է կայացրել Նարեկին մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրելու մասին: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը թեկնածուի գրանցումը մերժում է՝ պատճառաբանելով, որ կուսակցության որոշմանը կից ներկայացված փաստաթղթերում բացակայում է տեղեկանք առ այն, որ թեկնածուն չունի այլ պետության քաղաքացիություն:

Իրավաչափ են արդյոք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները:

Խնդիր 3.

Նահապետը ցանկանում է ինքնաառաջադրման միջոցով իր թեկնածությունն առաջադրել համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը թեկնածուի գրանցումը մերժում է այն պատճառաբանությամբ, որ Նահապետը կեղծել է վերջին 5 տարվա ընթացքում համապատասխան համայնքում մշտական բնակությունը հավաստող փաստաթուղթը:

Գնահատե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները: